



Հայաստանի
Հանրապետության
Կենտրոնական բանկ

Տարեկան
հաշվետվություն
2023



ՈՒՂԵՐԶ

06

01 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 10

- Մեր մասին 11
- Խորհուրդ 14
- Ներքին աուդիտ 16

02 ՀՀ ԿԲ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՏՐԱՆՏՖՈՐՄԱՑԻԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 19

- Ֆինանսական համակարգ 20
- Ֆինանսական համակարգի վերահսկողություն 24
- Գների կայունության ապահովում/ Դրամավարկային քաղաքականություն 28
- Ֆինանսական կայունության ապահովում/ Մակրոարտոդեսցիալ քաղաքականություն 31
- Սպառողներին զորակցում 34

03 ՀՀ ԿԲ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԿԲ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 38

- Մարդիկ 39
- Տեխնոլոգիաներ 45
- Կառավարում 46





04 ՀՀ ԿԲ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ 49

05 ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ 52

- Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում 53
- Դրամագիտական արժեքներ 56
- Միջազգային պահուստներ 58
- Վիճակագրություն 59
- Փողերի լվացման եվ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպում և կարգավորում 61
- Այցելուների կենտրոն 62



06 ՀՀ ԿԲ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 64





2023

ԹՎԱԿԱՆԸ՝ ԱՄՓՈՓ

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ

12-ամսյա
զևաճ

-0.6%

Վերաֆինանսավորման
տոկոսադրույք

9.25%

Բնականոն
զևաճ

-0.4%

Ներդրված

FPAS MARK II

ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Շրջանառության մեջ գտնվող
թղթադրամների քանակը/ծավալը

880,794,747.14

Անկանխիկ գործարքների ծավալը

2,537,487,623.6

Անկանխիկ գործարքների քանակը

289,999,052.09

ՊԱՅՈՒՏՆԵՐ

3,608 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական համակարգի
ակտիվներ/ՅՆԱ

116.2%

Բանկային համակարգի ընդհանուր
կապիտալի համարժեքություն

9.9%

Բանկային համակարգի իրացվելիության
ծածկույթի գործակից

290.6%

2023 դեկտեմբերի դրությամբ

Կապիտալի
հակացիկլիկ բուժեր

1.5%

Վարկ/գրավ
հարաբերակցություն (LTV)

90%

դրամի դեպքում

70%

արտարժույթի դեպքում



ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Տարվա ընթացքում ստացված զանգերի և դիմումների քանակ՝ ըստ բնույթի



| | | |
|------------------|------|-------|
| Տեղեկատվական | 4678 | 78.5% |
| Բողոք | 1235 | 20.7% |
| ԿԲ-ին չվերաբերող | 43 | 0.7% |





| | | |
|----------------|-----|-------|
| Բողոք | 515 | 58.6% |
| Խնդրանք | 203 | 23.1% |
| Հարցում | 140 | 15.9% |
| Իրազեկում | 14 | 1.6% |
| Առաջարկություն | 7 | 0.8% |

ԱՆՁՆԱԿԱԶՄ

Անձնակազմի միջին թիվ

767



«Դիլիջանի ՈւՅԿ» աշխատակիցների թիվը

134

որից՝ Դիլիջանից և հարակից տարածքներից

44

«Դիլիջանի ՈւՅԿ»-ում աշխատանքային փորձառություն անցած արտասահմանյան բուհերի ուսանողներ

18



Հարգելի՛ ընթերցող



Ձեզ ենք ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունը, որտեղ ամփոփված են տարվա ընթացքում մեր հաղթահարած մարտահրավերները, ձեռքբերումները և այն փոփոխությունները, որոնք ձեռնարկել ենք ավելի լավ կենտրոնական բանկ ունենալու համար: Այս տարվա հաշվետվության մեջ փորձել ենք ամփոփել ռազմավարությամբ նախանշված անելիքները, որը մեր առաջին փորձն է:

Չնայած տարվա ընթացքում առաջացած խնդիրներին՝ կենտրոնական բանկը վստահորեն ապահովել է իր նպատակների իրականացումը:

2023 թվականի երկրորդ կեսից՝ իրականացված դրամավարկային քաղաքականության և արտաքին հատվածից փոխանցվող գնանկումային ազդեցության ներքո, գնաճը արագորեն նվազեց: Կենտրոնական բանկը, հաշվի առնելով արտաքին միջավայրի և պահանջարկի հնարավոր զարգացումները, որդեգրեց դրամավարկային քաղաքականության աստիճանական թուլացման քաղաքականություն: 2024 թվականը Հայաստանի տնտեսության համար նշանավորվեց ցածր գնաճով և բարձր տնտեսական աճով, ինչը զգալիորեն նպաստեց հասարակության բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Դրամավարկային քաղաքականության՝ կանխատեսման և վերլուծական լավագույն համակարգ ունենալու նպատակով

Մարտին Գալստյան

ՀՀ կենտրոնական բանկի
Նախագահ



տարվա ընթացքում շարունակել ենք մշակել կանխատեսումների և քաղաքականության վերլուծության 2-րդ սերնդի համակարգը (FPAS MARK II): Այս համակարգի միջոցով փորձելու ենք գնալ ավելի թափանցիկ, հստակ քայլերի հաջորդականությամբ ուղեգծած ճանապարհով, ներկայացնել սցենարային մտածողությունը, բացատրել մեր կայացրած որոշումների տրամաբանությունը: Սա հնարավորություն կտա մեզ ցանկացած պարագայում, անկախ զարգացումներից, լինելու պատրաստ և հետևողական՝ իրագործելու միջնաժամկետում գնաճի թիրախի և երկրորդ գների կայունության ապահովման նպատակը:

Ֆինանսական կայունության տեսանկյունից կարող ենք փաստել, որ բանկային համակարգը՝ ֆինանսական համակարգի խոշորագույն հատվածը, 2023 թվականը ամփոփել է կապիտալի և իրացվելիության բարձր պաշարներով՝ երաշխավորելով համակարգի դիմակայունությունը հնարավոր ցնցումների նկատմամբ: Առաջնորդվելով Նոր մոտեցումների ներդրմամբ՝ դեռևս տարեսկզբին մշակել ենք կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման ընդհանուր մեթոդաբանություն: Դա ուղղված է դինամիկ և ապագային միտված մակրոպրոդեցիալ քաղաքականության հիմքերի ամրապնդմանը, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացի թափանցիկության աստիճանի բարձրացմանը: Բացի այդ՝ կարևոր փոփոխություններ են իրականացվել նաև կարգավորման դաշտում և ռիսկերի վրա հիմնված վերահսկողության ներդրման գործընթացում:

Մեր ներքին կարողությունների զարգացման առումով, ձգտում ենք լինել ինքնակրթվող և առաջատար կառույց, պարտավորվել ենք ներդնել մեր լավագույն ջանքերը՝ ներկայիս արագ փոփոխվող աշխարհին համընթաց քայլերու համար: Այս մոտեցման համատեքստում մեկնարկել ենք ներքին վերափոխման ծրագիրը, որն անդրադառնում է մեր աշխատանքային միջավայրի բոլոր կողմերին՝ նպատակ ունենալով ձևավորելու Նոր որակի կազմակերպություն՝ ի բարօրություն մեր հասարակության: 2024 թվականի ընթացքում արդեն ներդրել ենք ներքին հաղորդակցման բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիրը, նախագծվել են կատարողականի կառավարման և կոլեգիալ որոշումների կայացման համակարգերը:

2023 թվականը Կենտրոնական բանկի համար հոբբեյանական էր, քանի որ Նշում էինք ազգային դրամի՝ մեր պետականության խորհրդանիշներից մեկի 30-ամյակը: Հետադարձ հայացք գցելով անցած ուղուն՝ չափազանց հպարտ ենք, որ Կենտրոնական բանկի աշխատակիցների երկարամյա աշխատանքը տալիս է իր արդյունքը, և այսօր Հայաստանի քաղաքացիներն ունեն ապահով, անվտանգ և հարմար վճարամիջոց՝ իրենց առօրյա գործարքների կատարման համար:

Մենք հավատարիմ ենք մնում տնտեսական կայունության ու բարեկեցության ապահովմանը նպաստելու մեր առաքելությանը և անելու ենք ամեն ինչ, որպեսզի օգտագործենք մեր երկրի և ամեն մի դրամի ներուժը:

Շնորհակալություն




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ԽՈՐՀՈՒՐԴ ՆԱԽԱԳԱՀ



| Ֆինանսական շուկաների դեպարտամենտ | Ռազմավարության և կառավարման դեպարտամենտ | Մակրոտնտեսական դեպարտամենտ | Ֆինանսական վերահսկողության և լիցենզավորման դեպարտամենտ | Ֆինանսական համակարգի կայունության և կարգավորման դեպարտամենտ |
|---|--|---|--|---|
| Ֆինանսական գործառնությունների վարչություն | ՀՀ ԿԲ քարտուղարություն | Դրամավարկային քաղաքականության վարչություն | Ֆինանսական վերահսկողության վարչություն | Ֆինանսական համակարգի կայունության վարչություն |
| Ռիսկերի կառավարման վարչություն | Հասարակայնության հետ կապերի ծառայություն | Վիճակագրության վարչություն | Լիցենզավորման և կորպորատիվ ֆինանսների վարչություն | Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն |
| Գործառնությունների կառավարման վարչություն | Ռազմավարական պլանավորման և վերլուծությունների բաժին | Տնտեսական հետազոտությունների վարչություն | Մակրոֆինանսական կազմակերպությունների և գործարար վարվելակերպի վերահսկողության վարչություն | Սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոն |
| Կանխիկ կառավարման վարչություն | Գործընթացների զարգացման և նախագծերի կառավարման վարչություն | | Ռիսկերի վերլուծության վարչություն | Ֆինանսական համակարգի զարգացման կենտրոն |
| Արժույթի թողարկման և դրամագիտության կենտրոն | Գնումների համակարգման ծառայություն | | Ֆինանսական կազմակերպությունների վերակառուցման ծառայություն | Հետազոտությունների բաժին |
| | | | Տեղեկատվության հավաքագրման և կարգավորման բաժին | |







Տարեկան հաշվետվություն 2023

01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

- Մեր մասին
- Խորհուրդ
- Ներքին աուդիտ

ՄԵՐ ՄԱՍԻՆ

Մենք ՀՀ կենտրոնական բանկն ենք և պատասխանատու ենք գների և ֆինանսական համակարգի կայունության համար: Մեր սահմանած չափանիշներով է կարգավորվում և վերահսկվում ֆինանսական համակարգը: Մենք պաշտպանում ենք սպառողներին և պատասխանատու ենք Հայաստանի վճարահաշվարկային համակարգի, ֆինանսական և արտաքին վիճակագրության և արժույթի թողարկման համար: Մեր առջև դրված հիմնական խնդիրների իրագործումն ուղղված է համազգային բարեկեցության բարելավմանը:

Արագ փոփոխվող, մարտահրավերներով և անորոշություններով լի աշխարհում իրագործելու ենք մեր առաքելությունը: Մեր ամենօրյա գործունեության հիմքում բացառապես համազգային բարեկեցության ապահովումն է: Մեր նախանշած գործողությունների հետևողական կատարմամբ, որոշումների, հետազոտությունների, հաշվետվությունների և ասուլիսների միջոցով հաղորդակցման շնորհիվ արժանանում ենք հասարակության, գործընկերների վստահությանը:


Առաջատար լինելու մեր ձգտման հիմքում հետազոտական գերազանցությունն ու Նորարարական լուծումներն են:

Միայն արժեքների պահպանման և կիրառման շնորհիվ կարող ենք հասնել մեր տեսլականին և առաքելությանը:

Ձգտում ենք գերազանցության, գործում բարեվարքությամբ և ցուցաբերում հարգանք:

- Հիմնվում ենք առաջատար հետազոտությունների, վերլուծությունների, Նորարարությունների և համագործակցության վրա:
- Ստեղծում լայն հնարավորություններ ազատ մտածող, նախաձեռնող, պրպտող և թիմային աշխատակիցների համար:
- Մեր նպատակները, գործողությունները ներկայացնում ենք բաց և թափանցիկ:
- Առանց կարծրատիպերի հաղորդակցում ենք մեր գաղափարները և հաշվետու ենք դրանց համար:
- Հարգում և գնահատում ենք այլակարծությունը, գաղափարների բազմազանությունը և մարդկանց տարբերությունները:





Ռազմավարական առաջնահերթություններ





ՄԱՐԴԻԿ



ՀՀ ԿԲ ԽՈՐՀՈՒՐԴ

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինը Կենտրոնական բանկի խորհուրդն է և կազմված է Կենտրոնական բանկի նախագահից, երկու տեղակալներից, հինգ անդամներից:

ԿԲ խորհրդի անդամները, ներառյալ՝ նախագահն ու տեղակալները, ընտրվում են ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով: ՀՀ ԿԲ խորհրդի անդամների փոփոխությունը տեղի է ունենում փոխակերպման (ռոտացիոն) սկզբունքով: Խորհրդի յուրաքանչյուր անդամի պաշտոնավարման վերջնաժամկետին հաջորդում է նոր անդամի ընտրությունը, որն էլ, իր հերթին, ապահովում է ՀՀ ԿԲ անկախությունը: ՀՀ ԿԲ նախագահը համարվում է Կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձ և համակարգում, ապահովում է Կենտրոնական բանկի և Խորհրդի բնականոն աշխատանքը: ՀՀ ԿԲ նախագահը և նրա երկու տեղակալները իրականացնում են գործադիր գործառնություններ և համակարգում են բանկի բնականոն աշխատանքը:

Օրենքով նախատեսված չափանիշների համաձայն՝ ՀՀ ԿԲ խորհուրդը ձևավորվում է այնպես, որ Խորհրդի անդամներն ունենան բանկային, աուդիտի, ՏՏ, ֆինանսական հաշվետվությունների և այլ ոլորտների վերաբերյալ գիտելիքներ, իսկ Խորհրդի անդամների առնվազն կեսն ունենա մակրոտնտեսագիտության բնագավառում մասնագիտական աշխատանքային փորձ:

ԿԲ խորհրդի անդամները ներկայացնում են բանկի շահերն ու տեսակետները Կառավարության կողմից ստեղծված և գործող նախարարական կոմիտեներում, ինչպես նաև այլ միջգերատեսչական հանձնաժողովներում: Նրանք ԿԲ ռազմավարության, Խորհրդի կողմից կայացված որոշումների, վարվող քաղաքականության հաղորդակցման առաջնային օղակն են: Նաև ապահովում են ակտիվ ներգրավվածություն պետական մարմինների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև տարածաշրջանային այլ կազմավորումների հետ համագործակցություններում:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդն իր որոշումները կայացնում է հետևյալ ուղղություններով՝

- ԿԲ-ի կողմից վարվող քաղաքականություններ (դրամավարկային, մակրոպրոդեցիալ):
- Ֆինանսական համակարգի կարգավորմանն ուղղված որոշումներ (պարտադիր պահուստավորման և կարգավորող նորմատիվների սահմանում, բանկային գործունեության և այլ լիցենզիաների տրամադրում, նորմատիվ իրավական ակտերի, անհրաժեշտության դեպքում՝ պատժամիջոցների կիրառում):
- Հսկողությանն ուղղված որոշումներ (ռիսկերի կառավարում, բյուջեի, ֆինանսական հաշվետվությունների հաստատում, ներքին աուդիտ, ներքին հսկողություն):



**Մարտին
Գալստյան**

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ



**Հովհաննես
Խաչատրյան**

Նախագահի
տեղակալ



**Արմեն
Նուրբեկյան**

Նախագահի
տեղակալ



**Հասմիկ
Ղահրամանյան**

Խորհրդի անդամ



**Դավիթ
Նահապետյան**

Խորհրդի անդամ



**Արտակ
Մանուկյան**

Խորհրդի անդամ



**Լևոն
Սահակյան**

Խորհրդի անդամ



**Նարեկ
Ղազարյան**

Խորհրդի անդամ



ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նորմատիվ
որոշումներ

43

Անհատական
որոշումներ

266

Լոկալ
որոշում

11

Նախագահի
որոշումներ

666



ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Կենտրոնական բանկի (Բանկի) ներքին աուդիտը (ՆԱ) հաշվետու է խորհրդին:

Հսկողական գործառնությունների և աուդիտի ոլորտում իրավասությունների իրականացման գործում Բանկի խորհրդին օժանդակում է Կենտրոնական բանկում գործող Աուդիտի կոմիտեն: Խորհրդի երեք անկախ (ոչ գործադիր) անդամներից

բաղկացած Աուդիտի կոմիտեի հիմնական նպատակը Բանկի կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության գործընթացների նկատմամբ համակարգված հսկողության իրականացումն է՝ հանդես գալով որպես Բանկի գործադիր ղեկավարության համար հավելյալ հակակշիռ:

ՆԻՍՏԵՐԻ ԵՎ ՎԵՐՅԱՆՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022



Աուդիտի կոմիտեի անցկացրած նիստեր

10

Աուդիտի հաշվետվություններով վերհանված խնդիրներ և հաղորդագրություններ

⚠️ 51

դիտարկում

💬 11

հաղորդագրություն

2023



Աուդիտի կոմիտեի անցկացրած նիստեր

11

Աուդիտի հաշվետվություններով վերհանված խնդիրներ

⚠️ 31

դիտարկում



Հաշվետու տարվա ընթացքում ԱՄՀ-ի կողմից Կենտրոնական բանկում պաշտպանական միջոցառումների գնահատման շրջանակում (IMF Safe-guard Assessment) գնահատվել են Կենտրոնական բանկի կառավարումը և ներքին հսկողությունը՝ ըստ 6 հիմնական ուղղությունների՝ կառավարման կառուցակարգեր, արտաքին աուդիտ, իրավական կառուցվածք և անկախություն, ֆինանսական հաշվետվողականություն, ներքին աուդիտ և ներքին հսկողություն: Ըստ գնահատման արդյունքների՝ Կենտրոնական բանկի ներքին և արտաքին աուդիտի կարգավորումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների պրակտիկան շարունակում են համահունչ լինել միջազգային չափանիշներին:

Կենտրոնական բանկի ներքին աուդիտը տարվա ընթացքում նախաձեռնել է մեթոդաբանության թարմացումներ՝ նպատակ ունենալով դրանք համապատասխանեցնելու ներքին աուդիտորների ինստիտուտի հրապարակած ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային չափորոշիչներին և էթիկայի կանոնների՝ 2025-ից ուժի մեջ մտնող Նոր տարբերակին:

Աուդիտի թիմը, Բանկի ղեկավարության հետ համատեղ, յուրաքանչյուր տարի իրականացնում է բանկի գործընթացներին բնորոշ ռիսկերի գնահատում ըստ ռազմավարական, հեղինակության, ֆինանսական տեղեկատվական


անվտանգության գործընթացի, տեղեկատվական տեխնոլոգիաների և մարդկային ռեսուրսների կառավարման ռիսկի: Գնահատման արդյունքում Կենտրոնական բանկի ներքին աուդիտը յուրաքանչյուր տարի մշակում և Բանկի խորհրդի հաստատմանն է ներկայացնում ռիսկերի վրա հիմնված աուդիտի տարեկան պլանը:

Հաշվի առնելով իրականացված տարեկան գնահատումը, ինչպես նաև Կենտրոնական բանկի ռազմավարական նպատակների իրագործումը՝ ներքին աուդիտի թիմի կողմից 2023 թվականի ընթացքում դիտարկվել են Բանկի գործունեության այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝ միջազգային պահուստների կառավարում, վճարահաշվարկային համակարգերի շահագործում, գործունեության անընդհատության կառավարում, սպառողների և ներդրողների շահերի պաշտպանություն, տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերումներ և ներդրումներ և այլն:

Ռիսկերի վաղ բացահայտման և տեղեկատվության ժամանակին հաղորդակցման տեսանկյունից ներքին աուդիտի թիմը կարևորել է նախաձեռնողականությունը, և այդ համատեքստում տարվա ընթացքում իրականացվել են մշտադիտարկումներ երեք տարբեր ուղղություններով՝ Կենտրոնական բանկի նախագծերի կառավարման, գնումների կազմակերպման և բյուջետավորման գործընթացներ:



ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԱԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱ ԹԻՄՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՌԻԻՏՈՐՆԵՐՆ ՈՒՆԵՆ ՏԱՐԲԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ



Ներքին աուդիտի ոլորտում կուտակված կարողությունները, փորձը և գիտելիքները գործառնական գերազանցության շարժիչ ուժն են, և դրա լավագույն ապացույցը գործընկեր կենտրոնական բանկերում ներքին աուդիտի գործառնայթի որակի արտաքին գնահատումներին մասնակցությունն է: Մասնավորապես՝ հաշվետու տարվա ընթացքում կենտրոնական բանկի գլխավոր աուդիտորը մասնակցել է մի շարք կենտրոնական բանկերի ներքին աուդիտի որակի արտաքին գնահատմանը:

Գերազանցության և շարունակական զարգացման մեր հանձնառությունը դրսևորվում է յուրաքանչյուր տարի կարողությունների զարգացման հետևողականությամբ: Մեր համոզմամբ՝ կարողությունների զարգացումը հիմնաքարային գործոն է անհրաժեշտ

հմտություններով, գիտելիքով և գործիքակազմով ապահովման տեսանկյունից, ինչն էլ, իր հերթին, առանցքային է արագ փոփոխությունների ժամանակաշրջանին արձագանքելու և կազմակերպությանը շարունակական արժեք ավելացնելու առումով:

Այս նպատակով գալիք տարվա ընթացքում կենտրոնական բանկի ներքին աուդիտի վարչությունը ուշադրության կենտրոնում է պահելու ոչ միայն ռիսկային գործընթացները, այլև կենտրոնական բանկի ռազմավարության և օրենքով վերապահված գործառնայթերին համահունչ կարողությունների զարգացումը, ինչպես նաև իր ջանքերն ուղղելու է կենտրոնական բանկերի ներքին աուդիտորների հետ միջազգային համագործակցության խորացմանը և զարգացմանը:



02

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ ԱՐԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

- Ֆինանսական համակարգ
- Գների կայունության ապահովում/Դրամավարկային քաղաքականություն
- Ֆինանսական կայունության ապահովում/Մակրոպրոդեցնցիալ քաղաքականություն
- Սպառողների զորակցում

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մրցունակ ֆինանսական համակարգի ձևավորման, կայունության ապահովման և զարգացման համատեքստում կարևորելով ֆինանսական համակարգի կարգավորման ոլորտում ստանդարտներ սահմանող կառուցակարգերի ձևավորումը՝ 2023 թվականին Կենտրոնական բանկն իրականացրել է միջազգային լավագույն փորձի ու չափորոշիչների ներդրման, արդիականացման և, վերջինիս առանձնահատկություններով պայմանավորված, կարգավորումների մշակման աշխատանքներ:

Մասնավորապես՝ Կենտրոնական բանկը վերանայել է բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի չափը, կապիտալի կազմն ու կառուցվածքը: Փոփոխությունն ուժի մեջ է մտել 2023 թվականի հունիսի 1-ից: Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկման մեթոդաբանությունը համապատասխանեցվել է միջազգային չափորոշիչներում կատարված փոփոխություններին, ընդ որում, որոշակի դեպքերում պահպանվել են Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի յուրահատկություններով պայմանավորված առանձնահատուկ կարգավորումները: Բարելավվել է նաև կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացը (ICAAP) և համապատասխանեցվել միջազգային լավագույն ստանդարտներին: Բացի այդ՝ համակարգի համար մրցունակ

կարգավորման դաշտ ապահովելու նպատակով վերանայվել են նաև վարկային ռիսկի հաշվարկում Կառավարության նկատմամբ սահմանված ռիսկի կշիռները: Իրականացվել են բանկերի ռիսկերի կառավարման համակարգի բարելավմանն ուղղված ընթացիկ միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են բանկի կողմից մշակվող վերականգնման ծրագրերի բարելավմանը և միջազգային լավագույն ստանդարտներին համապատասխանեցմանը:

Բացի այդ՝ Կենտրոնական բանկը նախաձեռնել է փոփոխություններ «Առարկայագուրկ մետաղական հաշիվների բացման և վարման կարգում» սպառողներին հասանելի դարձնելու համար միջազգային պրակտիկայում լայն կիրառություն ունեցող ֆինանսական գործիքները: Կատարված փոփոխությունների արդյունքում բանկերը, ի լրումն ոսկով հաշիվների, կկարողանան բացել և վարել առարկայագուրկ մետաղական հաշիվներ նաև արծաթով, պլատինով և պալադիումով, ինչը կավելացնի հասարակությանը հասանելի այլընտրանքային խնայողական գործիքները: Ակնկալվում է, որ կատարված փոփոխությունները կնպաստեն ֆինանսական ծառայությունների հասանելիության ավելացմանը և ֆինանսական ծառայություններից օգտվելու հանրության հնարավորությունների ընդլայնմանը:



ՌԱ. տեխնոլոգիապես զարգացած կարգավորման (RegTech) և վերահսկողության (SupTech) համակարգեր

Կենտրոնական բանկը կարգավորման նոր մոտեցումներով իրականացնում է նաև ֆինանսական հաստատություններից տվյալների հավաքագրման և հաշվետվողական համակարգերի բեռի թեթևացման, օպտիմալացման աշխատանքային գործընթացներ՝ կարևորելով միջազգային փորձում առկա արագ զարգացող տեխնոլոգիապես զարգացած կարգավորման (RegTech) և վերահսկողության (SupTech) համակարգերի ներդրման ուղղությամբ աշխատանքները: Հաշվի առնելով բանկային ոլորտի միջազգային միտումները՝ նաև որոշում է կայացվել վերանայելու տվյալների հավաքագրման գործող մոտեցումները՝ բարելավելու համար բանկերից հավաքագրվող տվյալների համակարգը:

Այս փոփոխության նպատակն է մշակված և ամփոփված տվյալների հավաքագրման համակարգից աստիճանաբար անցում կատարել առաջնային (չմշակված) տվյալների ստացման համակարգի և ներդնել տվյալների հետագա մշակման գործընթացներ՝ ըստ անհրաժեշտության:

Տվյալների հավաքագրման նոր մոտեցումը կապահովի տվյալների վերլուծության համար առավել ճկուն համակարգ՝ ազատելով բանկերին մի շարք ձևաչափային հաշվետվությունների ներկայացման բեռից: Մինևույն ժամանակ, հավաքագրված տվյալների հիման վրա վիճակագրության կազմման և հրապարակման գործընթացը կիրականացվի ՀՀ ԿԲ վիճակագրության վարման սկզբունքների համապատասխան:

Ի լրումն վերոնշյալի՝ Կենտրոնական բանկն ապահովում է միջազգային ստանդարտների ներդրման, վերանայման հետ կապված անհրաժեշտ փորձի փոխանակում՝ անդամակցելով միջազգային ստանդարտներ սահմանող կառույցներին (FSB, BIS, BSCEE, IOSCO և այլն): 2024 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել Բազել 3-ով սահմանված մոտեցումների ներդրման աշխատանքները, որը ներառում է նաև բանկային գրքում տոկոսադրույքի ռիսկի գնահատման մեթոդաբանության և, բանկի ռիսկայնությունից կախված, հավելյալ կապիտալի պահանջի սահմանում (Pillar 2):

Ներդրումային ֆոնդերի կառավարման ոլորտում մրցունակ կարգավորումն ապահովելու նպատակով փոփոխություններ են կատարվել ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 27.11.2012 թ. թիվ 332-Ն որոշման մեջ. ներդրումային ընկերությունների թույլատրվել է կառավարել ոչ հրապարակային ներդրումային ֆոնդեր: Արդյունքում ապահովվել է պրոֆեսիոնալ մասնակիցների մուտքը ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի կառավարման ոլորտ:

Տարբեր տեսակի ներդրումային ֆոնդերի համար հավասար կարգավորման դաշտ ապահովելու և գրանցման եղանակից բխող (առցանց և տեղում) կարգավորման անհամաչափությունը վերացնելու նպատակով փոփոխություններ են կատարվել ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 08.11.2016 թ. թիվ 194-Ն, 16.10.2012 թ. թիվ 272-Ն, 16.02.2016 թ. թիվ 19-Ն որոշումներում՝ սահմանելով ֆոնդերի գրանցման միասնական ընթացակարգ:

Մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում և հարակից այլ օրենքներում փոփոխությունների և լրացումների փաթեթ, որի նպատակն է ներդրումային ֆոնդերի



ՀՀ նախագահ ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՅԱՆ.

«Կենտրոնական բանկի աշխատանքի արդյունքում է, որ մենք այսօր ունենք ֆինանսական կայուն վիճակ: Գնահատելի է նաև այն, որ վերջին շրջանի դժվարին պայմաններում Կենտրոնական բանկն այնպիսի միջավայր ապահովեց, որ ֆինանսաբանկային համակարգում ցնցումներ չեղան: Կենտրոնական բանկի անկախությունն այն գրավականն է, որով վերջինս կարողանում է հաջողությամբ իրականացնել իր գործառնությունները»:

ոլորտում ձևավորել արդար և հավասար կարգավորման դաշտ, հստակեցնել ոչ հրապարակային ֆոնդերի ստեղծման, հետագա գործունեության և լուծարման ընթացակարգերը, միջազգային լավագույն փորձին համապատասխան սահմանել ոչ հրապարակային ֆոնդերի կառավարիչների ստեղծման և գործունեության պայմանները՝ միևնույն ժամանակ վերահսկող մարմին հնարավորություն տալով իր գործիքակազմի կիրառմամբ ոչ հրապարակային ֆոնդերի և դրանց կառավարիչների նկատմամբ իրականացնելու արդյունավետ վերահսկողություն:

Արդյունավետ և ժամանակակից, միջազգային ֆինանսական համայնքի զարգացմանը համաքայլ լինելու համար ԿԲ-ն ակտիվորեն շարունակել է միջազգային համագործակցությունը կապիտալի շուկայի և կենսաթոշակային ֆոնդերի ոլորտում ստանդարտներ սահմանող միջազգային կառույցներում՝ IOSCO & IOPS կազմակերպություններին անդամակցության շրջանակներում:

ՌԱ. վճարահաշվարկային համակարգ, որը կապահովի միջազգային չափորոշիչներին համապատասխան ճկուն ծառայությունների շրջանակ

Կենտրոնական բանկի գործունեության նպատակներից է գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումն ու զարգացումը: Վճարահաշվարկային համակարգերի միջոցով են սպասարկվում ՀՀ քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների վճարումները, դրամական փոխանցումները, պետական վճարումները և մի շարք այլ գործարքներ, ուստի միջազգային չափորոշիչներին դրանց համապատասխանությունը մեծապես կարևորվում է Կենտրոնական բանկի կողմից:

2023 թվականի ընթացքում արդիականացվել է ֆինանսական կազմակերպությունների կողմից շահագործվող ինքնասպասարկման սարքերի կարգավորումը՝ կանոնների վրա հիմնված կարգավորումից անցում կատարելով սկզբունքների վրա հիմնված կարգավորման: Մասնավորապես՝ նախկինում հստակ ձևակերպված տեխնիկական, անվտանգության և այլ պահանջների փոխարեն ավտոմատ սարքերի համար սահմանվել են անվտանգության և հուսալիության ապահովման սկզբունքները՝ ելնելով այդ սարքերի միջոցով կատարվող հիմնական գործառնությունների տեսակներից (վճարում, փոխանցում, արտարժույթի փոխանակում, հաշվի համալրում կամ հաշվից կանխիկացում): Ֆինանսական կազմակերպություններն այսուհետ կարող են ինքնասպասարկման սարքերի միջոցով մատուցել իրենց լիցենզիայով թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները՝ պահպանելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված սկզբունքները:

Վերանայված կարգավորումը թույլ է տալիս.

- 1. վճարահաշվարկային կազմակերպություններին՝ ինքնասպասարկման սարքերի միջոցով մատուցել ծառայությունների ավելի լայն

տեսականի (օրինակ՝ բանկային հաշվից կանխիկացման իրականացում բանկերի հետ համագործակցության միջոցով),

- 2. բանկերին՝ տեղադրել բազմաֆունկցիոնալ ինքնասպասարկման սարքեր բանկի գլխամասի և մասնաճյուղերի տարածքից դուրս գտնվող այլ վայրերում ևս,
- 3. վարկային կազմակերպություններին և արտարժույթի

փոխանակում իրականացնող կազմակերպություններին՝ ծառայությունները մատուցել նաև ինքնասպասարկման սարքերի միջոցով:

Արդյունքում՝ ընդլայնվել է ինքնասպասարկման սարքերի միջոցով 24/7 ռեժիմով մատուցվող ծառայությունների շրջանակը, և դրանց միջոցով մատուցվող ծառայությունները հաճախորդների համար դարձել են ավելի հասանելի ու հարմարավետ:

ՀՀ վճարային համակարգի շարունակական զարգացումը Կենտրոնական բանկի ռազմավարական առաջնահերթություններից է: Այս առաջնահերթության շրջանակում Կենտրոնական բանկը նախաձեռնել է մի շարք ծրագրեր, որոնց իրականացմամբ կվերագինվեն վճարային ենթակառուցվածքները՝ ապահովելով վճարային ոլորտում բարձր հասանելիություն, փոխգործելիություն, մրցակցություն, հարմարավետություն, ծառայությունների բազմազանություն: Միջազգային չափորոշիչների ներդրմամբ կբարելավվի նաև միջազգային վճարումների հարմարավետությունը:

ՎՃԱՐԱՅԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ-ում POS տերմինալների քանակ

80,035

հատ

ՀՀ բանկերի թողարկած քարտերով գործարքների ընդհանուր գումարը ՀՀ-ում

2,537,487,623.6

հազ.դրամ

ՀՀ բանկերի թողարկած քարտերով գործարքների քանակը ՀՀ-ում

289,999,052.0

հազ.դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական բանկի վերահսկողության նպատակն է հավաստիանալ, որ ֆինանսական համակարգում, կազմակերպություններում և ենթակառուցվածքներում էական ռիսկերը պատշաճ կառավարվում են, իսկ խնդիրների և ճգնաժամերի դեպքում հետևանքները հասցված են նվազագույնի, և գործընթացները կազմակերպվում են առավելագույնս սահուն և առանց ցնցումների:

Նշվածը ենթադրում է ֆինանսական կազմակերպություններում, ստանձնած ռիսկերին համապատասխան, կապիտալի, իրացվելիության, բիզնես մոդելի, կորպորատիվ կառավարման որակի և ներքին հսկողության համակարգի ապահովում, ինչը վերջնահաշվում նպաստում է նաև ֆինանսական կայունության ապահովմանը:

Կենտրոնական բանկն իրականացնում է ռիսկերի վրա հիմնված վերահսկողություն, ինչը նշանակում է, որ ֆինանսական համակարգի տարբեր ոլորտների, գործառնությունների և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ իրականացվում է տարբեր խորությամբ և ինտենսիվությամբ վերահսկողություն, և ավելի շատ վերահսկողական ռեսուրսներ ուղղվում են առավել ռիսկային ոլորտներին, կազմակերպություններին և գործառնություններին: Ընդ որում՝ ռիսկերի վրա հիմնված վերահսկողության սկզբունքները կիրառվում են վերահսկողական բոլոր

գործընթացներում՝ ֆինանսական կազմակերպությունների ֆինանսական շուկա մուտքից մինչև ֆինանսական շուկայից ելքը:

Լիցենզավորում և գրանցում: 2023

թ. ընթացքում ԿԲ-ն իրականացրել է ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների որակավորման ներքին գործընթացների արդյունավետության գնահատում: 2024 թ. առաջին կիսամյակում գնահատման նախնական արդյունքները հաղորդվելու են ֆինանսական կազմակերպություններին՝ ներքին գործընթացներում համապատասխան բարելավումներ իրականացնելու նպատակով:

Բանկերի և ապահովագրական ընկերությունների կորպորատիվ կառավարման և ներքին հսկողության համակարգերի գործընթացի բարելավման շրջանակներում կատարված փոփոխություններով պայմանավորված՝ 2023 թվականի ընթացքում բանկերի և ապահովագրական ընկերությունների հաստիքացուցակում ներառվել են ռիսկերի տնօրեն և համապատասխանության ապահովման պատասխանատու ղեկավար պաշտոնները, որոնց հավակնող թեկնածուները Կենտրոնական բանկում անցել են անադարտության և համապատասխանության առավել խորացված գնահատում:



ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԻՑԵՆԶՎՈՐՈՒՄ

լիցենզավորվել են

1

ապահովագրական ընկերություն

5

ներդրումային ընկերություն

1

վճարահաշվարկային կազմակերպություն

11

փոխանակման կետ

գրանցվել է

25

ներդրումային ֆոնդ

Պրոդենցիալ վերահսկողություն: Շուկայի վարվելակերպի վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով 2023 թվականի ընթացքում կիրառության մեջ են դրվել չարաշահման (այդ թվում՝ անբարեխիղճ վարքագծի) ազդարարման մեխանիզմներ, որոնք հիմնվում են արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների և այլ աղբյուրներից հավաքագրված տեղեկատվության, ինչպես նաև մշտադիտարկումների վրա:

Առաջնորդվելով ՀՀ ԿԲ ռազմավարությամբ ամրագրված ֆինանսական համակարգում կիբեռանվտանգության բարձր մակարդակի ապահովման թիրախով՝ 2023 թվականին ֆինանսական կազմակերպություններում, մասնավորապես՝ բանկերում և վճարահաշվարկային կազմակերպություններում սկսվել են SS անվտանգության ոլորտին վերաբերող թեմատիկ ուսումնասիրություններ, որոնք միտված են վերջիններիս տեղեկատվական և կիբեռանվտանգության ռիսկերի բացահայտմանը, արդյունավետ կառավարմանն ու զսպմանը:

Երկրաշարժի ռիսկից բխող ֆինանսական ռիսկերը զսպելու, հնարավոր հետևանքները նվազեցնելու նպատակով իրականացված վերահսկողական միջոցառումների

արդյունքում ապահովագրական ընկերությունները ներդրել են երկրաշարժի ռիսկի կառավարման արդյունավետ համակարգեր, որոնք համապատասխանաբար արտացոլվել են վերջիններիս գնագոյացման մեջ: 2023 թվականի վերջի դրությամբ երկրաշարժի ռիսկի գծով 1 ռիսկի առավելագույն չափի նորմատիվն ապահովագրական ընկերություններում եղել է համարժեք սահմանաչափում:

Եզնաժամային իրավիճակներում ֆինանսական կազմակերպությունների դիմակայունությունը գնահատելու նպատակով շարունակվել են միկրոպրոդենցիալ սթրես թեստավորման համակարգի ներդրման և բարելավման գործընթացները: Ի տարբերություն նախորդ տարվա, այս տարի միկրոպրոդենցիալ սթրես թեստավորման վարժության իրականացմանը մասնակցել են բոլոր բանկերը:

ՀՀ առևտրային բանկերից համապարփակ տվյալների ստացման BO (Business Object) ծրագրային համակարգի միջոցով տվյալների տրանսֆորմացիայից, արտահանումից և վիզուալիզացիայից հետո որոշ չափով թեթևացել է ֆինանսական կազմակերպությունների հաշվետվական բեռը, քանի որ կրճատվել է վերջիններից



հավաքագրվող հաշվետվությունների քանակը: Առաջիկայում նախատեսվում է նաև այլ հաշվետվական ձևերի դուրսբերում:

Սպառողների շահերի պաշտպանություն:

Ձեռնարարության կանխարգելման աշխատանքների արդյունավետության մակարդակի բարձրացման նպատակից ելնելով՝ ստեղծվել է զեղծարարությունների կանխարգելման ստորաբաժանում, որի հիմնական նպատակն է առավելագույնս կանխարգելել ֆինանսական զեղծարարությունները՝ համագործակցելով իրավապահ մարմինների հետ: Իրականացված մշտադիտարկումների

արդյունքում բացահայտվել են բազմաթիվ դեպքեր, երբ տարբեր անձինք տարատեսակ հարթակներում հայտարարությունների միջոցով հանդես են եկել վարկային միջոցների տրամադրման և (կամ) այդ գործընթացներին աջակցելու և միջնորդելու, ինչպես նաև սպառողի փոխարեն ներդրումներ (այդ թվում՝ կրիպտոակտիվների) իրականացնելու առաջարկությամբ՝ առանց համապատասխան լիցենզիայի առկայության: Ձեղծարարությունների որոշ դեպքերի և սխեմաների վերաբերյալ իրականացվել են հանրային իրազեկումներ:

իրավապահ մարմիններին է ներկայացվել

12
հաղորդում

49
դեպքերով

Կարողությունների բարելավում, միջազգային համագործակցություն:

Կենտրոնական բանկի վերահսկողության առջև դրված նպատակների լիարժեք իրականացման, ինչպես նաև նոր ծագած ռիսկերին համարժեք արձագանքելու նպատակով 2023 թվականի ընթացքում շարունակվել են վերահսկողական կարողությունների և ֆինանսական համակարգի կարողությունների զարգացմանն ու խորացմանն ուղղված ջանքերը և աշխատանքները:

Կարևորելով բանկերի՝ իրենց ռիսկերին համապատասխան կապիտալի ապահովման ներքին գործընթացի համարժեքությունը (Կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթաց (ԿՅԳՆԳ)) կազմակերպվել է սեմինար-քննարկում բանկերի ներկայացուցիչների և

Չամաշխարհային բանկի փորձագետների հետ՝ ներկայացնելու ԿՅԳՆԳ լավագույն միջազգային փորձը, վերահսկողական սպասումները:

Շեշտադրելով բանկերում կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրումն ու կառավարման փորձի՝ միջազգային զարգացումներին համահունչ կատարելագործումը, որտեղ առանցքային նշանակություն ունեն բանկերի խորհուրդները՝ ՀՀ կենտրոնական բանկը, Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամի (EFSE) հետ համատեղ, կազմակերպել է «Բարելավելով կորպորատիվ կառավարումը բանկային համակարգում» թեմայով աշխատանքային քննարկում Հայաստանի բանկերի խորհրդի անդամների մասնակցությամբ:



ՀՀ ԿԲ-ն, համագործակցելով Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ, կազմակերպել է աշխատաժողով՝ համապատասխանության ապահովման թեմայով, որին մասնակցել են Հայաստանի բանկային ոլորտի ավելի քան 60 մասնագետներ: Քննարկվող հարցերից էին միջազգային պատժամիջոցների ռիսկը, կարգավորման շրջանակները, թղթակցային բանկային ծառայությունները, ֆինանսական հանցագործությունների համապատասխանությունը, առևտրային գործարքներով փողերի լվացումը և այլն:

Տեխնոլոգիական առաջընթաց:

ՌԱ. տեխնոլոգիապես զարգացած կարգավորման (RegTech) և վերահսկողության (SupTech) համակարգեր

Վերահսկողական գործընթացների թվայնացման և օպտիմալացման, նոր տեխնոլոգիաների ներդրումը ավելի արդյունավետ վերահսկողության համակարգ ունենալու և, արդյունքում, ֆինանսական կազմակերպությունների հաշվետվական ծախսերը նվազեցնելու նպատակով Կենտրոնական բանկը, տեխնիկական աջակցության շրջանակներում, համագործակցել է Համաշխարհային բանկի փորձագետների հետ՝ ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքների իրականացման համար: Ճանապարհային քարտեզի մշակումից հետո հիմնավորվել և ընտրվել են առավել առանցքային վերահսկողական նախագծերը, որոնց մեկնարկը նախատեսվում է 2024 թվականին:

Մրցակցություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկային համակարգը Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում ունի էական մասնաբաժին և բանկային համակարգում

մրցակցության նվազումը կարող է հանգեցնել բանկային ծառայությունների ավելի բարձր սակագների, ծառայությունների տարբերակվածության կրճատման, նորարարության և որակի բարելավման խթանների նվազման՝ 2023 թվականին Կենտրոնական բանկն իրականացրել է 2010-2022 թվականներին ՀՀ բանկային համակարգում կենտրոնացվածության և մրցակցության գնահատում: Համաձայն կատարված վերլուծության արդյունքների՝ բանկերը գործում են մենաշնորհային մրցակցության պայմաններում, որը աշխարհի տարբեր երկրների բանկային համակարգերի ամենատարածված շուկայական կառուցվածքի ձևն է: Մրցակցության այս ձևը վկայում է այն մասին, որ բանկերը հիմնականում մատուցում են տարբերակված ծառայություններ և ունեն իրենց ծառայությունների գները սահմանելու կարողություն:

ՀՀ Կառավարության կողմից իրականացվող ծրագրերին աջակցություն: 2023 թվականը չափազանց բարդ տարի էր Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների աջակցության նպատակով ՀՀ Կառավարության նախաձեռնած տարբեր կարևոր սոցիալական ծրագրերի հրատապ և հնարավորինս սահուն իրականացման տեսանկյունից: Այս առումով Կենտրոնական բանկը, ֆինանսական կազմակերպությունների հետ համատեղ, առավելագույն ջանքեր է ներդրել՝ օժանդակելու ֆինանսական համակարգի անելիքների հնարավորինս սահուն կազմակերպմանը:

Կենտրոնական բանկը, ՀՀ Կառավարության հետ համատեղ, վարել է ՀՀ ֆինանսական համակարգի կողմից Արցախում ունեցած ներդրումների վերակառուցման գործընթացը, որի հիմնական մասն ավարտվել է 2023 թվականի վերջին:



ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄ/ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2023 թվականին ՀՀ կենտրոնական բանկի իրականացրած դրամավարկային քաղաքականությունն ուղղված է եղել 3 տարվա հորիզոնում 12-ամսյա գնաճի 4% թիրախային մակարդակի ապահովմանը: Տարվա ընթացքում արտաքին հատվածից փոխանցվող գնանկումային ազդեցությունների և ԿԲ-ի կողմից իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության արդյունքում ՀՀ-ում գնաճային միջավայրն էականորեն մեղմվել է: 12-ամսյա գնաճը կտրուկ նվազել է տարվա առաջին կեսին՝ երկրորդ կիսամյակից ձևավորվելով գրոյական մակարդակի շուրջ:


2023 թվականին ՀՀ-ում պահպանվել է բարձր տնտեսական ակտիվություն՝ պայմանավորված գերազանցապես ծառայությունների և շինարարության ոլորտներում արձանագրված բարձր աճով, ինչի պարագայում տարեկան տնտեսական

աճը կազմել է 8.7%: Միաժամանակ, տնտեսական աճին շարունակել են նպաստել ներքին և արտաքին պահանջարկի գործոնները՝ դրսևորվելով ինչպես սպառման, այնպես էլ ներդրումների բարձր աճով:

Ելնելով ստեղծված իրավիճակից և առաջնորդվելով ապագային միտված քաղաքականության իրականացման սկզբունքով՝ 2023 թվականին ՀՀ կենտրոնական բանկն աստիճանաբար թուլացրել է դրամավարկային պայմանները՝ իջեցնելով քաղաքականության տոկոսադրույքը ընդհանուր առմամբ 1.5 տոկոսային կետով: Արդյունքում՝ 12-ամսյա գնաճը տարվա ընթացքում նվազել է 8.9 տոկոսային կետով և տարեվերջին կազմել -0.6%, իսկ 12-ամսյա բնականոն գնաճը նվազել է 9.9 տոկոսային կետով՝ տարին ամփոփելով -0.4% մակարդակով:

Գծապատկեր 1

2023 թ. ընթացքում արտաքին հատվածից փոխանցվող գնաճային ազդեցությունները էականորեն մեղմվել են, ինչի պայմաններում 12-ամսյա թե՛ ընդհանուր և թե՛ բնականոն գնաճը կտրուկ նվազել է



2023 թվականին, ԿԲ ռազմավարությամբ ամրագրված հիմնական ուղենիշների շրջանակներում, շարունակվել են դրամավարկային քաղաքականության մշակման գործընթացի և Կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգի (ԿԲՎՀ) առանցքային վերափոխման աշխատանքները: Այս փոփոխությունների համատեքստում տարվա ընթացքում ստեղծվել են անորոշությունների պայմաններում դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման նորարարական համակարգային մոտեցման ներդրման իրական հիմքեր: Դա կարևորում է մակրոտնտեսական տարբեր սցենարների քննարկման ներքո դրամավարկային ռիսկերի նկարագրության, գնահատման, հասցեագրման ու որոշումների կայացման մոտեցումը՝ շեշտադրելով որոշումների թափանցիկության բարձր մակարդակի և արդյունավետ հաղորդակցման նշանակությունը¹: Դրամավարկային քաղաքականության նոր համակարգը մշակվել է միջազգային հեղինակավոր տնտեսագետների և փորձագետների հետ համատեղ աշխատանքի արդյունքում և ՀՀ կենտրոնական բանկում պաշտոնապես ներդրվելու է 2024 թվականի հունվարից²:

Դրամավարկային քաղաքականության ռազմավարական նոր մոտեցման մշակման և կիրառման գործընթացում կարևորվում է ֆինանսական շուկայի ու լայն հասարակության հետ բաց և թափանցիկ երկխոսությունը սցենարների կառուցման ու որոշումների տրամաբանության հաղորդակցման համատեքստում՝ ձգտելով ձևավորել հանրային լայն ընկալում և

աջակցություն ԿԲ քաղաքականության նկատմամբ: Այդ նպատակին են ծառայել դրամավարկային քաղաքականության իրագործման և կայացրած որոշումների հաղորդակցման հիմնական գործիքը՝ քաղաքականության տոկոսադրույքի որոշման օրը կազմակերպվող մամուլի ասուլիսները, ինչպես նաև դրամավարկային ոլորտին առնչվող տարբեր քննարկումները և վերլուծությունների ու հետազոտությունների հրապարակումները: Տարվա ընթացքում դրամավարկային քաղաքականության խնդիրների և ոլորտում կատարվող փոփոխությունների վերաբերյալ ԿԲ-ն շարունակել է ազդակներ հաղորդել տարբեր համալսարաններում ուսանողների և դասախոսների, ինչպես նաև բանկերի վերլուծաբանների և ֆինանսական շուկայի մասնակիցների հետ պարբերական հանդիպումների միջոցով:

ՌԱ. միջազգային մակարդակում մրցունակ դրամավարկային քաղաքականություն մշակող թիմ:

Դրամավարկային ոլորտի բարեփոխման և կատարելագործման համատեքստում առանցքային նշանակություն ունի մարդկային կապիտալի զարգացումը և բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավումն ու պատրաստումը:

Ուստի, առաջնորդվելով միջազգային մակարդակում մրցունակ թիմի ձևավորման տեսլականով, 2023 թվականին Կենտրոնական բանկում շարունակվել է քաղաքականության վերլուծությունների

1 ԿԲՎՀ նոր համակարգի ներդրման հետ կապված ընթացիկ հետազոտական աշխատանքներն ու աշխատանքային փաստաթղթերը իրապարակվել են ՀՀ ԿԲ պաշտոնական կայքում՝ www.cba.am:

2 2024 թ. հունվարի 11-12-ին կազմակերպված գիտաժողովի ընթացքում մասնագիտական ու ակադեմիական հանրության հետ քննարկվել, ներկայացվել և ազդարարվել է «Ռիսկերի խելամիտ կառավարման մոտեցմամբ դրամավարկային քաղաքականության իրագործման համակարգի» ներդրումը ՀՀ կենտրոնական բանկում: 2024 թ. առաջին եռամսյակի դրամավարկային քաղաքականության մշակման շրջափուլի ընթացքում այն գործարկվել է և գործնականում կիրառվել քաղաքականության մշակման, որոշումների կայացման ու հաղորդակցման ողջ գործընթացում:



իրականացման նոր չափորոշիչների մշակումն ու ներդրումը՝ հիմնված հետազոտական գերազանցության սկզբունքի վրա: Այս շրջանակում կարևորվել են հատկապես վերլուծության ոչ գծային մոտեցումների զարգացումն ու ներդրումը, ինչպես նաև ԿԲ հեղինակության գործոնի քննարկումը քաղաքականության սցենարների մշակման գործընթացում:

Մարդկային կապիտալի զարգացման խնդրի ներքո 2023 թվականին ՀՀ ԿԲ-ն, եռամսյակային և շաբաթական պարբերականությամբ, անցկացրել է կենտրոնական բանկերի մակրոմոդելավորման քննարկում-աշխատաժողովներ, որոնց մասնակցել են ինչպես ՀՀ ու այլ երկրների ԿԲ-ների աշխատակիցներ ու ղեկավար անդամներ,

այնպես էլ առաջատար հետազոտողներ ու տնտեսագետներ աշխարհի տարբեր անկյուններից: Վերջիններիս շարքում հարկ է նշել Լաուրենս Սամբուին, Չարլզ Գուդհարթին, Աթանասիոս Օրֆանիդեսին, Ջոն Թեյլորին, Ջեյմս Համիլթոնին, Էրիկ Լիփերին և այլոց: Այդ աշխատաժողովները ՀՀ ԿԲ աշխատակիցների համար ծառայել են որպես բացառիկ հարթակ՝ ներկայացնելու իրենց հետազոտություններն ու վերլուծությունները միջազգային փորձագետների համաշխարհային լսարանին, լսելու առաջնակարգ տնտեսագետների դասախոսություններն ու քննարկումները քաղաքականությանն առնչվող տարբեր թեմաների շուրջ, մշակելու դրամավարկային նոր համակարգը՝ հաշվի առնելով աշխարհահռչակ փորձագետների դիտարկումներն ու առաջարկությունները:

Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի տնտեսագիտության պրոֆեսոր ԱԹԱՆԱՍԻՈՍ ՕՐՖԱՆԻԴԵՍ.

«ՀՀ կենտրոնական բանկի պարագայում հատկապես ուշագրավն այն է, որ կենտրոնական բանկն ամենաառաջիններից էր, որ դրամավարկային քաղաքականությունը ճշգրտեց՝ 2020 թվականի վերջին բարձրացնելով տոկոսադրույքները: Սա տեղի ունեցավ հիմնականում այլ կենտրոնական բանկերի կողմից տոկոսադրույքները ճշգրտելուց դեռ մեկուկես տարի առաջ: Եվ դա շատ լավ քաղաքականություն էր: Այսպիսով՝ այն, ինչին ականատես եղանք ՀՀ կենտրոնական բանկի դեպքում, կասեի, որ գնաճի նպատակադրման մեխանիզմի հաջող կիրառում էր, ինչը նշանակում է, որ, հաշվի առնելով տնտեսությանը հարված հասցնող ջնջումները, առկա տեղեկատվությունը, որն օգտագործվում է 2-3 տարվա հատվածով կանխատեսում կատարելու համար, քաղաքականությունը կարելի է ճշգրտել և գնաճը 4 % նպատակային մակարդակին մոտեցնել 3 տարվա հորիզոնում: ԿԲ-ն սա բավականին հաջող է արել վերջին 3 տարում»:

Սան Անդրեսի համալսարանի տնտեսագիտության պրոֆեսոր, Արգենտինայի կենտրոնական բանկի նախկին կառավարիչ ՖԵԴԵՐԻԿՈ ՍՏՈՒՐՑԵՆԵԳԵՐ.

«Ասեմ, որ իսկապես բավականին տպավորված եմ. դե, գիտեք, որ Արգենտինայից եմ ես, մի երկիր, որը շատ դժվարություններ է ունեցել գնաճի դեմ պայքարում: Եվ եկել եմ մի երկիր, որտեղ, տեսնում ենք, որ գնաճը 0 % է, և որի կենտրոնական բանկը վերջին 15 տարիներին կարողացել է հասնել գնաճի նպատակային մակարդակին: Կարծում եմ՝ սա շատ գովելի է: Կարծում եմ նաև, որ սա մեծ հաջողություն է, և, անշուշտ, հիանալի է տեսնել, թե որքան լավ դրամավարկային քաղաքականություն է իրականացվում ամբողջ աշխարհում»:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄ/ ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական կայունության ապահովումը, գների կայունության հետ մեկտեղ, Կենտրոնական բանկի սահմանադրական մանդատն է, որի իրագործման նպատակով մշակվում և իրականացվում է մակրոպրոդեյնցիալ քաղաքականություն: 2023 թ. ընթացքում ֆինանսական համակարգն ապահովել է ֆինանսական միջնորդության գործառնայթի բնականոն ընթացքը՝ տնտեսության վարկավորման, խնայողությունների ներգրավման և այլ ֆինանսական ծառայությունների մատուցման միջոցով:

2023 թ. բանկային համակարգն ամփոփել է կապիտալի և իրացվելիության բարձր պաշարներով՝ երաշխավորելով համակարգի դիմակայունությունը հնարավոր ցնցումների նկատմամբ: Սթրես թեստերի արդյունքները վկայում են, որ բանկերն ունակ են կլանելու մակրոտնտեսական զարգացումներից ածանցվող հնարավոր կորուստները:

Տարվա արդյունքներով բանկային համակարգում գրանցվել է նաև բավարար շահութաբերություն, ինչը կարևոր է բանկային գործունեության բիզնես հեռանկարի տեսանկյունից: Ավելին, ի տարբերություն նախորդ տարվա, երբ բանկային համակարգի շահութաբերությունն առավելապես պայմանավորված էր ոչ տոկոսային եկամուտներով, 2023 թ-ին էական նպաստում է ունեցել տոկոսային եկամուտների աճը:

2023 թ. պահպանվել է բանկային համակարգի վարկային պորտֆելի

Արժույթի միջազգային հիմնադրամի Մերձավոր Արևելքի Կենտրոն և Ասիայի տարածաշրջանային տնօրեն ԶԻՅԱԴ ԱԶՈՒՐ:

«ՀՀ կենտրոնական բանկը պատմություն է այն մասին, թե ինչերի է հասել Հայաստանը վերջին երեք տասնամյակներում: Սկսելով դեռևս 1993-ի շատ ծանր իրավիճակից՝ հիմա մեր առջև ուժեղ կառույց ենք տեսնում, որը հեղինակություն է ստեղծել Հայաստանում և դրսում, զարգացրել է հմտությունների, տաղանդների միջավայր և իրականացրել մի շարք բարեփոխումներ, կարևոր բարեփոխումներ, այդ թվում՝ փոխարժեքի ճկունության, գնաճի նպատակադրման և ֆինանսական հատվածի հետ կապվածները, ինչպես նաև հաջողել է կառավարել ծանր ցնցումները, ցնցումներ, որոնք մենք բոլորս տեսանք վերջին մի քանի տարիների ընթացքում»:

և ավանդների բնականոն աճի դիմամիկան: Վարկային պորտֆելի աճը հավասարապես պայմանավորվել է տնային տնտեսությունների և բիզնես վարկերի աճով: Հարկ է ընդգծել, որ տարվա ընթացքում սպառողական վարկավորման ոլորտում դիտվել է ակտիվության աճ, և նախորդ տարիների համեմատությամբ գրանցվել է սպառողական վարկերի աճի համեմատաբար բարձր տեմպ: Ի թիվս այլ գործոնների, վերջինս նպաստել է նաև բանկային համակարգի տոկոսային եկամուտների աճին:

Հիպոտեկային վարկավորման և անշարժ գույքի գների բարձր աճի տեմպերը



պահպանվել են նաև 2023 թվականի ընթացքում: Պահպանվել են նաև գերտաքացման ռիսկերը, ինչի մասին ԿԲ-ն հաղորդակցել է հանրությանը: Անշարժ գույքի շուկայի գերտաքացման ռիսկերի հասցեագրման նպատակով ԿԲ-ի կողմից ներդրված պահանջ/գրավի արժեք հարաբերակցության առավելագույն սահմանաչափի նորմատիվը պահպանվել է:

Տարվա ընթացքում Կենտրոնական բանկի խորհուրդը բարձրացրել է նաև կապիտալի հակացիկլիկ բուֆերի դրույքաչափը՝ 2023 թվականի օգոստոսից այն սահմանելով ռիսկով կշռված ակտիվների 1.5 տոկոսի չափով: Վերջինս ընդլայնում է շուկային իրավիճակներում բանկային համակարգի կողմից կորուստների կլանման ունակությունը՝ նպաստելով տնտեսության վարկավորման անընդհատության ապահովմանը:

ՌԱ. համակարգային ռիսկի գնահատման արդի գործիքակազմ, այդ թվում՝ նոր գործիքների մշակում և ներդրում,

Կարևորելով տնտեսական քաղաքականության վերլուծական հենքի շարունակական զարգացումը՝ Կենտրոնական բանկում 2023 թ. կատարվել են մակրոպրոդեցիալ քաղաքականության որոշումներին աջակցող համակարգերի և մոդելների կատարելագործման աշխատանքներ: Մասնավորապես՝ աշխատանքներ են իրականացվել Growth-at-Risk մոդելների ուսումնասիրության և նախնական քանակական գնահատումների ուղղությամբ, որոնց վերջնական գործառնականացումը կընդլայնի իրականացվող

մակրոպրոդեցիալ քաղաքականության արդյունավետությունը:

Առաջնորդվելով համակարգային ռիսկի գնահատման արդի գործիքակազմի ձևավորման անհրաժեշտությամբ՝ մակրո սթրես թեստավորման համակարգում ներդրվել է դեֆոլտի հավանականության (probability of default, PD) կանխատեսման նոր մոտեցում՝ հիմնված մոդելների Բայեսյան միջինացման (Bayesian model averaging, BMA) մեթոդի վրա: Վերջինս ենթադրում է մեծ թվով վիճակագրական մոդելների արդյունքների ընդհանրացում՝ էապես բարելավելով գնահատումների ճշգրտությունը:

2023 թ. ընթացքում կատարվել է նաև անշարժ գույքի և հիպոտեկային վարկավորման շուկաներում կուտակված ռիսկերի՝ բանկային համակարգի վրա ունեցած հնարավոր բացասական ազդեցությունների համապարփակ սթրես թեստավորում: Անշարժ գույքի գների անկման և կառուցապատող կազմակերպությունների ֆինանսական վիճակի վատթարացման սցենարի ներքո գնահատվել է հնարավոր վարկային ռիսկը և բանկային համակարգի կողմից վերջինիս կլանման ունակությունը: Ընդհանուր առմամբ, արդյունքները վկայում են ենթադրյալ խիստ վատատեսական սցենարի դեպքում բանկային համակարգի կողմից ռիսկերի կլանման բավարար կարողությունների մասին:

ՌԱ. մակրոպրոդեցիալ քաղաքականության իրականացման կառուցակարգ:

Մակրոպրոդեցիալ քաղաքականության իրականացման կառուցակարգի մշակման շրջանակներում դեռևս տարեսկզբին մշակվել է կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման



ընդհանուր մեթոդաբանությունը¹, որը հրապարակվել է ՀՀ ԿԲ կայքէջում: Վերջինս ուղղված է դինամիկ և ապագային միտված (forward looking) մակրոպրոդեցնցիալ քաղաքականության հիմքերի ամրապնդմանը, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացի թափանցիկության բարձրացմանը:

ՌԱ. հաղորդակցում, քաղաքականության թափանցիկություն և ընկալելիություն,

Կարևորելով քաղաքականության թափանցիկությունը՝ Ֆինանսական կայունության զարգացումների և մակրոպրոդեցնցիալ քաղաքականության ընթացքի վերաբերյալ զարգացումները Կենտրոնական բանկը հաղորդակցում է Ֆինանսական կայունության տարեկան հաշվետվության, մակրոպրոդեցնցիալ գործիքների որոշումների հրապարակման, ինչպես նաև մամլո ասուլիսների և հաղորդագրությունների միջոցով:

1 Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը:



ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ԶՈՐԱԿՑՈՒՄ

Նախորդ 16 տարիների ընթացքում Կենտրոնական բանկի ուշադրության կենտրոնում է եղել սպառողների շահերի պաշտպանության էկոհամակարգի ստեղծումը, որի արդյունքում մշակվել են սպառողների շահերի պաշտպանության հիմնարար օրենսդրական դաշտը և գործարար վարվելակերպի կանոնները, ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունը, գործարկվել են սպառողների բողոքների արձագանքման կարևոր ենթակառուցվածքներ, այդ թվում՝ Ֆինանսական համակարգի հաշտարարը և ֆինանսական կազմակերպություններում բողոքների արձագանքման ընթացակարգերը:

2023 թ. Կենտրոնական բանկը առանձնակի ուշադրություն է դարձրել սպառողներին զորակացման առումով խնդրակենտրոն գործառույթների իրականացմանը՝ զուգահեռաբար շարունակելով պահպանել և զարգացնել սպառողների շահերի պաշտպանության գործող էկոհամակարգը: 2023 թ. միջոցառումները միտված են եղել վեր հանելու թիրախային խմբերի կոնկրետ խնդիրները և ձեռնարկելու դրանց լուծմանը նպատակաուղղված հստակ գործողություններ, մասնավորապես՝

- Ֆինանսական ծառայություններից օգտվող սպառողների համար 2023 թ. իրականացվել է սպառողների տարբեր աղբյուրներից ստացված ազդակների ուսումնասիրություն: Արդյունքում բացահայտվել են ամենախնդրահարույց

ուղղություններն ու թեմաները, որոնցից 5-ը առանձնացվել են որպես առավել կարևորներ: Օրինակ՝ խնդրակենտրոն ֆինանսական պրոդուկտ է հանդիսացել ԱՊՊԱ-ն, մասնավորապես՝ վնասի գնահատման անհամաձայնություններն ու հատուցման մերժումները: Այս մասով բացահայտված խնդիրների պատճառների մասին համատեղ քննարկումներ են եղել ԱՊՊԱ բյուրոյի և ապահովագրական ընկերությունների հետ, և պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ համատեղ իրականացնելու առարկայական գործողություններ՝ ուղղված սպառողների զորակցմանը:

- 2023 թ. հուլիսի 1-ից վարկային ծառայություններից օգտվող սպառողներին վարկային պատմության և սքոր գնահատականի վերաբերյալ տրվում է առավել մանրամասն տեղեկատվություն. մասնավորապես՝ մինչև պայմանագրի կնքումը, սպառողի վերաբերյալ վարկային բյուրոյից հարցումներ կատարելու համաձայնությունը ներառում է նաև տեղեկատվություն հարցումների նպատակների, ժամկետների և վարկային սքորի վրա դրանց ազդեցության վերաբերյալ, ինչպես նաև յուրաքանչյուր անգամ սպառողի մասին վարկային հարցում կատարելիս ֆինանսական կազմակերպությունն անվճար,



2023 թվականը հարուստ էր աշակերտների համար իրականացվող տարբեր նախագծերով.



ՓՈՂԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱԲԱԹ

97

դպրոց

3200

աշակերտ

ԿԲ փորձագետներն այցելել են դպրոցներ, աշակերտները ստացել են անձնական ֆինանսները կառավարելու գործնական հմտություններ



ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

400

աշակերտ

հինգ աշակերտ մասնակցել է օլիմպիադայի միջազգային փուլին



ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԲՐԵՅՆ ՌԻՆԳ

10

թիմ

55

աշակերտ

Աշակերտները իրենց գիտելիքները ստուգել են մրցաշարում, որոշվել են երեք մարզերի հաղթող սաներն ու նրանց պատրաստած ուսուցիչները



ՔԱՂԱՔԱՑԻ ՆԱԽԱԳԻԾ

27

դպրոց

170

դպրոցական

իրականացրել է անձնական ֆինանսների թեմաներով ուսումնական նախագծեր, զարգացրել գործնական հմտություններ ու նպաստել համայնքի ֆինանսական իրազեկմանը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԱՊԱՐԱՆՈՄ

1 000

աշակերտներ ու ուսուցիչներ

մասնակցել են դրամի 30-ամյակի կապակցությամբ կազմակերպված ցուցահանդեսին, ինչպես նաև անձնական ֆինանսների կառավարմանը նվիրված ինտերակտիվ դասախոսությանը



ՀԱՇՏ ՃԱՄԲԱՐ

1000

երեխա

սակավ ապահովված ընտանիքների, զոհված, հաշմանդամ զինծառայողների և աշխարհագորայինների երեխաների համար կազմակերպվել են ճամբարներ՝ իրազեկելով ֆինանսների ոլորտում իրավունքների պաշտպանության ու անձնական ֆինանսները կառավարելու մասին



էլեկտրոնային եղանակով ծանուցում է այդ մասին սպառողին, եթե այդ հարցումն ազդելու է սպառողի վարկային սքորի վրա:

**ՄՅԵՐ ԱԲՐԱՅԱՄՅԱՆ,
IDBank-ի վարչության նախագահ.**

«Կարծում եմ, որ այս երեք տասնամյակների ընթացքում Կենտրոնական Բանկը բազմիցս ապացուցել է, որ մեր երկրի ամենակայացած և ինստիտուցիոնալ կառույցներից մեկն է: Մեր ազգային դրամը նույնպես... կարող ենք հավաստել, որ այն, թերևս, աշխարհում ամենակայուն արժույթներից մեկն է, որի նկատմամբ վստահությունը գնալով ավելանում է: Ես կարծում եմ, որ Կենտրոնական Բանկի պրոֆեսիոնալ թիմի արդյունավետ աշխատանքը և շարունակական է լինելու, և նպաստելու է մեր երկրում տնտեսության զարգացմանը և ֆինանսական կայունության ամրապնդմանը»:

Ֆինանսական կրթում

- Ներկա և ապագա ուսուցիչների համար 2023 թվականին պատրաստվել է մեթոդական ձեռնարկ, որը ներկայացնում է քուչիհնգի այն մեթոդներն ու գործիքները, որոնք կարող են արդյունավետորեն կիրառվել հայկական հանրակրթական դպրոցներում: Ֆինանսական կրթությունը ներդրվել է նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Սկզբնական կրթության, պատմության և հասարակագիտության, մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետներում ներդրված ընտրովի դասընթացի արդյունքում Մանկավարժական

համալսարանն ավարտող ուսանողները, դառնալով ուսուցիչներ, կկարողանան ֆինանսական կրթման իրենց ունակությունները փոխանցել դպրոցական տարիքի երեխաներին:

- Հաշմանդամություն ունեցողների կամ զոհված զինծառայողների և աշխարհագորայինների ընտանիքի անդամների համար կազմակերպվել է կրթության երկօրյա դասընթաց: Նրանք հնարավորություն են ունեցել պարզելու իրենց հուզող հարցերի պատասխանները և ստանալու գործնական գիտելիքներ՝ հիմնադրամի կողմից ստացված ֆինանսական միջոցներն ավելի լավ կառավարելու համար:
- Կամավորներ. 2016 թվականից ի վեր ֆինանսական կրթման նախաձեռնությունները կազմակերպվում և իրագործվում են կամավորների հետ սերտ համագործակցությամբ: 2023 թվականին ընդգրկվել են 78 կամավորներ, ովքեր դարձել են ֆինանսապես իրազեկ և օգնել տարածելու իրենց ստացած ֆինանսական հմտությունները:

Համագործակցություն

Սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման ոլորտում մենք շարունակել ենք համագործակցությունը ֆինանսական կրթման ծրագրի մշակման և իրագործման հանձնաժողովի, Եվրասիական տնտեսական միության, Ֆինանսական համակարգի հաշտարարի, Ֆինանսական ներգրավվածության միության (Alliance for Financial Inclusion, AFI), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հետ:





«ԴՐԱՄ 30-30 ՆԱԽԱԳԻԾ»

120

շահառու

4

սահմանամերձ գյուղերից

4

բանկերի հետ համագործակցությամբ

ստացել են մորայլ բանկինգ և «handholding»



400 000

անհուսալի վարկառուներ

ապահով վերադարձ բանկային համակարգ



ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆ. ԿՐԹՈՒՄ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ`

550

հզր

որից՝ 1.4

հզր

մարդ հեռավար

5

հզր

մարդ և երեխա առերես

425

հզր

երեխա առերես դպրոցում

Այդ թվում`

- 3000+ շահառու «Անձնական ֆինանսների կառավարում» թեմայով սեմինար
- 1000+ շահառու՝ Այցելուների կենտրոնի հետ համատեղ
- 55 աշակերտ և 22 ուսուցիչ ՀՀ բոլոր մարզերից և Երևանից խաղացին ֆինանսական բրեյն ռինգ
- 1000 երեխա ճամբարում՝ 11-13 տարեկան. ֆինանսական իրազեկման ծրագիր՝ Հաշտարարի հետ
- 3200 աշակերտ Երևանի և մարզերի 97 դպրոց. ԿԲ աշխատակիցների այց՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հետ համատեղ
- 82 հզր մարդ տարեկան տեղեկացված որոշում է կայացնում fininfo.am -ում ծառայության գները համեմատելու միջոցով
- 178 հզր անձ տարեկան հեռավար կրթվում են Abcfinance.am կայքի միջոցով
- 550 հզր մարդ հեռավար ֆին. կրթում են անցնում fininfo.am FB էջով
- 432 հզր անձ տարեկան կրթվում են Abcfinance.am FB սոցցանցի միջոցով
- 172 հզր անձ տարեկան կրթվում են Abcfinance.am Instagram սոցցանցի միջոցով



abcfinance.am
ԱՅՔ ԲԵՆ ԳԻՄ ՖԻՆԱՆՍԵՐ



47 505

էջի հետևորդներ



1051

էջի հետևորդներ



03

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԿԲ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Մարդիկ
- Տեխնոլոգիաներ
- Կառավարում

ԿԲ կարողությունների զարգացման ռազմավարական ուղղության լավագույն իրականացմամբ միայն մենք կկարողանանք իրականություն դարձնել ազդեցության տիրույթում որդեգրած անելիքները: Սրա քաջ գիտակցմամբ տարվա սկզբին Կենտրոնական բանկն իր գործընթացները լավարկելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով արտաքին խորհրդատուների օգնությամբ մշակել է ներքին վերափոխման ծրագիր: Վերափոխման ծրագիրը նախատեսված է իրականացնել 5 ուղղությամբ.

- Մշակույթ, որն ուղղված է վարքագծի և մտածելակերպի վերափոխմանը:
- Կատարողականի կառավարում, որը ներառում է նպատակների սահմանում:
- Կառավարման բարեփոխում, որն ընդգրկում է որոշումների կայացման մեխանիզմների, լիազորությունների պատվիրակման և հաշվետվողականության վերանայում ու վերափոխում:
- Աշխատանքային գործընթացներ, որոնք պետք է հստակեցվեն, օպտիմալացվեն և շարունակաբար զարգացվեն:
- Նախագծային կառավարում, որը կոչված է բարդ և երկարաժամկետ նախագծերի իրականացման կարողությունների ձևավորմանը:

2023 թվականին աշխատանքների մեծ մասն իրականացվել է վերոնշյալ ծրագրի շրջանակներում, որը ներկայացվում է ստորև:

ՄԱՐԴԻԿ

Հավատարիմ մնալով Կենտրոնական բանկի ռազմավարական ուղերձին՝ մենք շարունակում ենք Բանկը լավագույն գործատուների շարքում, առաջատար դիրքերում պահելու մեր քաղաքականությունը՝ անդադար ձգտելով բարելավել գործատուի մեր կերպարը և ապահովել լավագույն միջավայր Կենտրոնական բանկի թիմի համար՝ արդյունք ստեղծելու և մեր առաքելությունն իրականացնելու:

ՌԱ. կատարողականի գնահատում՝ հիմնված մարդու ներդրման/ արդյունքի, այլ ոչ թե պարզապես զբաղվածության վրա, որն էլ հիմք կհանդիսանա վարձատրության և առաջխաղացման համար,

Կատարողականի կառավարման վերափոխված համակարգ

2023 թ. ակտիվ աշխատանքներ են տարվել կատարողականի կառավարման համակարգի վերանայման և բարելավման ուղղությամբ: Կատարողականի կառավարման նոր համակարգը գնահատում է ինչպես վարքագծային համապատասխանությունը ԿԲ մշակույթին ու արժեքներին, այնպես էլ ռազմավարությունից բխող նպատակներն ու դրանց իրականացման արդյունքի գնահատման չափանիշները: Այս համակարգը, որի համար ձեռք է բերվել ժամանակակից և



ԱՃԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

Ես – Կազմակերպություն

- ✓ Անկեղծ ենք մեր խոսքում և մղումներում, առաջնորդվում ենք կազմակերպության շահով:
- ✓ Ստանձնում ենք պատասխանատվություն և նախաձեռնողական ենք:
- ✓ Մշտապես ձգտում ենք աշխատանքն անել ամենալավ որակի և պատրաստ ենք լրացուցիչ ջանք ներդնել:



Ես - Գործընկերներ

- ✓ Հարգում ենք դիմացիներին:
- ✓ Միշտ բաց ենք արդար և փաստերով հիմնավորված հետադարձ կապ տալու և ստանալու:
- ✓ Բաց ենք կիսվելու ունեցած և կուտակած գիտելիքով գործընկերների հետ:
- ✓ Գերադասում ենք համագործակցությունը մրցակցության փոխարեն՝ առաջնորդվելով միասնական նպատակով:
- ✓ Կիսում ենք թիմակիցների հաջողություններն ու անհաջողությունները:



Ես - Ինքս

- ✓ Աշխատում եմ հանուն մեկ միասնական նպատակի՝ հասարակության բարեկեցության:
- ✓ Պատասխանատու եմ իմ խոսքի և գործի համար:
- ✓ Առաջնորդվում եմ նոր գիտելիք ստանալու, զարգանալու և նորարարության ձգտումով:
- ✓ Իմ վարքով օրինակ եմ ծառայում մյուսների համար:



տեխնոլոգիական համապատասխան լուծումներով հագեցած ծրագրային ապահովվածություն, հնարավորություն կտա թափանցիկ և օբյեկտիվ գնահատելու աշխատակիցների կատարողականը: Կատարողականի կառավարման համակարգում առանցքային նշանակություն է տրվել շարունակական հետադարձ կապի ներդրմանը, որը կնպաստի ինչպես ղեկավար-աշխատակից շփման ամրապնդմանը, այնպես էլ խնդիրների արագ բացահայտմանն ու արձագանքմանը:

Տարվա վերջում սահմանվել են ԿԲ բոլոր ստորաբաժանումների 2024 թվականի նպատակները, որոնք էլ կներկայացնի կատարողականի կառավարման համակարգի ամենավերին օղակը: Այս նպատակների՝ վերևից մինչև աշխատակից իջեցնելու (կասկադավորելու) արդյունքում մենք կկարողանանք մեր աշխատակիցներին ուղղորդել և ներգրավել Բանկի գլխավոր նպատակների իրականացման գործընթացում:

Համակարգը գործի կդրվի 2024 թվականից, իսկ ամբողջական գործարկումը կիրականացվի 2025 թվականից:

Մշակույթ և միջավայր



Վերափոխման ծրագրի հիմքում մշակույթն է և դրա վերափոխումը: Ծրագրում մատնանշվել է այն ցանկալի մշակույթը, որի ձևավորմանը ձգտում ենք: Եվ այս ուղղությամբ տարվա ընթացքում նախանշվել են այն սկզբունքները, որոնց պահպանմամբ մենք կհասնենք մեր ցանկալի մշակույթին: Սկզբունքները տասներկուսն են, որոնք



ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Դիլիջանի կենտրոնական դպրոցի աշակերտներ

176




որից՝ ԿԲ աշխատակիցների երեխաներ

61

Դիլիջանի կենտրոնական մանկապարտեզի սաներ

50




որից՝ ԿԲ աշխատակիցների երեխաներ

28

վազք՝ առանց CO₂-ի արտանետման

230,000



կմ



Արևային կայանների շնորհիվ ամսական CO₂-ի նվազ արտանետում

7

տոննա



համադրելի է

~270

տնկված ծառի հետ

ԱՆՁՆԱԿԱՐՄ

Անձնակազմի միջին թիվ


767

322

արական

445

իգական




Կին-տղամարդ ղեկավարների հարաբերակցությունը
խորհուրդ



Ղեկավար անձնակազմ

71



45



Նոր աշխատակիցների թիվ

123

2023 թվականին ընդունված

Հոսունության տոկոս


14%

Աշխատակիցների միջին աշխատանքային փորձ

11

տարի

ԿԲ աշխատակիցների բաշխում ըստ տարիքի



մինչև 28 28-42 43-62 63-ից բարձր
19% 41,5% 34,8% 4,43%

ԿԲ աշխատակիցների գործուղումները (վայրը ներառյալ), մասնակցությունը սեմինարներին, կուրսերի, դասընթացների

Ներքին դասընթացների քանակ

49

Ներքին դասընթացներին մասնակիցների քանակ

454

Արտաքին դասընթացների քանակ

84

Արտաքին դասընթացներին մասնակիցների քանակ

103


Աշխատակիցների ստացած որակավորումներ




CFA Institute




Փորձառության թվային արդյունք **86**


Գյումրու պետական համալսարան


ԵՊՀ



ԵՊՀ հջևանի մասնաճյուղ


Կառավարման ակադեմիա



ՀԱՀ



Պոլիտեխնիկ



Հայաստանում ֆրանսիական համալսարան


Հայ-ռուսական համալսարան



ՀՊՏՀ



ՀՊՏՀ քոլեջ



Շիրակացու ճեմարան



Եվրոպական քոլեջ



որից՝ դրսից **22**

Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ (MIT)



Յեյլի համալսարան (Yale University)



Չիկագոյի համալսարան (University of Chicago)



Մինեսոտայի համալսարան (University of Minnesota – Twin Cities)



Հարվարդի համալսարան (Harvard University)



Փենսիլվանիայի համալսարան (The Wharton School - University of Pennsylvania)



Ուորվիքի համալսարան (Warwick university)



Բեյրութի ամերիկյան համալսարան (American University of Beirut)



UWC Դիլիջանի միջազգային դպրոց



Նոտր Դամի համալսարան (University of Notre Dame)



Թաֆթսի համալսարանի Ֆլետչերի դպրոց (The Fletcher School at Tufts University)



Չեխիայի Հանրապետության Կարլի համալսարանի Տնտեսական հետազոտության և ավարտական կրթության կենտրոն-տնտեսագիտական ինստիտուտ


ՄքՁիլ համալսարան (McGill University)


University of California Davis


Luis Guido Carli (Հռոմ, Իտալիա) համալսարան


AUA, MSE


University of Edinburgh Էդինբուրգի համալսարան




խմբավորված են համապատասխան՝ ես-կազմակերպություն, ես-գործընկեր և ես-ինքս խմբերում:

Մշակույթի զարգացման, թիմային ոգու ամրապնդման նպատակով 2023 թվականին՝ արդեն երկրորդ անգամ իրականացվեց Ֆինանսական ոլորտի շախմատի առաջնություն՝ ներգրավելով ֆինանսական համակարգի կազմակերպությունների աշխատակիցներին ԿԲ հարկի տակ: Առաջնությունն այս տարի նույնպես անցկացվեց թիմային և անհատական ձևաչափերով: Միջոցառումը ևս մեկ քայլ է՝ ուղղված համագործակցության և ֆինանսական համակարգի կազմակերպությունների միջև կապերի զարգացմանը, որը շարունակական է լինելու:

Ինչպես և նախորդ տարիներին, 2023 թվականին ևս ԿԲ թիմի անդամները ակտիվ մասնակցություն են ունեցել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում իրականացվող միջոցառումներին, որոնց շարքում կարելի է առանձնացնել սահմանամերձ բնակավայրերում ապրող երեխաներին ուղղված «Ձմեռ պապի նվերներ» նախաձեռնությունը, ինչպես նաև արցախյան պատերազմներում զոհված հերոսների երեխաների համար կազմակերպված ամանորյա համերգ-միջոցառումը՝ «Արևիկ» մանկապատանեկան անսամբլի մասնակցությամբ:

Իսահակ Իսահակյանի անվան հետազոտական մրցույթ

Վերափոխվել է նաև ԿԲ առաջին նախագահ Իսահակ Աբասի Իսահակյանի անվան կրթաթոշակի մրցույթը, որն իրականացվում էր՝ սկսած 2003 թվականից՝ այս տարիների ընթացքում կրթաթոշակի արժանացնելով ավելի քան 100 ուսանողի: 2023 թ. փոփոխված ձևաչափի շրջանակում այն իրականացվեց որպես հետազոտական մրցույթ:

Մրցույթի ձևաչափի փոփոխության արդյունքում ընդլայնվել է մասնակիցների շրջանակը՝ հնարավորություն տալով մրցույթին մասնակցելու ոչ միայն ուսանողներին, այլև ոչ ուսանող հետազոտողներին: Բացի այդ, սահմանվել են մրցանակներ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերի համար:

Ծրագրի միջոցով նպատակ ունենք ստեղծելու հետազոտողների համայնք և մեր հետազոտական օրակարգի շուրջ հավաքելու համապատասխան հետաքրքրություններ ունեցող ուսումնասիրողներին, ում հետ Կենտրոնական բանկը կաշխատի զանազան հետազոտական նախաձեռնությունների և ծրագրերի շուրջ: Մենք նպատակ ունենք նաև ուսանողների շրջանում բարձրացնելու հետազոտության նկատմամբ հետաքրքրության աստիճանը և բացահայտելու նրանց ներուժը:



ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Աշխարհի այսչափ արագ զարգացմանը համապատասխանելու համար մենք կարևորում ենք Բանկում լավագույն տեխնոլոգիաների ներդրումը, դրանց գործարկումը և յուրացումը, որպեսզի կարողանանք լավագույն աշխատանքային միջավայր ապահովել մեր աշխատակիցների համար՝ ներկայիս մարտահրավերներին ժամանակին և ճիշտ դիմակայելու համար:

ՌԱ. Գործընթացների վերանայում և ավտոմատացում, էլեկտրոնային ստորագրությունների ներդրում, հիբրիդային աշխատանքի հնարավորություններ

ԿԲ որոշ գործընթացներ թվայնացվել և էլեկտրոնային ստորագրության ներքո ներդրվել են, սակայն ամբողջ Բանկի համար վերափոխման ծրագրի շրջանակներում իրականացվում է գործընթացների ավտոմատացման ծրագիր, որը կգործարկվի 2024 թ. ընթացքում:

ՌԱ. Որակյալ տվյալների հիման վրա, օգտագործելով նոր տեխնոլոգիական լուծումներ, կառավարչական որոշումների կայացում (data governance), ուսուցման էլեկտրոնային հարթակների ինտեգրում, ստեղծում և լայնատարած կիրառում

Ձգտելով ունենալ տվյալներով հիմնավորված որոշումներ և գործընթացներ՝ տարվա ընթացքում ստեղծվել է տվյալների կառավարման կենտրոն: Կենտրոնի նպատակն է մշակել տվյալների կառավարման կազմակերպչական մոդել, որը համընդհանուր կլինի: Այս բնագավառում տարվա ընթացքում հաստատվել են 5 հիմնական նախագծեր, որոնք թույլ կտան տվյալների կառավարումը հասցնել ընթացիկ գործունեության մակարդակի:

Նախագծերը վերաբերում են տվյալների կառավարման կարգավորմանը, սկզբունքներին և ռազմավարությանը, տվյալների ճարտարապետությանը, գույքագրմանն ու գիտելիքների բարելավմանը: Նախագծերի շրջանակում գույքագրվել են երեք դեպարտամենտի տվյալների հոսքերը, կազմվել և իրականացվել է ուսուցման կուրս 15 տվյալների կառավարիչների համար:



ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2023 թվականը կառավարման տեսանկյունից տրանսֆորմատիվ էր Կենտրոնական բանկի համար: Հիմնական շեշտադրումը եղել է Կենտրոնական բանկի վերափոխումը, որը, ընդհանուր առմամբ, ներառել է ԿԲ «ռազմավարության կառավարում» առաջնահերթությունը: Փոփոխություններն առնչվել են ԿԲ կառավարմանն ու մշակույթի վերափոխմանը: Այսօր սկսվել է վերափոխման ակտիվ գործընթացը, որն ուղղված է ռազմավարական արդյունքների իրականացմանը: Կենտրոնական բանկում ստեղծվել է Ռազմավարության և կառավարման դեպարտամենտ, որը պատասխանատու է ներքին հիմնական բարեփոխումների համար: Այն ներառում է ներքին գործընթացների բարելավման ամբողջ շրջանակը, այդ թվում՝ ռազմավարական, փաստաթղթաշրջանառության, նախագծերի իրականացման, որոշումների կայացման, գնումների:

ՌԱ. Ճկուն, մարտահրավերներին արագ արձագանքող և պարբերաբար վերանայվող կառուցվածք՝ հիմնված հետադարձ կապի և դինամիկ փոփոխվող միջավայրից եկող նոր մարտահրավերներին արձագանքելու անհրաժեշտության վրա: Այս կառուցվածքում առանցքային դեր կունենա բարձր մոտիվացված անհատը, այլ ոչ թե աշխատանքի նկարագրությունը:

Այս տրամաբանությամբ պայմանավորված՝ Բանկում տարանջատվել են հանրային

քաղաքականություն իրականացնող մարմինները՝ դեպարտամենտները և ներքին կառավարչական մարմինները՝ տնօրինությունները: Սա թույլ է տալիս մասնագիտական գործունեությունն ազատել այլ գործառույթների կառավարման բեռից՝ հնարավորություն տալով տնօրեններին կենտրոնանալու իրենց ոլորտների զարգացման վրա: Ճկուն և մարտահրավերներին արագ արձագանքող կառուցվածք ձևավորելու նպատակով տարվա ընթացքում կառուցվածքների փորձնական ներդրում ունեցանք երեք ինքնուրույն ստորաբաժանումներում: Տվյալների կառավարման և կարգավորման նպատակով, ինչպես նշեցինք, ստեղծվեց տվյալների կառավարման կենտրոնը, նախագծերի կառավարման ներքո կատարվեցին ներդեպարտամենտային աշխատանքներ. սրանք ճկուն կառուցվածք ունենալու կարևոր քայլերից էին:

ՌԱ. Ղեկավարների գործավարների ինստիտուտի վերափոխում՝ ներգրավելով բարձր արդյունավետություն ունեցող թիմային մասնագետների:

Շարունակելով կառուցվածքային բարեփոխումները՝ 2023 թվականին ամբողջությամբ վերափոխվել է նաև ղեկավարների գործավարների համակարգը. ստեղծվել է մասնագետ օգնականների համակարգ: Արդյունքում՝ բարձրացել է Կենտրոնական բանկի ներքին գործընթացների արդյունավետությունը:



ՌԱ. Որոշումների կայացման արդյունավետ ձևաչափեր՝ խորհրդի, Գործադիր կոմիտեի, հանձնաժողովների թիմային կոլեգիալ որոշումների կայացմանը նպաստող, ինչպես նաև խորհրդակցական մարմիններ՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ, վերահսկողություն՝ միջազգային դիտորդների կողմից:

ՀՀ կենտրոնական բանկում որոշումների կայացման գործընթացի բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակում մշակվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում կոմիտեների ձևավորման սկզբունքները և նիստերի կազմակերպման պահանջները» փաստաթուղթը, որով սահմանվել են միասնական սկզբունքներ և նիստերի նախապատրաստմանն ու անցկացմանը վերաբերող հստակ պահանջներ, որոնք կնպաստեն ոչ միայն աշխատանքների պատշաճ կազմակերպմանը, այլև կոմիտեների քարտուղարների պատասխանատվության աստիճանի բարձրացմանը, քարտուղարների Նոր ինստիտուտի դերի ընդգծմանը: Արդյունքում կունենանք պատասխանատվության ձևավորմանն ու պատվիրակմանը նպաստող գործընթացներ:

ՌԱ. Նախագծերի կառավարման մշակույթ:

Կառավարման վերափոխման տեսանկյունից կենտրոնական բանկը դեռևս 2022 թվականից ձեռնամուխ է եղել նախագծային մշակույթի ներդրման աշխատանքներին: Համապատասխան ստորաբաժանման ձևավորումից հետո 2023 թվականին ընդունվել է նախագծային գործընթացի կարգը, գույքագրվել են նախագծերը, սահմանվել, դասակարգվել

են գերակայությունները և կառավարման մեխանիզմները, որոշվել են նախագծային թիմի յուրաքանչյուր անդամի դերը և պարտականությունները նախագծի իրականացման ընթացքում, ինչն էլ ավելի դյուրին է դարձնում նախագծային թիմերի աշխատանքը և համագործակցությունը: Կարևորագույն քայլերից էր վերափոխման ծրագրի շրջանակներում նախագծային կոմիտեի (steering committee) ստեղծումը, որտեղ յուրաքանչյուր շաբաթ քննարկվում, հաստատվում և մշտադիտարկվում են նախագծերը: Նախագծային կոմիտեն ակտիվ աշխատում է նախագծերի կառավարումն ապահովելու ուղղությամբ: Գաղափարների հավաքագրման հարթակի միջոցով նախագծային կոմիտե են ներկայացվում մեր աշխատակիցների առաջադրած գաղափարները, որոնք, հավանության արժանանալու դեպքում, իրականացվում են:

Ժամանակակից նախագծային թիմերի արդյունավետ աշխատանքի համար կարևոր է, որ դրանք կազմված լինեն տարբեր ֆունկցիոնալ փորձառություն ունեցող անդամներից՝ նախագիծը միասնական իրականացնելու և ավարտին հասցնելու համար: Այդ նպատակով ԿԲ-ում ձևավորվեցին միջֆունկցիոնալ թիմեր (cross function teams)՝ մի շարք նախագծերի հետ կապված:

2023 թ. նախագծային մտածելակերպի զարգացման նպատակով JIRA և Confluence հարթակներով ներմուծվեցին ԿԲ ռազմավարությամբ ամրագրված նախագծեր, և նախագծային թիմերը սկսեցին օգտագործել հարթակները՝ համագործակցության նպատակով, ինչը համահունչ է ԿԲ թիմային աշխատելաճին:

ՌԱ. Միջնաժամկետ նախագծային բյուջեի ներդրում:

2022 թվականին հաստատվել և 2023-ին ամբողջությամբ գործարկվել է ԿԲ



բյուջետավորման քաղաքականությունը, որով ԿԲ-ում սկիզբ է դրվել նախագծային բյուջետավորմանը, որի համաձայն՝ Բանկի զարգացմանն ուղղված խոշոր նախագծերը փաստացի իրականացվում են՝ կիրառելով դրա սկզբունքները:

ՌԱ. Գնումների հաշվետու և թափանցիկ գործառույթ:

Կենտրոնական բանկի գնումների գործառույթը կարևոր դեր է խաղում բանկի արդյունավետ գործունեության ապահովման առումով: Գործընթացների արդիականացման և բարելավման ուղղությամբ ներդրված ջանքերը նպատակաուղղված են գնումների գործառույթի հաշվետու և թափանցիկ լինելուն, փողի դիմաց առավելագույն արժեքի ապահովմանը, շահագրգիռ կողմերի գոհունակության և ընդհանուր կատարողականի մակարդակի բարձրացմանը:

Այս նպատակով 2023 թվականին իրականացվել են մի շարք նախաձեռնություններ, որոնցից մի քանիսը ներկայացված են ստորև: Ներդրվել են մրցույթների մասնակիցների որակավորման առավել չափելի չափանիշներ, հրապարակվել են հայտերի գնահատման մեթոդաբանությունները, որոնք նպատակ ունեն ապահովելու հայտերի գնահատման արդարությունը և օբյեկտիվությունը, գին-որակ հարաբերակցությունը, խթանելու արտաքին գործընկերների մասնակցությունը և վստահությունը: Կիրառվում է սեփականության ընդհանուր արժեքի վերլուծության մեթոդը, ինչի արդյունքում որոշումները կայացվում են՝ հաշվի առնելով երկարաժամկետ ծախսերը, ապահովելով փողի դիմաց առավելագույն արժեքի ստացումը: Նախաձեռնվել է գնումների տվյալների բազայի ստեղծումը և համակենտրոնացումը, ինչը հնարավորություն է տալիս իրականացնելու համապարփակ վերլուծություններ և ներկայացնելու հաշվետվություններ:

ԳՆՈՒՄՆԵՐ



ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՔԱՆԱԿ

| Տեսակ՝ | 2022 | 2023 |
|----------------------|-----------|------------|
| Բաց մրցույթ | 16 | 41 |
| Երկփուլ բաց մրցույթ | 2 | 1 |
| Գնանշման հարցում | 27 | 8 |
| Հրապարակային մրցույթ | 19 | 34 |
| Փակ մրցույթ | 16 | 24 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 80 | 108 |

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

| Տեսակ՝ | 2022 | 2023 |
|----------------------|------------|------------|
| Բաց մրցույթ | 2.3 | 3.0 |
| Երկփուլ բաց մրցույթ | 4.0 | 6.0 |
| Գնանշման հարցում | 2.0 | 2.0 |
| Հրապարակային մրցույթ | 4.1 | 4.0 |
| Փակ մրցույթ | 1.8 | 2.0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 2.8 | 3.4 |





Տարեկան հաշվետվություն 2023

04

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ:
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Ներքին հաղորդակցում

Վերափոխման ծրագրի ներքո հատկապես կարևորվում է հաղորդակցումը՝ հիմնված հետադարձ կապի վրա, ուստի 2023 թվականին հատուկ ուշադրության է արժանացել ներքին հաղորդակցումը. որդեգրվել է ակտիվ հաղորդակցման քաղաքականությունը:

Նոր հարուստ գործիքակազմով և նոր մոտեցումներով շարունակվեց հաղորդակցումը, որի պարագայում կարևորում ենք մեր յուրաքանչյուր աշխատակցի ներգրավվածությունն ու տեղեկացվածությունը:

Հաղորդակցման արդյունավետության բարձրացման նպատակով տարվա ընթացքում կիրառվել են հետևյալ նոր գործիքները՝

- ԹԻՄՄԻՋ,
- «Հարց նախագահին» առցանց հանդիպումը,
- Ներդեպարտամենտային հավաքներ:

2023 թվականին տեղի ունեցավ երկու ամբողջական հավաք (ԹԻՄՄԻՋ – թիմային միջոցառում): ԹԻՄՄԻՋ-ի նպատակն է ԿԲ զարգացման ընդհանուր դրույթների վերաբերյալ ազատ քննարկման և փոխգործակցային (ինտերակտիվ) հաղորդակցման ապահովումը ԿԲ նախագահի, մյուս ղեկավարների ու անձնակազմի միջև: «ԹԻՄՄԻՋ» թիմային միջոցառումների ընթացքում ԿԲ նախագահի գլխավորությամբ և ղեկավարների մասնակցությամբ թիմին են ներկայացվել Բանկի վերափոխման ծրագիրը, դրա կարևոր նախագծերն ու առաջիկա հանձնառությունները՝ հնարավորություն տալով թիմի անդամներին իրենց դիտարկումները տրամադրելու և հարցերն ուղղելու իրականացվող փոփոխությունների վերաբերյալ:

Ներքին հաղորդակցման հաջորդ գործիքը «Հարց նախագահին» առցանց հանդիպումներն են, որոնց ընթացքում թիմի ցանկացած աշխատակից հնարավորություն ունի հարց ուղղելու ԿԲ նախագահին: Հարցերը նախօրոք հավաքագրվում և առցանց հանդիպման ընթացքում ստանում են իրենց պատասխանները:

2023 թվականին ներդրվեց նաև «Ներդեպարտամենտային հավաքների» ձևաչափը: Այս ձևաչափի ներքո յուրաքանչյուր ինքնուրույն ստորաբաժանման ղեկավար նախաձեռնում է հանդիպում-քննարկում, որի ընթացքում աշխատակիցներին է ներկայացնում ապագայի անելիքները, Բանկում կատարվող փոփոխությունները:

Արտաքին հաղորդակցում

Ինչպես նշվեց, վերափոխման ծրագրի ներքո որդեգրվել է ակտիվ հաղորդակցման մոտեցումը: Մեր նպատակն է պահպանել հասարակության և գործընկերների վստահությունը մեր նախասնած գործողությունների հետևողական կատարմամբ: Մենք հաղորդակցվում ենք հասարակության հետ որոշումների, ասուլիսների, հետազոտությունների, հաշվետվությունների շարունակական հրապարակումների և սոցիալական ցանցերում ակտիվ հաղորդակցման միջոցով:

Կենտրոնական բանկի նպատակներից մեկը իր բարձր հեղինակության ապահովումն է, որն իրագործվում է թափանցիկ հաղորդակցման միջոցով՝ դարձնելով մեր քաղաքականությունը հասարակության համար ավելի ընկալելի և պահպանելով շահառուների հետ հետադարձ կապ: Արտաքին հաղորդակցման գործիքների միջոցով մենք նաև տեղեկացնում ենք Կենտրոնական բանկի ընդունած որոշումների, դրանց հիմքերի ու տրամաբանության մասին,



ինչը քաղաքացիներին թույլ է տալիս պատկերացնել իրենց կենսամակարդակի վրա այդ որոշումների ազդեցությունը ու հետագա որոշումների կայացման հետևանքները:

ՌԱ. 33 ԿԲ իմիջի զարգացում և բրենդինգ

Կենտրոնական բանկում 2023 թվականին սկսեցին իրագործվել նախորդ տարիներին ներդրված հաղորդակցման ձևաչափի փոփոխությունները: Հասարակության հետ շփումը դարձավ ավելի թափանցիկ, անմիջական ու տեղեկատվական: Տարվա ընթացքում աշխատանքներ են իրականացվել ԿԲ իմիջի թարմացման ուղղությամբ, որի արդյունքում ԿԲ հրապարակումները սկսել են առանձնանալ մեկ միասնական ձեռագրով և տեղեկատվության հստակությամբ:

ՌԱ. ԿԲ ձեռքբերումների մասին հրապարակումներ

2023 թվականին ԿԲ-ի կողմից իրականացված արժանահիշատակ միջոցառումներից էր

հայկական դրամի 30-ամյակին նվիրված միջոցառումների շարքը:

Հայկական դրամի 30-ամյակի կապակցությամբ Կենտրոնական բանկը սեպտեմբերի 2-3-ը Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում «Վերաիմաստավորելով Բրետոն-Վուդսը» կազմակերպության և Հայաստանի բանկերի միության հետ համատեղ կազմակերպել էր «Հայկական դրամի 30-ամյակը. կողմնորոշվել նոր թվային դարաշրջանում՝ խորհելով անցյալի մասին» թեմայով բարձր մակարդակի գիտաժողովը: Երկօրյա գիտաժողովին հրավիրված էին միջազգային ֆինանսական կազմակերպությունների, կենտրոնական / ազգային բանկերի և ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներ:

2023 թվականին էականորեն ընդլայնվել է Կենտրոնական բանկի ներկայությունը սոցիալական ցանցերում, որտեղ մատչելի, տարբեր ձևաչափերով, այդ թվում՝ տեսանյութերով և այլ ինտերակտիվ նյութերի օգնությամբ բացահայտվել է ԿԲ-ի կողմից իրականացվող քաղաքականությունը:



Ասուլիսներ և միջոցառումներ

10

Հարցազրույցներ/ Ռեպորտաժներ

10/24

ԶԼՄ գրավոր հարցումներ

82

Միջազգային հեղինակավոր պարբերականների նյութեր/ հարցումներ

6

Արձագանքի արագություն

3.8

օր

Կայքով ստացված հարցումներ

347

Սոցցանցերով ստացված հարցումներ

163

Մամուլի հաղորդագրություններ

65





Տարեկան հաշվետվություն 2023

05

ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

- Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում
- Միջազգային պահուստներ
- Վիճակագրություն
- Փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքար

ԱՐԺՈՒՅԹԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ, ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում կանխիկ դրամաշրջանառության անընդհատության ապահովման նպատակով սահմանվել են նոր պահանջներ առևտրային բանկերի դրամարկղային կենտրոնների տեխնիկական հագեցվածության վերաբերյալ: 2023 թ. մարտի 31-ից սկսած՝ Կենտրոնական բանկն առևտրային բանկերի դրամարկղային սպասարկումն իրականացրել է միայն առևտրային բանկերի դրամարկղային կենտրոնների միջոցով:

Փոփոխության արդյունքում ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը վերազինվել են դրամանիշեր հաշվող և տեսակավորող ժամանակակից սարքավորումներով, որոնք

ընդգրկված են Եվրոպական կենտրոնական բանկի կողմից հրապարակված համապատասխան թեստավորում անցած սարքավորումների ցանկում:

Նշված փոփոխությունների շնորհիվ առևտրային բանկերն իրենց դրամարկղային կենտրոններում շահագործվող մեքենաների միջոցով տեսակավորված կանխիկ դրամով ապահովել են հաճախորդների դրամարկղային սպասարկման անընդհատությունը: Արդյունքում՝ կրճատվել են առևտրային բանկերից Կենտրոնական բանկ և հակառակ ուղղությամբ կանխիկ դրամի հանդիպակաց փոխադրումների ծավալները:

Գծապատկեր 2

Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառությունը 2023 թվականին



Երևանի դրամարկղ
95.6%
Դիլիջանի ՏԳԿ

Սիսիանի ՏԳԿ
2.5%

Կենտրոնական բանկ
1.9%

Կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամի տեսակային կառուցվածքում փոփոխություններ

| 1,000 ₺ | 2,000 ₺ | 5,000 ₺ | 10,000 ₺ | 20,000 ₺ | 50,000 ₺ |
|---------|----------|---------|----------|-----------------|----------|
| ▲ +2,9% | ▼ -30.3% | ▲ +4,0% | ▲ +28,1% | ▲ +13.2% | ▲ +37,9% |
| | | | | տեսակարար կշիռը | |
| | | | | 71.5% | |

Շրջանառության մեջ մետաղադրամների զանգվածը


+2.68 մլրդ. ₺



| | |
|----------|-----------------|
| 200 ₺ | տեսակարար կշիռը |
| ▲ +7.4% | 20.3% |
| 500 ₺ | տեսակարար կշիռը |
| ▲ +12.0% | 52.5% |

Գծապատկեր 3

Թղթադրամների և մետաղադրամների տեսակային կառուցվածքը 2022-2023 թթ. վերջի դրությամբ /ըստ քանակի՝ մլն



Տարվա ընթացքում Կենտրոնական բանկն ամբողջությամբ ապահովել է տնտեսության մեջ կանխիկ դրամի նկատմամբ ձևավորված պահանջը՝ անհրաժեշտ ծավալով, անվանական արժեքով, պահանջված որակով և սահմանված ժամկետներում:

Դրամանենգության դեմ պայքարի շրջանակներում Կենտրոնական բանկը շարունակել է համագործակցությունն իրավապահ մարմինների հետ: Կենտրոնական բանկում իրականացվել

են կեղծ դրամանիշերի հայտնաբերման և փորձաքննության աշխատանքներ, որոնց արդյունքներով իրավապահ մարմիններին տրամադրվել են կեղծման եղանակների, կատարման ձևերի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ:

Հուշադրամների «Դրամագետ» վաճառատարի միջոցով Կենտրոնական բանկը շարունակում է իրացնել հուշադրամներ և այլ դրամագիտական արժեքներ, որոնք արտացոլում են հայոց պատմությունը և մշակույթը:

Բրուքլինգսի ինստիտուտի ավագ գիտաշխատող ԺԱՆ ՄԱՐԻԱ ՄԻԼԵՂԻ-ՖԵՐԵՏԻ.

«Ես գիտեմ, որ ջանքեր են գործադրվում շատ արդիական և, պետք է ասել, բազմաշերտ համակարգ կիրառելու ուղղությամբ, և սա բավականին տպավորիչ եմ համարում մի երկրի համար, որի արժույթն ընդամենը 30 տարեկան է: Կարծում եմ, որ զրոյից սկսելու առավելություններից մեկն այն է, որ համակարգ նախագծելիս կարելի է վերցնել արդեն եղածից լավագույնը: Եվ ես շատ երիտասարդ տաղանդների եմ տեսնում այստեղ՝ ՀՀ կենտրոնական բանկում, շատերին, որոնք վերապատրաստվել են արտերկրում: Դուք ունեք երկիր՝ շատ մեծ սփյուռքով, և դա ձեզ շատ ավելի բաց է դարձնում դրսի մարդկանց համար, քան շատ այլ երկրների դեպքում է, որոնք շատ ավելի փակ են: Կարծում եմ, որ սա կարող է հսկայական օգուտներ ապահովել»:

Հայաստանի ամերիկյան համալսարանի Բիզնեսի և տնտեսագիտության քոլեջի դեկան, Նախկին փոխվարչապետ ՎԱՉԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ.

«Կենտրոնական բանկը կարևորագույն կառույց է, որը միշտ աշխատում է պրոֆեսիոնալ կերպով թե՛ գների, թե՛ ֆինանսական կայունության ապահովման տեսակետից: Կցանկանալի, որ նույն եռանդով շարունակեն նաև ապագայում»:



ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ



ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԻ 30 ՏԱՐԻՆ

2023 թ. նոյեմբերի 22-ը նշանավորվել է հայկական դրամի ներդրման 30-րդ հորեյանական տարեդարձով: Պետական մեծ կարևորություն ներկայացնող այս իրադարձության առիթով ՀՀ կենտրոնական բանկը, բացի «Ազգային դրամի 30 տարին» հուշադրամից, թողարկել է նաև շրջանառու հիշատակային մետաղադրամների շարք՝ բաղկացած 6 տեսակի մետաղադրամներից:



ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆՈՅԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿ

ՀՀ կենտրոնական բանկը, հայկական կինոարվեստն արժևորելով որպես հայ ժողովրդի մշակութային կենսական բաղադրիչ, թողարկել է հայկական կինոյի հիմնադրման 100-ամյակին նվիրված հուշադրամ:



«ԱՐԱՐԱՏ-73»-Ի ՈՍԿԵ ԴՈՒԲԼԻ 50-ԱՄՅԱԿ

Այդ հորեյանի կապակցությամբ ՀՀ կենտրոնական բանկը հյուրընկալել և մեծարել է «Արարատ-73»-ի հանրահայտ ֆուտբոլիստներ Էդուարդ Մարկարովին, Սերգեյ Պողոսյանին, Սերգեյ Բոնդարենկոյին, Նորայր Մետրոպոսյանին և Արկադի Հարությունյանին:



ՀՐԱՆՏ ՇԱՀԻՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿ



ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿ



ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴՐԱՄ

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է «Նոյյան տապան» արծաթե և ոսկե ներդրումային դրամների թողարկման և միջազգային ներդրումային շուկաներում դրանց հրացման գործընթացը:

«Նոյյան տապան» արծաթ

«Նոյյան տապան» ոսկի



հրացվել է

1.416.228

հատ

1 ունցիա քաշով

51%

հրացվել է

23.766

հատ

1 գրամ քաշով

14.751

հատ

ՄԻՋԱՐԳԱՅԻՆ ՊԱՐՈՒՄՏԵՐ

ՀՀ միջազգային պահուստները


3,608 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ

2023 թվականին

-504 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐՈՎ

Գծապատկեր 4

ՀՀ միջազգային պահուստների մակարդակը



ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2023 թվականին ՀՀ ԿԲ-ն ապահովել է ժամանակին և արժանահավատ տեղեկատվության հրապարակումը¹, ինչպես նաև աշխատել է հրապարակվող տեղեկատվության շրջանակների ընդլայնման, Նոր ցուցանիշների հաշվարկման և հասանելիության ապահովման, հավաքագրվող վիճակագրության մշակման և կազմման գործընթացների համընդհանուր ավտոմատացման, վիճակագրական տվյալների որակի բարելավման, հավաքագրվող վիճակագրության մեթոդաբանության կատարելագործման ու միջազգային չափորոշիչներին դրանց համապատասխանեցման ուղղությամբ:

Նոր ցուցանիշների հրապարակումը նպատակ է հետապնդում հասարակությանը տրամադրել ՀՀ տնտեսության վերաբերյալ ավելի համապարփակ տեղեկատվություն, որը ներառում է դրամավարկային, ֆինանսական հատվածի և ֆինանսական կայունության վիճակագրության, ինչպես նաև արտաքին և իրական հատվածների վիճակագրության մասով մի շարք Նոր ցուցանիշներ: Մասնավորապես՝ առաջին անգամ հրապարակվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ վարկատուների վարկային պայմանների² և ՀՀ տնային տնտեսությունների գնաճային ընկալումների ու սպասումների հարցումների արդյունքները³: ՀՀ կենտրոնական բանկը

հրապարակել է նաև ՀՀ արտաքին պարտքի մայր գումարի սպասարկման ժամանակացույցը՝ ըստ ապագա մարումների ժամկետների և տնտեսության հատվածների: Ապագա մարումների վիճակագրությունը հնարավորություն կտա հետազոտելու այս պահին ՀՀ սուբյեկտների կողմից ներգրավված արտաքին պարտավորությունների՝ ապագայում պլանավորվող մարումների հոսքերը⁴:

Ավելացվել են ՀՀ ֆինանսական կազմակերպությունների կողմից տրված վարկերի և ներգրավված ավանդների մասով հրապարակվող ցուցանիշների տեսակները: Մասնավորապես՝ ՀՀ բանկերի մասով հրապարակվել են վիճակագրական տվյալներ ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի վերաբերյալ, ներկայացվել են վարկային պորտֆելի բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի, վարկային և ավանդային պորտֆելների տոկոսադրույքները, ընդլայնվել է լիզինգային և ֆակտորինգային գործառնությունների վերաբերյալ հրապարակվող վիճակագրությունը: Տարբեր օգտագործողների պահանջների հիման վրա ընդլայնվել է ապահովագրական ընկերությունների գործառնություններին վերաբերող վիճակագրությունը. ներկայացվել են գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ ապահովագրության

1 ՀՀ կենտրոնական բանկը վիճակագրական տվյալները հրապարակում է ՀՀ ԿԲ կայքում՝ «Վիճակագրություն» և այլ բաժիններում (<https://www.cba.am>):
 2 Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/statssbankslending.aspx>
 3 Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/statssipehouseholds.aspx>
 4 Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>



դասերի՝ մանրամասնելով որոշ ֆինանսական ցուցանիշներ⁵:

2023 թվականին ավարտվեց և ամփոփվեց 2022 թվականի դեկտեմբերին նախաձեռնած՝ տնային տնտեսությունների շրջանում լայնածավալ հարցումը՝ միտված դրամական փոխանցումների գնահատման ճշգրտության մակարդակի բարձրացմանը: Հարցման արդյունքների հիման վրա վերանայվեցին վճարային հաշվեկշռում դրամական փոխանցումների վիճակագրության կազմման ժամանակ գործածվող համամասնությունները՝ դրանով իսկ նպաստելով վիճակագրության արժանահավատության աստիճանի աճին: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, նպատակ ունենալով մշտապես բարձրացնելու ՀՀ վճարային հաշվեկշռի արժանահավատության ու ընդգրկվածության աստիճանը, նվազեցնելու սխալների ու բացթողումների չափը, ինչպես նաև առավել ճշգրիտ գնահատելու արտերկրից դեպի ՀՀ իրականացվող դրամական հոսքերը, 2023 թվականին իրականացրել է հարցում ոչ առևտրային կազմակերպությունների շրջանում՝ արտաքին աշխարհից ստացված ֆինանսական միջոցների վերաբերյալ: Հարցման արդյունքների հիման վրա ճշգրտումներ են կատարվել 2017-2022 թվականների վճարային հաշվեկշռի երկրորդային եկամուտների և կապիտալ տրանսֆերտների հոդվածներում: Այս հարցումը ևս մեկ քայլ էր ԿԲ-ի կողմից հրապարակվող վիճակագրական ցուցանիշների միջոցով ֆինանսական հոսքերի իրական պատկերի հնարավորինս ճշգրիտ արտացոլման ուղղությամբ:

2023 թվականին նախաձեռնվել է առևտրային բանկերից հավաքագրվող թիվ 24 հաշվետվական ձևի փոփոխության

իրականացում, որի արդյունքում հնարավոր կլինի երկրի արտաքին հոսքերի նպատակների վերաբերյալ առավել մանրամասն տվյալների ստացումը: Հաշվետվության փոփոխության աշխատանքներն ընթացքի մեջ են և կշարունակվեն 2024 թվականի ընթացքում:

2023 թվականից ԿԲ-ն սկսել է ՀՀ տնային տնտեսությունների գնաճային ընկալումների և սպասումների գնահատմանն ուղղված ընտրանքային հետազոտության արդյունքների հրապարակումը⁶: Հետազոտության նպատակն է.

- գնահատել ՀՀ տնային տնտեսությունների գնաճի ընթացիկ մակարդակի ընկալումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ,
- գնահատել գնաճի սպասումները գալիք 12 ամիսների համար,
- ստանալ գնահատականներ տնային տնտեսությունների՝ գնաճային սպասումների հիման վրա նախատեսվող սպառողական վարքագծի վերաբերյալ:

ՀՀ ԿԲ, ԱՄՀ փորձագետների, ՀՀ ՎԿ և Կադաստրի պետական կոմիտեի մասնագետների սերտ համագործակցության արդյունքում ՀՀ-ում ներդրվել է բնակարանների գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանություն, որը հիմնված է միջազգային առաջատար լավագույն փորձի և մեթոդաբանական դրույթների վրա: 2024 թ. արդեն ՀՀ ԿԲ-ն նախաձեռնել է ինչպես ՀՀ մարզերի, այնպես էլ երևան քաղաքի առանձին գոտիների վերաբերյալ ՀՀ բնակարանների գների ինդեքսի հաշվարկումն ու հրապարակումը:

5 Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>

6 Տե՛ս ՀՀ ԿԲ կայքի «Վիճակագրություն» բաժնի «Վիճակագրական հետազոտություններ» ենթաբաժինը:



ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Ռազմավարական վերլուծություններ

Իրականացվել են հետևյալ ռազմավարական վերլուծությունները.

- Վիրտուալ ակտիվներին առնչվող գործառնություններում ՀՀ ֆինանսական հաստատությունների ներգրավվածության և վիրտուալ ակտիվների՝ ՀՀ-ում գոյություն ունեցող շուկայի վերաբերյալ վերլուծություն,
- Քարտային զեղծարարության արդյունքում ստացված միջոցների լվացման միտումների վերաբերյալ վերլուծություն,
- Իրավաբանական անձանց ՓԼ/ԱՖ խոցելիության վերաբերյալ ուսումնասիրություն,
- Բանկերի գործունեության բարձր ռիսկային ոլորտների, այդ թվում՝ ոչ ռեզիդենտ հաճախորդներին և կանխիկով գործառնություններին առնչվող ՓԼ/ԱՖ ռիսկերի ուսումնասիրություն,
- Դրամական փոխանցումների հետ կապված պարտականությունների կատարման վերաբերյալ վերլուծություն,
- Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ներկայացված ԿԳՀ-ների որակի վերաբերյալ ուսումնասիրություն:

Իրականացված վերլուծությունների արդյունքները համապատասխան եզրահանգումներով տրամադրվել են շահագրգիռ կողմերին, մասնավորապես՝ հաշվետվություն տրամադրող անձանց՝ բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու, ինչպես նաև վերահսկող և իրավապահ մարմիններին՝ արդյունավետ և համաչափ գործողություններ իրականացնելու նպատակով:

Համագործակցություն

ՖԴԿ-ի և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված ՀՀ գերատեսչությունների միջև գործող «Ֆինանսական հետախուզության տվյալների փոխանակման հարթակ»-ի ներքո ներդրվել է ՀՀ գերատեսչությունների կողմից Կենտրոնական բանկին տրամադրվող ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքման նոր համակարգ:

ՖԴԿ-ի ներկայացուցիչը վերընտրվել է Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի փոխնախագահի պաշտոնում՝ երկու տարի պաշտոնավարման ժամկետով:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտի վերաբերյալ մանրամասները տե՛ս ՖԴԿ-ի 2023թ. գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունում:¹

1 <https://www.cba.am/am/SitePages/fmcpublishannual.aspx>



ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Այցելուներ
2023 թվական

14 159

11 533

2022 թվականի համեմատ
+15.29%

2 626



ուսանողներ ու աշակերտներ
75,5%

ուսուցիչներ
8,7%

անհատներ
15,6%

ուսումնական հաստատություններից այցելուներ
69%

հյուրեր
30,9%

«ՄԵԿ ՕՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ

19

գինձառայող/սան և դասախոս



ԴԻԼԻԳԱՆ

72

գինձառայող/սան և դասախոս



«ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԳԻՇԵՐ» ԵՎ «ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ» ՀԱՄԱԵՎՐՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1417
անհատ

ԱՐՏԱԳՆԱ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ


867
այցելու

ԿԱՅՔԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՔԱՆԱԿ

34 200
օգտատեր



ԱՐՏԱԳՆԱ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ





Տարեկան հաշվետվություն 2023

06

ՀՀ ԿԲ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

| | |
|--|---|
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն..... | 1 |
| Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն..... | 2 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն..... | 3 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն..... | 4 |

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

| | |
|--|----|
| 1. Ընդհանուր տեղեկատվություն..... | 5 |
| 2. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփում..... | 6 |
| 3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ..... | 15 |
| 4. Տոկոսային եկամուտ..... | 16 |
| 5. Տոկոսային ծախս..... | 16 |
| 6. Չուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից..... | 16 |
| 7. Չուտ օգուտ/(վնաս) ածանցյալ գործիքներից..... | 17 |
| 8. Չուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից..... | 17 |
| 9. Այլ եկամուտ..... | 17 |
| 10. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր..... | 17 |
| 11. Այլ ծախսեր..... | 18 |
| 12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ..... | 18 |
| 13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ..... | 22 |
| 14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ..... | 23 |
| 15. Ներդրումային արժեթղթեր..... | 23 |
| 16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ..... | 28 |
| 17. Հիմնական միջոցներ..... | 29 |
| 18. Ոչ նյութական ակտիվներ..... | 30 |
| 19. Այլ ակտիվներ տեղական արժույթով..... | 30 |
| 20. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ..... | 31 |
| 21. Այլ փոխառություններ..... | 31 |
| 22. Այլ պարտավորություններ տեղական արժույթով..... | 32 |
| 23. Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության Կառավարության հանդեպ..... | 32 |
| 24. Թողարկված պարտատոմսեր..... | 32 |
| 25. Կապիտալի կառավարում..... | 33 |
| 26. Պայմանական պարտավորություններ..... | 33 |
| 27. Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն..... | 34 |
| 28. Գործարքներ կապակցված կողմերի հետ..... | 36 |
| 29. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ..... | 38 |
| 30. Ֆինանսական գործիքների իրական արժեք..... | 38 |
| 31. Ռիսկերի կառավարում..... | 41 |
| 32. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն..... | 54 |
| 33. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն..... | 56 |



«Զեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
 Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
 Վ. Սարգսյան փ. 26/1
 «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
 Հեռախոս + 374 (10) 595 999
 Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի («Բանկ») և վերջինիս դուստր կազմակերպությունների («Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունները՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում հսկի համախմբված ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների (ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք հսկից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի միջազգային կանոնադրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնադրք) և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի Էթիկայի պահանջների, և կատարել ենք Էթիկայի պահանջման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնադրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է իսմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի խումբը լուծարելու կամ իսմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են իսմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, գերծ են Էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի Էական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են Էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների Էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած Էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով Էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե իսմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է Էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել իսմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է Էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել իսմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:



Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Անկախ աուդիտորական եզրակացություն

Էջ 3

- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Իրինա Վևորայան
Ղեկավար գործընկեր, «ԲԵՅ-ՓԻ-ԷՄ-ԶԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի տնօրեն

KPMG Armenia

«ԲԵՅ-ՓԻ-ԷՄ-ԶԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ
29 մարտի 2024թ.



**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

| Հազար ՀՀ դրամ | Ծնթգ. | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|---|--------|-------------------------|-------------------------|
| Տոկոսային եկամուտ | 4 | 92,439,735 | 71,322,598 |
| Տոկոսային ծախս | 5 | (65,970,959) | (46,753,889) |
| Զուտ տոկոսային եկամուտ | | 26,468,776 | 24,568,709 |
| Պարտքային կորուստների գծով ծախս | 12, 15 | (17,762,863) | (637,181) |
| Զուտ տոկոսային եկամուտ պարտքային կորուստների գծով պահուստից հետո | | 8,705,913 | 23,931,528 |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | | 63,588 | 742,288 |
| Միջնորդավճարների գծով ծախս | | (843,356) | (1,607,351) |
| Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից | 6 | 30,907,114 | (88,974,762) |
| Զուտ օգուտ/(վնաս) ածանցյալ գործիքներից | 7 | 988,296 | (1,568,357) |
| Զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից | 8 | 32,034,979 | (3,237,206) |
| Այլ եկամուտ | 9 | 7,188,375 | 6,053,410 |
| Ֆինանսական գործիքների սկզբնական ձանաչումից կորուստներ | | (936,557) | (62,733,413) |
| Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր | 10 | (1,011,350) | (1,895,601) |
| Այլ ծախսեր | 11 | (22,102,825) | (17,201,660) |
| Շահույթ/(վնաս) մինչև հարկումը | | 54,994,177 | (146,491,124) |
| Շահութահարկի գծով ծախս | | (2,385,159) | (2,351,700) |
| Հաշվետու տարվա շահույթ/(վնաս) | | 52,609,018 | (148,842,824) |
| Շահույթ/(վնասը) վերագրելի է՝ | | | |
| Բանկի սեփականատիրոջը | | 52,043,339 | (149,219,044) |
| Չվերահսկող բաժնեմասին | | 565,679 | 376,220 |
| Այլ համապարփակ եկամուտ | | | |
| <i>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող հոդվածներ</i> | | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից զուտ չիրացված օգուտ/(վնաս) | | 392,704 | (855,097) |
| Անոցիացված կազմակերպության այլ համապարփակ եկամուտ/(վնասի) բաժնեմաս | | 592,893 | (369,973) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստներում փոփոխություններ | 15 | (13,739) | 3,459 |
| Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ զուտ եկամուտ/(վնաս) | | 971,858 | (1,221,611) |
| <i>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ</i> | | | |
| Անոցիացված կազմակերպության այլ համապարփակ եկամտի բաժնեմաս | | - | 1,047,176 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն | | 310,943 | (302,844) |
| Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ | | 310,943 | 744,332 |
| Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ/(վնաս) | | 1,282,801 | (477,279) |
| Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ/(վնաս) | | 53,891,819 | (149,320,103) |
| Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ/(վնասը) վերագրելի է՝ | | | |
| Բանկի սեփականատիրոջը | | 53,309,167 | (149,676,703) |
| Չվերահսկող բաժնեմասին | | 582,652 | 356,600 |

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. մարտի 29-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից և ստորագրվել՝

Արթուր Առաքելյան

Անուշ Գրիգորյան

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | | <i>31 դեկտեմբերի 2023թ.</i> | <i>31 դեկտեմբերի 2022թ.</i> |
|--|------|---------------------------------|---------------------------------|
| Ակտիվներ | | | |
| Ակտիվներ արտարժույթով | | | |
| Կանխիկ դրամ | | 14,617,804 | 18,056,895 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | 12.1 | 690,018,686 | 932,129,803 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 13 | 759,879,163 | 677,302,858 |
| Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | 15.1 | 4,837,548 | 2,826,144 |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ | 15.4 | 3,478,137 | 1,432,570 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 16 | 70,151,013 | 69,884,514 |
| Այլ ակտիվներ | | 823,578 | 383,977 |
| Ընդամենը ակտիվներ արտարժույթով | | 1,543,805,929 | 1,702,016,761 |
| Ակտիվներ տեղական արժույթով | | | |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ | 12.2 | 855,626,560 | 724,565,781 |
| Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | 15.2 | 171,728,588 | 63,270,394 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 15.3 | 34,533,590 | 33,420,114 |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ | 15.5 | 16,328,176 | - |
| Հիմնական միջոցներ | 17 | 60,170,333 | 61,985,522 |
| Ոչ նյութական ակտիվներ | 18 | 2,736,615 | 2,962,153 |
| Այլ ակտիվներ | 19 | 9,617,866 | 9,564,911 |
| Ընդամենը ակտիվներ տեղական արժույթով | | 1,150,741,728 | 895,768,875 |
| Ընդամենը ակտիվներ | | 2,694,547,657 | 2,597,785,636 |
| Պարտավորություններ | | | |
| Պարտավորություններ արտարժույթով | | | |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 20 | 497,600,553 | 763,578,548 |
| Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ | 23 | 955,226 | 1,600,968 |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 14 | 190,283 | 1,168,708 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 16 | 216,245,204 | 218,099,731 |
| Այլ փոխառություններ | 21 | 204,803,977 | 189,984,444 |
| Այլ պարտավորություններ | | 162,741 | 188,491 |
| Ընդամենը պարտավորություններ արտարժույթով | | 919,957,984 | 1,174,620,890 |
| Պարտավորություններ տեղական արժույթով | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | | 911,454,812 | 803,093,792 |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 20 | 431,966,944 | 368,710,450 |
| Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ | 23 | 391,128,296 | 380,288,128 |
| Թողարկված պարտատոմսեր | 24 | 22,639,296 | 15,477,213 |
| Այլ պարտավորություններ | 22 | 3,523,865 | 3,669,054 |
| Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով | | 1,760,713,213 | 1,571,238,637 |
| Ընդամենը պարտավորություններ | | 2,680,671,197 | 2,745,859,527 |
| Սեփական կապիտալ | | | |
| Թողարկված կապիտալ | 25 | 100,000 | 100,000 |
| Գլխավոր պահուստ | | 50,397,515 | 39,988,847 |
| Կառավարության կողմից թողարկված մուրհակ | 25 | 162,437,256 | 54,395,224 |
| Այլ պահուստներ | 25 | 2,575,912 | 1,310,084 |
| Կուտակված վնաս | | (203,736,187) | (245,370,858) |
| Բանկի սեփականատիրոջը վերագրելի զուտ ակտիվներ | | 11,774,496 | (149,576,703) |
| Չվերահսկող բաժնեմաս | | 2,101,964 | 1,502,812 |
| Ընդամենը սեփական կապիտալ | | 13,876,460 | (148,073,891) |
| Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ | | 2,694,547,657 | 2,597,785,636 |

1-33 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

| Հազար ՀՀ դրամ | <i>Բանկի սեփականատիրոջը վերագրելի</i> | | | | | | | <i>Ընդամենը սեփական կապիտալ</i> |
|---|---------------------------------------|------------------------|--|-----------------------|-----------------------|----------------------|----------------------------|---------------------------------|
| | <i>Թողարկված կապիտալ</i> | <i>Գլխավոր պահուստ</i> | <i>ՀՀ կառավարության կողմից թողարկված մուրհակ</i> | <i>Այլ պահուստներ</i> | <i>Կուտակված վնաս</i> | <i>Ընդամենը</i> | <i>Չվերահսկող բաժնեմաս</i> | |
| Մնացորդը 2022թ. հունվարի 1-ին | 100,000 | 39,988,847 | 15,776,447 | 1,767,743 | (96,151,814) | (38,518,777) | 1,146,212 | (37,372,565) |
| Ընդամենը համապարփակ վնաս | | | | | | | | |
| Հաշվետու տարվա վնաս | - | - | - | - | (149,219,044) | (149,219,044) | 376,220 | (148,842,824) |
| Այլ համապարփակ վնաս | - | - | - | (457,659) | - | (457,659) | (19,620) | (477,279) |
| Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս | - | - | - | (457,659) | (149,219,044) | (149,676,703) | 356,600 | (149,320,103) |
| ՀՀ կառավարության կողմից մուրհակի թողարկում (Ծնթգ. 25) | - | - | 38,618,777 | - | - | 38,618,777 | - | 38,618,777 |
| Ընդամենը գործառնություններ Բանկի հիմնադրի հետ | - | - | 38,618,777 | - | - | 38,618,777 | - | 38,618,777 |
| Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ին | 100,000 | 39,988,847 | 54,395,224 | 1,310,084 | (245,370,858) | (149,576,703) | 1,502,812 | (148,073,891) |
| Ընդամենը համապարփակ եկամուտ | | | | | | | | |
| Հաշվետու տարվա շահույթ | - | - | - | - | 52,043,339 | 52,043,339 | 565,679 | 52,609,018 |
| Այլ համապարփակ եկամուտ | - | - | - | 1,265,828 | - | 1,265,828 | 16,973 | 1,282,801 |
| Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ | - | - | - | 1,265,828 | 52,043,339 | 53,309,167 | 582,652 | 53,891,819 |
| ՀՀ կառավարության կողմից մուրհակի թողարկում (Ծնթգ. 25) | - | - | 149,676,703 | - | - | 149,676,703 | - | 149,676,703 |
| 2023թ. շահույթից բաշխման ենթակա մասնաբաժին կառավարության կողմից թողարկված մուրհակի հետ հաշվանցման եղանակով (15.2; 25) | - | - | (41,634,671) | - | - | (41,634,671) | - | (41,634,671) |
| Մասհանումներ 2023թ-ի շահույթից գլխավոր պահուստին | - | 10,408,668 | - | - | (10,408,668) | - | - | - |
| Ընդամենը գործառնություններ Բանկի հիմնադրի հետ | - | 10,408,668 | 108,042,032 | - | (10,408,668) | 108,042,032 | - | 108,042,032 |
| Դուստր կազմակերպության բաժնեմասի նվազում | - | - | - | - | - | - | 16,500 | 16,500 |
| Ընդամենը ներդրման բաժնեմասի նվազեցում | - | - | - | - | - | - | 16,500 | 16,500 |
| Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ին | 100,000 | 50,397,515 | 162,437,256 | 2,575,912 | (203,736,187) | 11,774,496 | 2,101,964 | 13,876,460 |

| Հազար ՀՀ դրամ | Ծնթ. | 2023թ. | 2022թ. |
|---|------------|----------------------|----------------------|
| Պրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից | | | |
| Շահույթ/(վնաս) մինչև հարկումը | | 54,994,177 | (146,491,124) |
| <i>Ճշգրտումներ՝ հաշվետու տարվա (վնասը)/շահույթը</i> | | | |
| <i>գուտ դրամական հոսքերին համաձայնեցնելու նպատակով</i> | | | |
| Մաշվածություն և անդրտիզացիա | 11, 17, 18 | 3,124,710 | 2,690,445 |
| Ոչ նյութական ակտիվների արժեզրկում | 11, 18 | 375,786 | - |
| Հիմնական միջոցների օտարումից և դուրսգրումից վնաս | | 8,697 | 4,220 |
| Տոկոսային եկամուտ | | (92,439,735) | (71,322,598) |
| Տոկոսային ծախսեր | | 65,970,959 | 46,753,889 |
| Չուտ օգուտ/(վնաս) արտարժույթի վերագնահատումից | 6 | (28,805,603) | 98,408,713 |
| Չուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից | | (32,034,979) | 9,128,026 |
| Վնաս ֆինանսական գործիքների սկզբնական ձանաչումից | | 936,557 | 62,733,413 |
| Պարտքային կորուստների գծով ծախս | 12, 15 | 17,762,863 | 637,182 |
| Եկամուտ/(վնաս) ասոցիացված կազմակերպությունում ներդրումներից | 15.3 | (390,437) | 356,692 |
| Բաժնեմասնակցության օտարում | 9 | (276,178) | (498,765) |
| Ստացված տոկոսներ | | 86,153,476 | 67,755,508 |
| Վճարված տոկոսներ | | (65,343,486) | (45,202,967) |
| Վճարված շահութահարկ | | (2,336,425) | (2,738,331) |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները | | 7,700,382 | 22,214,303 |
| Գործառնական ակտիվների գուտ (աճ)/նվազում | | | |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով | | (526,538) | 5,540,803 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ և ածանցյալ ֆինանսական գործիքներ | | (24,036,981) | (95,084,290) |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով | | (157,235,718) | 122,303,165 |
| Այլ ակտիվներ | | 877,130 | (1,070,348) |
| Գործառնական պարտավորությունների գուտ աճ/(նվազում) | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | | 108,361,021 | 55,928,038 |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | | (219,691,007) | 185,818,972 |
| Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ | | 12,525,367 | (26,813,667) |
| Այլ պարտավորություններ | | 419,363 | (866,623) |
| Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված) գործառնական գործունեությունում/ստացված գործառնական գործունեությունից | | (271,606,981) | 267,970,353 |
| Պրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (3,030,874) | (4,924,796) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | | 7,285 | 17,301 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող և անդրտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ձեռքբերում | | (3,549,139) | (1,411,103) |
| Բաժնեմասնակցության օտարում | | - | 498,765 |
| Դուստր կազմակերպության բաժնեմասի նվազում | | 16,500 | - |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | | - | (32,000,582) |
| Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում | | (6,556,228) | (37,820,415) |
| Պրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից | | | |
| Ստացված վարկեր | | 20,921,532 | 85,612,170 |
| Մարված վարկեր | | (25,890,245) | (30,489,774) |
| Թողարկված պարտատոմսերից մուտքեր | | 9,963,247 | 9,205,199 |
| Թողարկված պարտատոմսերի մարում | | (3,000,000) | (3,500,000) |
| Վճարումներ վարձակալության գծով | | (121,282) | (105,804) |
| Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված ֆինանսավորման գործունեությունից | | 1,873,252 | 60,721,791 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 30,570,998 | (155,372,254) |
| Պրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ (նվազում)/աճ | | (245,718,959) | 135,499,475 |
| Պրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին | 29 | 946,018,125 | 810,518,650 |
| Պրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին | 29 | 700,299,166 | 946,018,125 |

1-33 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1. Ընդհանուր տեղեկատվություն

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ) համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «Բանկ») կամ «Կենտրոնական բանկ») և վերջինիս դուստր կազմակերպությունների (այսուհետ միասին՝ «խումբ») գործունեության համար:

Բանկն իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքին (այսուհետ՝ «Օրենք») և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին համապատասխան:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան փող., 6 շենք: Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը 2023 թվականի ընթացքում կազմել է 767 (2022թ-ին՝ 753):

Բանկը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Բանկի գործունեության ֆինանսական արդյունքները, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի կառուցվածքը սահմանվում են Բանկի գործառնություններով:

Համաձայն Օրենքի՝ Բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումն է: Գների կայունության նպատակն իրագործելու համար Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը: Ի լրումն իր հիմնական խնդրի՝ Բանկի այլ խնդիրներն են.

- ▶ Ապահովել Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ պայմաններ,
- ▶ Ստեղծել և զարգացնել գործուն վճարահաշվարկային համակարգ,
- ▶ Կարգավորել Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի թողարկումը և դրամաշրջանառությունը,
- ▶ Կազմակերպել և կարգավորել փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելող միջոցառումները,
- ▶ Ապահովել ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմաններ,
- ▶ Ապահովել ֆինանսական համակարգում ազատ և բարեխիղճ տնտեսական մրցակցություն և այլն:

Իր խնդիրները իրականացնելու նպատակով Կենտրոնական բանկը.

- ▶ Հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Կառավարության (այսուհետ՝ «Կառավարություն») ֆինանսական գործակալն ու խորհրդատուն,
- ▶ Լիցենզավորում է առևտրային բանկերը, օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց և կազմակերպությունները, վերահսկում ու կարգավորում է վերջիններիս գործունեությունը,
- ▶ Տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները և այլն:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի խոշոր դուստր կազմակերպությունները ներկայացված են ստորև.

| Անվանումը | Հիմնադրման երկիրը | Հիմնական գործունեությունը | Վերահսկվող % | | Հիմնադրման ամսաթիվ |
|--|---------------------------|---|--------------|--------|--------------------|
| | | | 2023թ. | 2022թ. | |
| «Արմենիան Քարդ» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Վճարահաշվարկային ծառայություններ | 55 | 56.25 | մարտ 2000թ. |
| «Հայինկասացիա» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Դրամական միջոցների փոխադրումներ | 100.00 | 100.00 | ապրիլ 1998թ. |
| «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎԿԿ ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Հիփոթեքային վերաֆինանսավորում | 100.00 | 100.00 | հունիս 2009թ. |
| «Բնակարան երիտասարդներին» ՎԿԿ ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Հիփոթեքային վերաֆինանսավորում | 100.00 | 100.00 | փետրվար 2010թ. |
| «Փոքր և միջին բիզնեսի վարկավորման աջակցություն» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Վարկավորման աջակցություն | 100.00 | 100.00 | դեկտեմբեր 2010թ. |
| «Ավտոտրանսպորտային միջոցների հատուկ նշանակության միասնական պատուհան» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Ապահովագրական ենթակառուցվածքների աջակցություն | 100.00 | 100.00 | դեկտեմբեր 2013թ. |
| «Ստակ Մանի Տրանսֆեր» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Վճարահաշվարկային ծառայություններ | 100.00 | 100.00 | դեկտեմբեր 2017թ. |

1. Ընդհանուր տեղեկատվություն (շարունակություն)

Հետևելով Ծանոթագրություն 31-ի ներքո խմբի քաղաքականությանը, բացահայտված 2020թ. մարտին, խումբը հայտարարեց, որ մտադիր է լուծարման միջոցով օտարել կանխիկ դրամական առաքումներ/փոխադրումներ իրականացնող դուստր կազմակերպությունում իր ներդրումը: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դուստր կազմակերպությունը դեռևս գտնվում է լուծարման գործընթացում:

(ա) Հայաստանի տնտեսական միջավայրը

2023 թվականին արտաքին հատվածից փոխանցվող գնանկումային ազդեցությունների և ԿԲ-ի կողմից իրականացված զսպողական դրամավարկային քաղաքականության արդյունքում ՀՀ-ում գնաձային միջավայրն էականորեն մեղմվել է: 12-ամսյա գնաձը կտրուկ նվազել է տարվա առաջին կեսին՝ երկրորդ կիսամյակից ձևավորվելով գոյական մակարդակի շուրջ*:

2023 թվականին ՀՀ-ում պահպանվել է բարձր տնտեսական ակտիվություն, ինչի պարագայում տարեկան տնտեսական աճը կազմել է 8.7%*: Միաժամանակ, միջազգային այցելուների կողմից ներկայացված արտաքին մեծ պահանջարկի և արտերկրից ֆինանսական փոխանցումների զգալի ներհոսքի ազդեցությամբ տարվա ընթացքում ՀՀ արժույթային շուկայում միջինում դիտվել է դրամի արժևորում՝ որոշակիորեն նպաստելով գնաձային միջավայրի մեղմմանը:

Ելնելով ստեղծված իրավիճակից և առաջնորդվելով ապագային միտված քաղաքականության իրականացման սկզբունքով՝ 2023 թվականին ԿԲ-ն աստիճանաբար թուլացրել է դրամավարկային պայմանները՝ իջեցնելով քաղաքականության տոկոսադրույքը ընդհանուր առմամբ 1.5 տոկոսային կետով: Արդյունքում, 12-ամսյա գնաձը տարվա ընթացքում նվազել է 8.9 տոկոսային կետով և տարեվերջին կազմել -0.6%: Գնահատվում է, որ 12-ամսյա ընդհանուր գնաձն առաջիկայում կպահպանվի նպատակային ցուցանիշից ցածր մակարդակում, այնուհետև զգալիորեն կավելանա և միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ*:

Խումբը շարունակում է գնահատել տնտեսական պայմանների փոփոխության ազդեցությունը իր գործունեության, ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

* Տեղեկատվությունը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 20.02.2024թ. թիվ 27 որոշմամբ հաստատված Դրամավարկային քաղաքականության ծրագրի իրականացման կարգավիճակի հաշվետվությունից է (2023թ. 1-ին եռամսյակ – 2023թ. 4-րդ եռամսյակ):

2. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփում

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

(բ) Չափման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ ֆինանսական գործիքների, որոնք սկզբնապես ձանաչվում են իրական արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների (ներառյալ՝ ածանցյալ ֆինանսական գործիքները): Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Այդ դրույթները հետևողականորեն կիրառվել են հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ, եթե այլ բան նշված չէ:

(գ) Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ձևը

Բացառիկ դեպքերում համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության մանրամասն բացահայտումը կարող է բերել ՀՀ ամբողջ ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության կորստի: Հետևաբար, չնայած նման գործառնությունների ֆինանսական արդյունքներն արտացոլված են խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, խումբը կարող է միայն սահմանափակ բացահայտումներ ներկայացնել նման գործարքների վերաբերյալ:

(դ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է նաև Բանկի և խմբի յուրաքանչյուր համախմբված կազմակերպության ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթը, որով ներկայացված են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

2. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ե) Գնահատումների և դատողությունների կիրառում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարությունն օգտագործել է իր դատողությունները և գնահատումները համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները որոշելիս: Կիրառված էական դատողությունները և գնահատումները հետևյալն են.

Իրական արժեք

Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար կիրառում են դատողություններ:

Արժեզրկման գնահատում

Ֆինանսական ակտիվների բոլոր դասերի գծով արժեզրկումից կորուստների գնահատումը պահանջում է դատողությունների կիրառում, մասնավորապես ապագա դրամական հոսքերի արժեքի և ժամկետայնության ու գրավի արժեքի գնահատումը՝ արժեզրկումից կորուստները և պարտքային ռիսկի զգալի աճը որոշելիս: Այս գնահատումների հիմքում ընկած են մի շարք գործոններ, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Խմբի ակնկալվող պարտքային կորուստների («ԱՊԿ») հաշվարկները բարդ մոդելների արդյունք են, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ ելակետային փոփոխականների ընտրության և դրանց փոխկապակցվածության վերաբերյալ: ԱՊԿ մոդելների դատողություններ և գնահատումներ պարունակող տարրերը հետևյալն են.

- ▶ Խմբի ներքին վարկային գնահատման մոդելը, որը առանձին դասերի համար սահմանում է ղեֆուտի հավանականությունները,
- ▶ Խմբի գնահատման չափանիշները և որակական գնահատումը, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի զգալի աճ, և հետևաբար, ֆինանսական ակտիվների գծով պահուստները պետք է չափվեն ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստի (ԱԿԱՊԿ) հիմունքով,
- ▶ ԱՊԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերի և ելակետային տվյալների ընտրությունը,
- ▶ Մակրոտնտեսական սցենարների և այնպիսի տնտեսական ելակետային տվյալների միջև, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքը, կապերի որոշումը և դրանց ազդեցությունը ղեֆուտի հավանականության (PD), ղեֆուտի դեպքում գործիքի արժեքի (EAD) և ղեֆուտի դեպքում կորուստի չափի (LGD) վրա,
- ▶ Կանխատեսվող մակրոտնտեսական սցենարների և դրանց հավանականությունների կշիռների ընտրությունը՝ ԱՊԿ մոդելների ելակետային տնտեսական փոփոխականները որոշելու համար:

(զ) Փոփոխություններ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության մեջ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամկետ չի կիրառել որևէ հրապարակված, սակայն դեռևս կիրառության մեջ չմտած ստանդարտներ, մեկնաբանություններ կամ փոփոխություններ:

2023թ. ստանդարտների որոշ փոփոխություններ և մեկնաբանություններ կիրառվել են առաջին անգամ, սակայն որևէ ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

(է) Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության տեղեկատվություն

Խումբը կիրառել է Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումը (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործանական առաջարկներ 2-ի փոփոխություններ) 2023թ. հունվարի 1-ից: Չնայած փոփոխությունները չեն հանգեցրել հաշվապահական հաշվառման քաղաքականության որևէ փոփոխության, դրանք ազդություն են ունեցել համախմբված ֆինանսական հաշվետվություններում բացահայտված հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

Փոփոխությունը պահանջում է բացահայտել հաշվապահական հաշվառման «էական» քաղաքականությունները հաշվապահական հաշվառման «նշանակալի» քաղաքականությունների փոխարեն: Փոփոխությունները տրամադրում են նաև ուղեցույց, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության սկզբունքը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս, օգնելով կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար, կազմակերպությանը բնորոշ բացահայտումներ, որոնք անհրաժեշտ են օգտագործողներին հասկանալու ֆինանսական հաշվետվությունների այլ տեղեկատվություն:

Ղեկավարությունը վերանայել է և թարմացրել է «Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփում» (2022թ.՝ Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում) Ծանոթագրություն 2-ում ներկայացված որոշ տեղեկատվություն փոփոխությանը համահունչ:

2. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(ը) Համախմբման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Դուստր կազմակերպություններն այն ներդրման օբյեկտներն են, որոնք վերահսկվում են խնամքի կողմից: Վերահսկողությունը ձեռք է բերվում, երբ խումբը ստանում է փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն՝ ներդրման օբյեկտում ներգրավվածության արդյունքում, ինչպես նաև ունի իր իշխանությունն օգտագործելու կարողություն՝ այդ հատույցների վրա ազդելու համար:

Մասնավորապես, խումբն ունի վերահսկողություն միայն այն դեպքում, երբ.

- ▶ ունի կարողություն ուղղորդելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության որոշակի գործունեությունը, որը զգալի ներգործություն ունի հատույցների վրա,
- ▶ կրում է հատույցներ չստանալու ռիսկը կամ ստանում է փոփոխական հատույցներ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունում իր մասնակցությունից, և
- ▶ հնարավորություն ունի օգտագործելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության վրա ազդեցություն ունենալու կարողությունը՝ ներդրողների հատույցների գումարի վրա ներգործություն ունենալու համար:

Խնամքի ընկերությունների միջև գործարքները, մնացորդները և գործարքներից չիրացված օգուտը բացառվում են, չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ ծախսը չի կարող վերականգնվել: Բանկը և իր բոլոր դուստր կազմակերպությունները կիրառում են հաշվապահական հաշվառման միասնական քաղաքականություն՝ խնամքի քաղաքականությանը համահունչ:

Դուստր կազմակերպության սեփականության մասնաբաժնի փոփոխությունը առանց վերահսկողության փոփոխության հաշվառվում է որպես սեփական կապիտալի գործարք: Վնասները վերագրելի են չվերահսկող բաժնեմասին, նույնիսկ, եթե դա հանգեցնում է բացասական մնացորդի:

Երբ խումբը կորցնում է վերահսկողությունը Դուստր կազմակերպության նկատմամբ, ցանկացած պահպանված ներդրում ճանաչվում է վերահսկողության կորստի ամսաթվի իրական արժեքով:

Խումբը գնահատում է չվերահսկող բաժնեմասը, որն իրենից ներկայացնում է ներկայիս սեփականության մասնաբաժինը և կրողին տալիս է զուտ ակտիվների նկատմամբ համամասնական իրավունք լուծարման դեպքում յուրաքանչյուր առանձին գործառնության արժեքի սկզբունքով՝ հիմք ընդունելով ձեռքբերվող կազմակերպության զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությունը կամ իրական արժեքը:

Ասոցիացված կազմակերպություններ

Ասոցիացված կազմակերպություններն այն բիզնես միավորներն են, որոնց նկատմամբ խումբն ունի էական ազդեցություն (ուղղակիորեն կամ անուղղակիորեն), սակայն չունի վերահսկողություն՝ տիրապետելով քվեարկող ձայների 20-ից 50 տոկոսին: Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են՝ կիրառելով հաշվառման բաժնեմասնակցության մեթոդը, և սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով: Ասոցիացված ընկերության հաշվեկշռային արժեքը ներառում է գնման պահին որոշված գույվիլը՝ հանած կուտակված արժեքը կամ կորուստներ (եթե այդպիսիք կան): Ասոցիացված կազմակերպություններից ստացված շահաբաժինները նվազեցնում են ասոցիացված կազմակերպություններում ներդրման հաշվեկշռային արժեքը: Ձեռքբերումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում խնամքի բաժնեմասին վերաբերող այլ փոփոխությունները ճանաչվում են հետևյալ կերպ. (ա) ասոցիացված ընկերության շահույթում կամ վնասում խնամքի մասնաբաժինը ներառվում է տվյալ տարվա համախմբված շահույթ/վնասում՝ այլ եկամուտներ/այլ ծախսեր հոդվածներում, (բ) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում խնամքի բաժնեմասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում առանձին տողով, (գ) ասոցիացված ընկերության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքի՝ խնամքի բաժնեմասին վերաբերող այլ փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում այլ եկամուտներ/այլ ծախսեր հոդվածներում:

Սակայն երբ ասոցիացված կազմակերպության վնասներում խնամքի մասնաբաժինը հավասար է կամ գերազանցում է ասոցիացված կազմակերպությունում իր ունեցած բաժնեմասին, ներառյալ ցանկացած այլ չապահովված դեբիտորական պարտքեր, խումբն այլևս չի ճանաչում հետագա վնասները, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ձեռք է բերել պարտավորություններ կամ կատարել է վճարումներ ասոցիացված կազմակերպության անունից:

(թ) Արտարժույթի փոխարկում և արտարժույթային հոդվածների ներկայացում

Արտարժույթով իրականացված գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով՝ գործարքի օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

2. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(թ) Արտարժույթի փոխարկում և արտարժույթային հոդվածների ներկայացում (շարունակություն)

Արտարժույթի փոխարկումից ստացված օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ/(վնաս): Տարեվերջի փոխարժեքով փոխարկում կատարելու սկզբունքը չի կիրառվում սկզբնական արժեքով գնահատվող ոչ դրամային հոդվածների նկատմամբ:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են իրական արժեքով (ներառյալ՝ բաժնային ներդրումները), վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով:

Արտարժույթով իրականացվող գործարքների պայմանագրային փոխարժեքի և այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքի տարբերությունը ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության մեջ:

Խմբի կողմից համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները 2023 և 2022 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ.

| | <i>31 դեկտեմբերի 2023թ.</i> | <i>31 դեկտեմբերի 2022թ.</i> |
|---|---------------------------------|---------------------------------|
| ՀՀ դրամ / 1 ԱՄՆ դոլար | 404.79 | 393.57 |
| ՀՀ դրամ / 1 եվրո | 447.9 | 420.06 |
| ՀՀ դրամ / 1 բրիտանական ֆունտ | 515.38 | 474.13 |
| ՀՀ դրամ / 1 ՀՓԻ (Հատուկ փոխառության իրավունք) | 543.09 | 523.78 |
| ՀՀ դրամ / 1 ճապոնական իեն | 2.86 | 2.98 |
| ՀՀ դրամ / 1 ռուսական ռուբլի | 4.5 | 5.59 |

(ժ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության ներքո դրամական միջոցները և դրանց համարժեքները այն միավորներն են, որոնք ազատ փոխարկելի են նախապես հայտնի դրամական գումարների և ենթակա են արժեքի փոփոխության ոչ նշանակալի ռիսկի: Խումբը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում կանխիկ դրամը, բանկերում տեղաբաշխված նոստրո հաշիվները և ԱՄՀ-ում տեղաբաշխված ՀՓԻ միջոցները: Միջոցները, որոնց օգտագործումը սահմանափակվում է ձևավորման պահից երեք ամսից ավելի ժամանակահատվածով, չեն հանդիսանում դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

(հ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ

Խումբը չափում է ֆինանսական գործիքները, ինչպիսիք են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվները և ածանցյալ գործիքները, իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքը բացահայտված է Ծանոթագրություն 30-ում:

Իրական արժեքը այն գինն է, որը կստացվեր ակտիվը վաճառելիս կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև կանոնավոր գործարքում: Իրական արժեքի լավագույն վկայությունն է գործող շուկայում գինը: Գործող շուկան այն շուկան է, որում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները տեղի են ունենում բավականաչափ հաճախականությամբ և ծավալով՝ շարունակական կերպով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Գործող շուկայում վաճառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատվում է որպես անհատական ակտիվի կամ պարտավորության գնանշված գնի և խմբի կողմից պահվող քանակի արտադրյալ: Նշված սահմանումը գործում է նույնիսկ այն դեպքում, երբ շուկայում բնականոն օրական վաճառքի ծավալը բավարար չէ պահվող ծավալը կանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու պատվերների տեղադրումը կարող է ազդեցություն ունենալ գնանշված գնի վրա: Գնահատման մեթոդները, ինչպիսիք են գեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «անկախ կողմերի միջև գործարքների» կամ ներդրում ստացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ:

2. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(h) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ (շարունակություն)

Սկզբնական չափում

Խումբն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է՝ ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից, չափումն իրականացնելով.

- ▶ Ամորտիզացված արժեքով,
- ▶ Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով,
- ▶ Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Եթե սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվների իրական արժեքը համարվում է գործարքի գնից տարբեր, ապա այն չափվում է՝ գեղջելով պայմանագրային դրամական միջոցների հոսքերը գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության համար կիրառվող վերաֆինանսավորման տոկոսադրույքով կամ ոչ ռիսկային տոկոսադրույքով: Իրական արժեքի և անվանական արժեքի միջև տարբերությունը հաշվառվում է շահույթում կամ վնասում՝ որպես վնաս ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչման պահին, եթե Բանկը հանդես է գալիս ֆինանսական համակարգի կարգավորողի կարգավիճակում: Այն դեպքերում, երբ Բանկը հանդես է գալիս որպես բաժնետեր, տարբերությունը ճանաչվում է որպես լրացուցիչ ներդրում ասոցիացված կազմակերպությունների սեփական կապիտալում:

Խումբն իր ածանցյալ գործիքները և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Խումբը կարող է հաշվառել ֆինանսական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ճանաչման ամսաթիվ

Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքներն արտացոլվում են վերջնահաշվարկի ամսաթվով: Կանոնավոր կերպով գնմանը կամ վաճառքին է վերաբերում ֆինանսական ակտիվների այնպիսի գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվի մատակարարում՝ շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարար սովորույթով սահմանված ժամկետի ընթացքում:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Որպես առևտրային նպատակներով պահվող ֆինանսական գործիքները ներառվում են «Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ» դասակարգման մեջ: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ապագայում իրացման նպատակով: Ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք իրենց նպատակային նշանակությամբ չեն հանդիսանում գործող հեջավորման գործիքներ: Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների գծով օգուտները կամ վնասները, այդ թվում պարտքային արժեթղթերի առքուվաճառքից գոյացած տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ/(վնաս):

Խումբը իր բնականոն գործունեության ընթացքում արժութային և կապիտալի շուկաներում օգտագործում է տարատեսակ ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներառյալ՝ ֆորվարդները, ֆյուչերսները, սվոփերը և օպցիոնները: Սրանք առևտրային նպատակներով պահվող ֆինանսական գործիքներ են, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

Իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշման կամ գնորոշման մոդելների հիման վրա, որոնք հաշվի են առնում դրանց հիմքում ընկած գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային արժեքները և այլ գործոններ:

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ, ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Խումբը չափում է բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցները և այլ ֆինանսական գործիքները ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմաններ՝

- ▶ Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով,
- ▶ Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ստորև:

2. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(h) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ (շարունակություն)

Բիզնես մոդելի գնահատում

Խումբն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույն կերպով արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որոշեցրած մեթոդները:

Խմբի բիզնես մոդելը չի գնահատվում առանձին գործիքների հիմունքով, այլ ավելի բարձր՝ համախմբված պորտֆելների մակարդակով և հիմնվում է այնպիսի դիտելի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- ▶ Բիզնես մոդելի արդյունավետության և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների գնահատման և կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացման մեխանիզմները,
- ▶ Բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը
- ▶ Վաճառքների ակնկալվող հաճախականությունը, արժեքը և ժամկետները նույնպես հանդիսանում են Խմբի գնահատման կարևոր գործոններ:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Խմբի սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Խումբը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հաշվի է առնում այդ տեղեկատվությունը հետագայում նոր սկզբնավորվող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

Միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) գնահատումներ

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ՝ Խումբը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ պարզավճարի/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պարտավորվածության մեջ սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են փողի ժամանակային արժեքը և պարտքային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Խումբը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Համեմատության համար, այն պայմանագրային դրույթները, որոնք առաջացնում են ավելի քան նվազագույն ենթարկվածություն ռիսկերին կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի տատանողականության, որոնք կապված չեն բազային վարկային պարտավորվածության հետ, չեն առաջացնում միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա տոկոսի վճարում հանդիսացող պայմանագրային դրամական միջոցների հոսքեր: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորդված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- ▶ ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ▶ ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար: Ապաճանաչման պահին, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարային օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

2. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(h) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ (շարունակություն)

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների համար ակնկալվող պարտքային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում շարունակվում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այն պահուստի չափով գումարը, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ որպես կուտակվածարժեքկման գումար՝ շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված վնասը ակտիվի ապաճանաչումից հետո վերադասակարգվում է շահույթի և վնասի կազմ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ

Սկզբնական ճանաչումից հետո Խումբը երբեմն ընտրում է իր բաժնային ներդրումների մի մասն առանց հետագա վերանայման դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ, երբ դրանք համապատասխանում են կապիտալի գործիքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 32-ի «Ֆինանսական գործիքներ. Ներկայացում» ստանդարտի, և չեն պահվում առևտրային նպատակով: Նման դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

Այս բաժնային գործիքներից օգուտները կամ վնասները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ, երբ վճարման իրավունքը հաստատվել է, բացառությամբ, երբ Խումբը օգուտ է ստանում տվյալ մուտքերից՝ գործիքի արժեքի մի մասի վերականգնման միջոցով: Այդ դեպքում նման օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն արժեքկման գնահատման: Այդ գործիքների օտարումից հետո կուտակված վերագնահատման պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները, չհաշված բացառիկ դեպքերը, երբ Խումբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ներգրավված փոխառու միջոցներ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Խումբն ունի պարտավորություն փոխանցելու դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ, կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի դրամական միջոցների հաստատուն գումարով կամ այլ ֆինանսական ակտիվներով սեփական բաժնային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը: Նման գործիքները ներառում են ֆինանսական և այլ հաստատությունների ավանդները և հաշիվների մնացորդները, պարտավորությունները Կառավարության հանդեպ, պարտավորությունները ԱՄՀ-ի հանդեպ, այլ փոխառու միջոցները, թողարկված պարտատոմսերը:

Սկզբնական ճանաչումից հետո փոխառված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(i) Հետզնման և հակադարձ հետզնման պայմանագրեր

Վաճառքի և հետզնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ:

Արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր», իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը՝ ֆինանսական և այլ հաստատությունների նկատմամբ պարտավորությունների կազմում: Վաճառքի և հետզնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է հետզնման պայմանագրի գործողության ընթացքում:

Հետզնման պայմանագրերի ներքո («հակադարձ ռեպո պայմանագրեր») արժեթղթերի ձեռքբերման համար վճարված միջոցները գրանցվում են որպես բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ: Վաճառքի և հետզնման գնի միջև տարբերությունը՝ ճշտված տոկոսադրույքով և գործընկերոջ կողմից ստացվող շահաբաժնի եկամտով, դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում է ռեպո պայմանագրերի ողջ գործողության ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

2. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(խ) Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ և մետաղադրամներ

Բանկի կողմից թողարկված շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են անվանական արժեքով որպես պարտավորություն դրանց տիրապետողների հանդեպ: Թղթադրամների տպագրման և մետաղադրամների հատման ծախսերը ձանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման պահին: Տեղական արժույթով կանխիկը նվազեցվում է շրջանառության մեջ գտնվող թղթադրամների և մետաղադրամների մնացորդից:

(ծ) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները, բացառությամբ հողի, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Հողը հաշվառվում է սկզբնական արժեքով: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ձանաչման չափանիշներին: Նմանապես, խոշոր կապիտալ ներդրումներ կատարելիս ծախսը ներառվում է հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի մեջ որպես փոխարինում, եթե ձանաչման չափանիշները բավարարված են:

Երբ հիմնական միջոցի նշանակալի մասերը անհրաժեշտ է պարբերաբար փոխարինել, խումբը ձանաչում է նման մասերը՝ որպես առանձին ակտիվներ իրենց հատուկ օգտակար ծառայության ժամկետներով և համապատասխանաբար հաշվարկում է մաշվածություն:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված բոլոր ծախսումները շահույթում կամ վնասում ձանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին:

Սկզբնապես ձանաչված հիմնական միջոցի միավոր և ցանկացած էական մաս ապաձանաչվում է օտարման դեպքում, և երբ ակտիվի օգտագործումից կամ օտարումից ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի ապաձանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս (հաշվարկված որպես օտարումից զուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ներառվում է շահույթում կամ վնասում, երբ ակտիվն ապաձանաչվում է:

Մաշվածություն

Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի օգտագործման համար մատչելի դառնալու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության հետևյալ ժամկետների ընթացքում.

| | |
|--|------------|
| Հող և շենքեր | |
| ▶ Շենքեր | 30-80 տարի |
| ▶ Շենքերի սպասարկման համակարգեր | 3-20 տարի |
| Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ | 2-15 տարի |
| Փոխադրամիջոցներ | 5 տարի |

Ակտիվի մնացորդային արժեքը ակտիվի այն մոտավոր գումարն է, որը խումբը ներկայումս կստանար ակտիվի օտարումից՝ հանած ակտիվի օտարման գնահատված ծախսերը, եթե ակտիվը արդեն լիներ իր օգտակար ծառայության վերջին սպասվող տարիքին և պայմաններում: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

(կ) Հարկում

Բանկն ազատված է բոլոր հարկերից և տուրքերից, բացառությամբ ապրանքների ներմուծման համար մաքսային սահմանին վճարման ենթակա հարկերից, մաքսատուրքերից և մաքսավճարներից: Միաժամանակ Բանկը հանդես է գալիս որպես հարկային գործակալ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Խմբի դուստր կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հաշվարկում են շահութահարկ և այլ հարկեր ու տուրքեր: Դուստր կազմակերպությունների համար հարկի կիրառելի դրույքաչափը կազմում է 18% (2022թ-ին՝ 18%):

(հ) Թողարկված կապիտալ

Թողարկված կապիտալը Բանկի կանոնադրական կապիտալն է, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը և չի կարող գրավադրվել, բռնագանձվել կամ որևէ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

2. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփում (շարունակություն)

(հ) Թողարկված կապիտալ (շարունակություն)

Համաձայն Օրենքի 11.4 հոդվածի՝ Խճբի վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում Կառավարության կողմից տրամադրվող անտոկոս հասարակ մուրհակը ճանաչվում է որպես Կառավարության կողմից թողարկված մուրհակ Խճբի կապիտալում: Օրենքի համաձայն Կենտրոնական բանկի հաշվեկշռում ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում հաշվեկշռի հրապարակման պահից երեսուն օրվա ընթացքում Կառավարությունը՝ գերազանցող գումարի չափով, օրենքով սահմանված կարգով, որպես ներդրում Կենտրոնական բանկի կապիտալում, Կենտրոնական բանկին պետք է տրամադրի անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակներ:

Խուճբը գտնում է, որ Բանկն իրավունք չունի տարեվերջին պահանջելու Կառավարությունից ստացվելիք գումարները, որոնք ձևավորվել են վնասների հետևանքով՝ վերը նշված Օրենքի համաձայն: Այդ ստացվելիք գումարները ճանաչվում են, երբ Կառավարությունը կայացնում է համապատասխան որոշում վնասի՝ պահուստները գերազանցող չափով գումարը Բանկին փոխհատուցելու մասին:

(ձ) Շահույթի բաշխում

Խճբի շահույթը, որը որոշվում է վերջինիս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակումից հետո, բաշխվում է հետևյալ կերպ.

- ▶ շահույթի 20%-ն ուղղվում է գլխավոր պահուստի համալրմանը՝ մինչև դրա ընդհանուր չափը կազմի առկա դրամական զանգվածի 25%-ը,
- ▶ մասհանումներ պետք է կատարվեն՝ Կառավարության կողմից նախկինում Բանկին տրամադրված մուրհակի մարման ծախսերը ծածկելու նպատակով:

Նշված մասհանումները կատարելուց հետո Խճբի ստացված շահույթի մնացորդը փոխանցվում է պետական բյուջե:

Պետական բյուջե վճարման ենթակա Խճբի շահույթի հաշվարկի մեջ չեն ընդգրկվում ոսկու, հատուկ փոխառության իրավունքների, արտարժույթների և դրանցով արտահայտված արժեքների վերազնահատումից և ձեռքբերումից առաջացած եկամուտների և ծախսերի դրական տարբերությունը՝ ճշգրտված նախորդ ժամանակաշրջանների բացասական արդյունքների հատուցմանն ուղղված գումարների չափով (Ծանոթագրություն 25):

Խուճբը գտնում է, որ համաձայն Օրենքի Բանկը հայեցողություն չունի շահույթի բաշխման հետ կապված գումարները սահմանված են օրենքով, ըստ էության, հանգեցնելով գլխավոր պահուստի համալրումից հետո Կառավարությունից ստացվելիք մուրհակի գումարի ավտոմատ նվազեցման:

Համապատասխանաբար Բանկը ճանաչում է Կառավարության հանդեպ պարտավորություններ մուրհակի արժեքի նվազեցման միջոցով շահույթ ստանալու ժամանակաշրջանում:

(դ) Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն

2023թ. սկսած Բանկը որոշել է ներկայացնել սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն՝ գործառնությունների ավելի լավ ներկայացման նպատակով: Հետևաբար, համադրելի տեղեկատվությունը վերաներկայացվել է՝ ընթացիկ տարվա ներկայացման փոփոխություններին համապատասխանելու նպատակով:

Խուճբը առանձնացնում է երեք ռազմավարական ստորաբաժանումներ, որոնք հաշվետու սեզմենտներ են: Այս ստորաբաժանումները առաջարկում են տարբեր ծառայություններ և գործառնություններ, և կառավարվում են առանձին՝ հիմք ընդունելով Խճբի կառավարման և ներքի հաշվետվողականության կառուցվածքը:

- ▶ Կենտրոնական բանկի գործառնությունները,
- ▶ Դուստր կազմակերպությունների վերաֆինանսավորման գործառնությունները,
- ▶ Դուստր կազմակերպությունների այլ գործառնությունները:

(ճ) Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Խուճբը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների: Արդյունավետ տոկոսադրույթը (EIR) այն տոկոսադրույթն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ՝ կիրառելի դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածում, ճշգրտորեն զեղչվում են մինչև ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույթի բաղկացուցիչ մաս, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խճբի կողմից միջոցների էլքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույթի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը գրանցվում է որպես դրամական հոսքերի վերանայումից օգուտ/կորուստ և ներկայացվում է տոկոսային եկամտի/ծախսի կազմում:

2. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Երբ ֆինանսական ակտիվի կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի հաշվառված արժեքը նվազեցվել է արժեզրկումից կորստի հիմունքով, տոկոսային եկամուտը շարունակում է ձանաչվել՝ օգտագործելով սկզբնապես գործող արդյունավետ տոկոսադրույքը նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից տոկոսային եկամուտը խմբի առևտրային գործառնությունների համար համարվում է երկրորդային և համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ձանաչվում են իրական արժեքի այլ փոփոխությունների հետ միասին:

(մ) Արժույթի միջազգային հիմնադրամի (այսուհետ՝ «ԱՄՀ») հետ գործարքների հաշվառում

Համաձայն «ԱՄՀ-ի գործարքները և ֆինանսական կազմակերպումը» ուղեցույցի՝ ԱՄՀ-ի յուրաքանչյուր անդամ նշանակում է ֆիսկալ գործակալություն (ֆինանսների նախարարություն, կենտրոնական բանկ կամ համանման կազմակերպություն)՝ ԱՄՀ-ի հետ ֆինանսական գործարքներ կատարելու համար և պահառուի (կենտրոնական բանկ կամ համանման գործակալություն)՝ ԱՄՀ-ի հաշիվները պահելու համար (ԱՄՀ թիվ 1 և 2 հաշիվներ և արժեթղթերի հաշիվ):

Համաձայն «Արժույթի միջազգային հիմնադրամին, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին, Միջազգային ֆինանսական կորպորացիային, Ջարգացման միջազգային ասոցիացիային, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին, Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությանը և Կապիտալ ներդրումների վերաբերյալ տարածայնությունների կարգավորման միջազգային կենտրոնին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին» ՀՀ օրենքի՝ Բանկը, ըստ ԱՄՀ-ի հետ կնքված պայմանագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի, հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության ֆիսկալ գործակալ: Բանկը համարվում է նաև Հայաստանի Հանրապետության պահառու ԱՄՀ հետ գործառնությունների համար:

Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկն ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է ֆիսկալ գործակալի գործառնույթ, արդյունքում առաջացած ակտիվների և պարտավորությունների գումարները և գործառնությունների արդյունքները արտացոլվում են Կենտրոնական բանկի ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններում: Երբ Կենտրոնական բանկը ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է պահառուի գործառնույթ, բոլոր գործառնություններն իրականացվում են Կենտրոնական բանկի թղթակցային հաշիվների միջոցով, սակայն այդ գործառնությունների արդյունքում առաջացող ակտիվների և պարտավորությունների գումարները և համապատասխան շահույթը կամ վնասը չեն արտացոլվում Կենտրոնական բանկի՝ ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններում (Ծանոթագրություն 16):

3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ

Մի շարք նոր հաշվապահական հաշվառման ստանդարտներ և հաշվապահական հաշվառման ստանդարտների փոփոխություններ գործում են 2024թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների և փոփոխությունների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս խումբը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված հաշվապահական հաշվառման ստանդարտները:

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ▶ Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի և կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1- փոփոխություններ)
- ▶ Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- ▶ Վարձակալության գծով պարտավորությունը վաճառքի և հետադարձ վարձակալություն գործարքների դեպքում (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- ▶ Փոխանակման հնարավորության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ)

4. **Տոկոսային եկամուտ**

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | 2022թ. |
|--|-------------------|-------------------|
| Տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով | | |
| Նոստրո հաշիվներ | 31,882,861 | 8,803,333 |
| Ժամկետային ավանդներ | 1,191,441 | 529,084 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 279,505 | 112,070 |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 212,475 | 34,568 |
| Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | 116,200 | 24,067 |
| Այլ | 62,861 | 27,951 |
| Ընդամենը տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով | 33,745,343 | 9,531,073 |
| Տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով | | |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ | 57,645,900 | 60,749,281 |
| Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | 1,048,492 | 1,042,244 |
| Ընդամենը տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով | 58,694,392 | 61,791,525 |
| Ընդամենը տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով | 92,439,735 | 71,322,598 |

5. **Տոկոսային ծախս**

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|-------------------|-------------------|
| Տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով | | |
| Այլ փոխառություններ | 6,261,258 | 3,211,764 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 6,148,866 | 2,658,422 |
| Այլ | 267 | - |
| Ընդամենը տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով | 12,410,391 | 5,870,186 |
| Տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով | | |
| Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ (Ծնթ. 28) | 50,748,868 | 39,198,869 |
| Թողարկված պարտատոմսեր | 1,938,088 | 1,111,089 |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 857,554 | 546,417 |
| Այլ | 16,058 | 27,328 |
| Ընդամենը տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով | 53,560,568 | 40,883,703 |
| Ընդամենը տոկոսային ծախս | 65,970,959 | 46,753,889 |

6. **Ջուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից**

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|-------------------|---------------------|
| Ջուտ օգուտ/(վնաս) արտարժույթի վերագնահատումից | 28,805,603 | (98,408,713) |
| Ջուտ օգուտ սփոթ գործարքներից | 2,101,511 | 9,433,951 |
| Ընդամենը զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից | 30,907,114 | (88,974,762) |

Արտարժույթի վերահաշվարկից ստացված զուտ օգուտի կազմում ներառված է 27,493,538 հազար ՀՀ դրամ գումարով արտարժույթի վերահաշվարկից զուտ օգուտը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով և 5,140,312 հազար ՀՀ դրամ գումարով զուտ վնասը ԱՄՀ-ի հետ մնացորդների գծով (2022թ՝ համապատասխանաբար 144,770,310 հազար ՀՀ դրամի և 39,431,976 հազար ՀՀ դրամի չափով զուտ վնաս):

7. Ջուտ օգուտ/(վնաս) ածանցյալ գործիքներից

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | 2022թ. |
|--|----------------|--------------------|
| Ջուտ օգուտ/(վնաս) սվոփ պայմանագրերից | 988,296 | (1,556,546) |
| Ջուտ վնաս ֆյուչերսային պայմանագրերից | - | (11,811) |
| Ընդամենը զուտ օգուտ/(վնաս) ածանցյալ գործիքներից | 988,296 | (1,568,357) |

8. Ջուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | 2022թ. |
|--|-------------------|--------------------|
| Ջուտ օգուտ/(վնաս) սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա արժեթղթերի գծով | 31,764,287 | (3,328,711) |
| Ջուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող փողի շուկայի գործիքների գծով | 270,692 | 91,505 |
| Ընդամենը զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից | 32,034,979 | (3,237,206) |

9. Այլ եկամուտ

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | 2022թ. |
|--------------------------------|------------------|------------------|
| Դրամագիտական արժեքներ | 713,262 | 1,080,320 |
| Բաժնեմասնակցության օտարում | 276,178 | 498,765 |
| Ֆինանսական գործակալության վճար | 13,031 | 136,396 |
| Այլ | 6,185,904 | 4,337,929 |
| Ընդամենը այլ եկամուտ | 7,188,375 | 6,053,410 |

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում «Այլ» տողում ներառված 5,281,477 հազար ՀՀ դրամ գումարը ներկայացնում է Բանկի մեկ դուստր կազմակերպության հատույթը, որը տրամադրում է պլաստիկ քարտերով վճարումների ծառայություններ (2022թ.՝ 3,828,581 հազար ՀՀ դրամ):

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Բանկը ձանաչել է 276,178 հազար ՀՀ դրամ եկամուտ Հայաստանի Ֆոնդային Բորսայի (ՀՖԲ) բաժնեմասերի վաճառքից: 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Բանկը 498,765 հազար ՀՀ դրամ եկամուտ է ստացել Հայաստանի Ֆոնդային Բորսայի (ՀՖԲ) բաժնեմասերի վաճառքից: Այդ հատուցումն ամբողջությամբ ստացվել է դրամական միջոցներով: Արդյունքում Բանկը պահպանել է նշանակալի ազդեցություն ՀՖԲ-ի նկատմամբ:

Ֆինանսական գործակալության վճարն իրենից ներկայացնում է Բանկի՝ որպես Կառավարության գործակալի կողմից ստացված վճար՝ գործակալության պայմանագրերի համաձայն: Հիմք ընդունելով գործակալության պայմանագրերի դրույթները՝ Բանկը վարկեր է տրամադրում առևտրային բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին:

10. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|------------------|------------------|
| Թղթադրամների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր | 501,817 | 1,160,410 |
| Վաճառված դրամագիտական արժեքների թողարկման ծախսեր | 509,533 | 735,191 |
| Ընդամենը թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր | 1,011,350 | 1,895,601 |

11. Այլ ծախսեր

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|-------------------|-------------------|
| Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ | 10,494,419 | 8,666,688 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 3,124,710 | 2,690,445 |
| Վերանորոգում և տեխնիկական սպասարկում | 1,638,603 | 1,483,805 |
| Մասնագիտական ծառայություններ | 871,590 | 195,697 |
| Վճարահաշվարկային համակարգի զարգացման և սպասարկման ծախսեր | 489,918 | 485,720 |
| Անվտանգության, փոխադրումների և ապահովագրական ծախսեր | 260,051 | 388,870 |
| Աուդիտ ծախսեր | 103,600 | 68,680 |
| Այլ | 5,119,934 | 3,221,755 |
| Ընդամենը այլ ծախսեր | 22,102,825 | 17,201,660 |

2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում «Այլ» տողում ներառված հիմնական հոդվածները ներկայացնում են Բանկի և իր դուստր կազմակերպությունների բաժանորդագրության վճարներ, կապի ապահովման, կոմունալ, վարձակալության և գրասենյակային ծախսեր:

2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար աշխատակիցների հատուցումների, վերապատրաստման ծախսերի և հարակից վճարների, մաշվածության և ամորտիզացիայի ու վերանորոգման և սպասարկման ծախսերի գումարները նաև ներառում են խմբի դուստր կազմակերպությունների համապատասխան ծախսերի գումարները:

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ

12.1 Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով

| Հազար ՀՀ դրամ | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|--|----------------------|----------------------|
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով | | |
| Նոստրո հաշիվներ | 685,528,018 | 892,116,679 |
| Ժամկետային ավանդներ | 6,508,469 | 38,189,366 |
| Ածանցյալների պարտադիր մարժա | 801,145 | 1,902,355 |
| ԱՊԿ պահուստ | (2,818,946) | (78,597) |
| Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով | 690,018,686 | 932,129,803 |

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում արտարժույթով տեղաբաշխված միջոցների կենտրոնացում

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խումբն ուներ տեղաբաշխված միջոցներ մեկ բանկում, որոնցից յուրաքանչյուրի մնացորդը գերազանցում էր բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդի ընդհանուր գումարը կազմում է 514,587,544 հազար ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք բանկում, մնացորդի ընդհանուր գումարը կազմում է 729,956,221 հազար ՀՀ դրամ):

ԱՊԿ պահուստ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում արտարժույթով տեղաբաշխված ամորտիզացված արժեքով հաշվառվող միջոցների համար

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված արտարժույթով միջոցների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում հետևյալն է.

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | | 2022թ. | |
|---|--------------------|--------------------|--------------------|--------------------|
| | Փուլ 1 | Ընդամենը | Փուլ 1 | Ընդամենը |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով | | | | |
| Համախառն հաշվեկշռային արժեք հունվարի 1-ի դրությամբ | 932,208,400 | 932,208,400 | 763,744,777 | 763,744,777 |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 689,074,666 | 689,074,666 | 927,565,715 | 927,565,715 |
| Մարված ակտիվներ | (928,445,434) | (928,445,434) | (759,102,092) | (759,102,092) |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 692,837,632 | 692,837,632 | 932,208,400 | 932,208,400 |

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

12.1 Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով (շարունակություն)

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | | 2022թ. | |
|---|------------------|------------------|---------------|---------------|
| | Փուլ 1 | Ընդամենը | Փուլ 1 | Ընդամենը |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով | | | | |
| ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ | 78,597 | 78,597 | 108,684 | 108,684 |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 46,735 | 46,735 | 28,279 | 28,279 |
| Մարված ակտիվներ | (33,358) | (33,358) | (16,332) | (16,332) |
| ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող էլակետային տվյալների փոփոխություններ | 2,726,972 | 2,726,972 | (42,034) | (42,034) |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,818,946 | 2,818,946 | 78,597 | 78,597 |

12.2 Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով

| Հազար ՀՀ դրամ | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|--|----------------------|----------------------|
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով | | |
| Հետգնման պայմանագրեր | 350,370,301 | 234,708,585 |
| Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում | 227,238,842 | 211,980,557 |
| Հիփոթեքային վերաֆինանսավորում | 201,169,093 | 166,945,181 |
| Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին սեփական միջոցներից | 48,642,940 | 53,506,411 |
| Առևտրային բանկերում ավանդներ | 29,822,501 | 34,504,138 |
| Ներդրումներ՝ անորտիզացված արժեքով չափված (կորպորատիվ պարտատոմսեր) | - | 24,378,947 |
| Այլ վարկեր | 2,394,809 | 2,707,641 |
| Արժեզրկման պահուստ | (4,011,926) | (4,165,679) |
| Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով | 855,626,560 | 724,565,781 |

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների և ներդրումների կենտրոնացում

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չորս բանկի մնացորդները գերազանցում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների ընդհանուր գումարի 10%-ը (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու բանկ): Կենտրոնացման ընդհանուր մնացորդը կազմում է 553,012,748 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 354,963,645 հազար դրամ):

Հակադարձ հետգնման համաձայնագրերով ստացված գրավ

Հակադարձ հետգնման համաձայնագրերով գրավի առարկա են հանդիսանում արժեթղթերը, որոնք խումբը կարող է վաճառել կամ վերագրավադրել: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրեր են կնքվել 12 տեղական բանկի հետ (2022 դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4 տեղական բանկ): Այս պայմանագրերով գրավի առարկա հանդիսացող արժեթղթերի իրական արժեքները ներկայացված են ստորև.

| Հազար ՀՀ դրամ | Իրական արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ. | Իրական արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ. |
|--|---------------------------------------|---------------------------------------|
| Կառավարության գանձապետական արժեթղթեր | 358,660,589 | 221,850,168 |
| Կառավարության կողմից թողարկված Եվրոպարտատոմսեր | 2,056,553 | 18,627,282 |
| Կորպորատիվ պարտատոմսեր | - | 1,992,702 |
| Ընդամենը | 360,717,142 | 242,470,152 |

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

12.2 Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով (շարունակություն)

Բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին տրամադրված վարկեր

KfW-ի, Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ), Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) և Համաշխարհային բանկի հետ կնքված պայմանագրերի շրջանակներում վերջիններիս ֆինանսավորմամբ վարկեր են տրամադրվել ՀՀ առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին հետևյալ ծրագրերի ներքո, որոնք ֆինանսավորվում են KfW-ի, ԵՆԲ-ի, ԱԶԲ-ի և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (Համաշխարհային բանկի անդամ կազմակերպություն) կողմից.

- ▶ *ՓՄՁ աջակցություն.* KfW-ի և Համաշխարհային բանկի ՓՄՁ աջակցության ծրագրերի նպատակն է Հայաստանում զարգացնել ՓՄՁ-ները, մասնավորապես՝ առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով ապահովելու միջոցով միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորումը դարձնել առավել արդյունավետ և շահութաբեր: 2021թ. KfW-ից ստացված վարկային միջոցները ևս ուղղվել են ՓՄՁ-ների վարկավորման խթանմանը, ինչպես նաև COVID-19 համավարակի անբարենպաստ հետևանքների հաղթահարման աջակցությանը: Նշված ծրագրերն իրականացվում են գործընկեր բանկերում և վարկային կազմակերպություններում նոր վարկային գործիքակազմի /տեխնոլոգիաների/ ներդրման և առաջատար վարկային մասնագետների ուսուցման և վերապատրաստումների կազմակերպման միջոցով:

2012թ. մեկնարկեց նաև KfW-ի կողմից ֆինանսավորվող «Գյուղատնտեսության ոլորտի աջակցություն» ծրագիրը, որի հիմնական նպատակը ՀՀ առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսների տրամադրման միջոցով և տեխնիկական աջակցության ապահովմամբ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների, անհատ գյուղացիների վարկավորումն է:

2014թ. ընթացքում նոր վարկ է ստացվել ԱԶԲ-ի «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման» ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ ֆինանսական համակարգի միջոցով խթանել ձեռներեցության զարգացումը կանանց շրջանում՝ մեծացնելով ազգային արժույթով ֆինանսական միջոցների հասանելիությունը կանանց պատկանող ՓՄՁ-ների համար:

2015թ. ընթացքում նոր վարկ է ստացվել Եվրոպական ներդրումային բանկից, որն ամբողջությամբ ուղղվել է գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտներում ՓՄՁ-ների և միջին կապիտալիզացիա ունեցող կազմակերպությունների վարկային միջոցների պահանջարկի բավարարմանը՝ ՀՀ առևտրային բանկերի և րկային կազմակերպությունների միջոցով: Հետագայում ծրագրի հաջորդ փուլի շրջանակում (2017թ.) ներառվեց նաև արտահանման խթանումը, իսկ ծրագրի պահանջներին ավելացավ կլիմայական փոփոխությունների կառավարման տարրը, համաձայն որի ենթավարկառուներից պահանջվում էր ձեռնարկել որոշակի քայլեր շրջակա միջավայրի վրա ազդեցությունը մեղմելու ուղղությամբ: Ծրագրի երրորդ փուլը (2020թ., 2021թ.), ի հավելումն նախորդ երկու փուլերի պայմանների, ներառում է նաև արտադրության ոլորտի վարկավորումը: 2023թ. մեկնարկել է «Հայաստանի տնտեսական դիմակայունություն» վարկային ծրագիրը (4-րդ փուլ), որի հիմնական նպատակը ևս գյուղատնտեսության, արտադրության և զբոսաշրջության ոլորտի ՓՄՁ-ներին ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովումն է՝ կանաչ ներդրումների, կանանց ձեռներեցության խթանման, մարզային զարգացման, ինչպես նաև թվայնացմանն ուղղված նախագծերի ֆինանսավորման նպատակով:

2016թ. ընթացքում KfW-ից նոր վարկ է ստացվել «Էներգաարդյունավետություն փոքր և միջին ձեռնարկությունների համար» վարկային ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել և ընդլայնել էներգաարդյունավետ վարկերի առաջարկը Հայաստանի ֆինանսական կազմակերպություններում և միաժամանակ բավարարել միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների էներգաարդյունավետության ներդրումների ֆինանսավորման պահանջարկը: Ծրագրի նպատակն է նաև նպաստել հայկական ՓՄՁ-ների կողմից էներգետիկ պահանջարկի և ածխաթթու գազերի արտանետման նվազմանը, ինչպես նաև խթանել ձեռնարկությունների մրցունակությունը:

- ▶ *Վերականգնվող էներգիայի զարգացում.* KfW-ի կողմից ֆինանսավորվող այս ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել վերականգնվող էներգիայի օգտագործմանը՝ ընդլայնելով մասնավոր ձեռներեցների և ձեռնարկությունների համար վարկային միջոցների մատչելիությունը: Ծրագրի առաջին երկու փուլերի ֆինանսական միջոցներն ուղղվել են մասնավոր փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ) կառուցմանն ու վերազինմանը, մինչդեռ վերջին չորս փուլերը ֆիզիկական անձանց և մասնավոր ձեռնարկությունների սեփական կարիքների բավարարման նպատակով կառուցվող փոքր (մինչև 500 ԿՎտ), ինչպես նաև արտադրական նպատակով կառուցվող (լիցենզավորված) մեծ (մինչև 5 ՄՎտ) արևային ֆոտովոլտային կայանների ֆինանսավորմանը և այլ ուղղությունների (բիոգազաված, քամի և այլ) զարգացմանը:

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

12.2 Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով (շարունակություն)

- ▶ *Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում*. 2006թ. KfW-ի կողմից ֆինանսավորվող այս ծրագրի նպատակն է ընդլայնել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տնային տնտեսություններին անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման նպատակով տրամադրվող վարկավորումը՝ խթանելով հատկապես մարզերում վարկավորումը, ինչպես նաև էներգաարդյունավետ բնակարանների ձեռքբերումն ու վերանորոգումը: Այս ծրագրի շրջանակներում Բանկը վարկեր է տրամադրել իր դուստր կազմակերպությանը, որոնք բացառվել են որպես ներխուժային մնացորդներ:

Ծրագրերի շրջանակում խումբը, կիրառելով տեխնիկական և ֆինանսական չափանիշներ, որպես գործընկեր ընտրում է համապատասխան հայաստանյան բանկեր և վարկային կազմակերպություններ և վերջիններիս հետ ստորագրված պայմանագրերի համաձայն տեղաբաշխում է ներգրավված միջոցները: Գործընկեր ֆինանսական հաստատությունները որոշում են վերջնական շահառուներին՝ ստանձնելով տրամադրված վարկերի հետ կապված ռիսկերը:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղաբաշխված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքները ըստ ներկայացված ծրագրերի:

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|--|---------------------------------|---------------------------------|
| KfW-ի հետ համաձայնագրերի շրջանակներում | | |
| Մասնավոր փոքր և միջին ձեռնարկությունների աջակցում՝ ՄՓՄՁ | 70,797,454 | 62,958,374 |
| Վերականգնվող էներգիայի աջակցություն՝ ՎԷ | 41,351,040 | 42,435,908 |
| Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար՝ ԷԱ | 16,853,456 | 15,471,923 |
| Գյուղատնտեսության ոլորտի աջակցում՝ ԳՖ | 13,829,631 | 12,511,392 |
| ՀԲ-ի հետ համաձայնագրերի շրջանակներում | | |
| Մասնավոր փոքր և միջին ձեռներեցության համար ֆինանսական միջոցների հասանելիություն՝ ՓՄՁՖԱՀ | 6,724,967 | 7,221,781 |
| ԱԶԲ-ի հետ համաձայնագրերի շրջանակներում | | |
| Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցում | 5,825,853 | 5,435,329 |
| ԵՆԲ-ի հետ համաձայնագրերի շրջանակներում | | |
| Մասնավոր ոլորտի աջակցում | 71,856,441 | 65,945,850 |
| Ընդամենը վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում | 227,238,842 | 211,980,557 |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ KfW-ի, Համաշխարհային բանկի, ԵՆԲ-ի և ԱԶԲ-ի հետ պայմանագրերի շրջանակներում վարկեր են տրամադրվել տեղական 15 բանկերի (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 15 տեղական բանկերի) և 11 այլ ֆինանսական կազմակերպությունների (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10 այլ ֆինանսական կազմակերպությունների): Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 21-ում, այս վարկերը ներկայացնում են շուկայի առանձին հատված և, համապատասխանաբար, սկզբնական ճանաչման ժամանակ խումբը դրանք չի զեղչում:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորումը ֆինանսական կազմակերպություններին կատարվել է մինչև 10 տարի մարման ժամկետով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10 տարի): 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերն ապահովված են գրավով՝ հաճախորդներին տրամադրված վարկային պայմանագրերի շրջանակներում պահանջի իրավունքով՝ 202,468,449 հազար ՀՀ դրամ գումարով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 167,548,595 հազար ՀՀ դրամ):

Առևտրային բանկերում տեղաբաշխված կարճաժամկետ ավանդները ներառում են խմբի դուստր կազմակերպությունների կողմից առևտրային բանկերում կատարված ցպահանջ և կարճաժամկետ տեղաբաշխումները:

1,871,774 հազար ՀՀ դրամ գումարով այլ վարկերն ապահովված են անշարժ գույքով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,162,793 հազար ՀՀ դրամ) և 68,040 ՀՀ դրամ գումարով՝ շարժական գույքով և այլ ակտիվներով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 82,339 հազար ՀՀ դրամ):

Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին սեփական միջոցներից տրամադրված վարկերը հանդիսանում են ասոցիացված կազմակերպությունների տրված վարկեր՝ նվազեցված սկզբնական ճանաչումից կորուստների չափով, որոնք ապահովված են ասոցիացված կազմակերպությունների ակտիվներով:

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ (շարունակություն)

12.2 Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով (շարունակություն)

ԱՊԿ պահուստ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների և ներդրումների համար

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված տեղական արժույթով միջոցների և ներդրումների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում հետևյալն է.

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | 2023թ. | | 2022թ. | |
|--|--------------------|--------------------|--------------------|--------------------|
| | Փուլ 1 | Ընդամենը | Փուլ 1 | Ընդամենը |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով | | | | |
| Համախառն հաշվեկշռային արժեք հունվարի 1-ի դրությամբ | 728,731,460 | 728,731,460 | 910,347,073 | 910,347,073 |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 496,935,758 | 496,935,758 | 447,086,512 | 447,086,512 |
| Մարված ակտիվներ | (350,955,813) | (350,955,813) | (628,702,125) | (628,702,125) |
| Դուրս գրված ակտիվներ | (15,072,919) | (15,072,919) | - | - |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 859,638,486 | 859,638,486 | 728,731,460 | 728,731,460 |

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | 2023թ. | | 2022թ. | |
|--|------------------|------------------|------------------|------------------|
| | Փուլ 1 | Ընդամենը | Փուլ 1 | Ընդամենը |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով | | | | |
| ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ | 4,165,679 | 4,165,679 | 3,511,728 | 3,511,728 |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 968,646 | 968,646 | 2,341,292 | 2,341,292 |
| Մարված ակտիվներ | (353,439) | (353,439) | (734,286) | (734,286) |
| ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ | 14,303,959 | 14,303,959 | (953,055) | (953,055) |
| Դուրս գրված ակտիվներ | (15,072,919) | (15,072,919) | - | - |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4,011,926 | 4,011,926 | 4,165,679 | 4,165,679 |

2023թ. ընթացքում Խումբը դուրս է գրել 15,072,919 հազար ՀՀ դրամ վարկեր և ամորտիզացված արժեքով հաշվառվող ներդրումներ՝ համաձայն ՀՀ կառավարության N 2326 որոշման:

13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|---|-----------------------------|-----------------------------|
| Ակտիվներ | | |
| Պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքներ արտարժույթով | | |
| Արտերկրյա պարտատոմսեր | 759,879,163 | 673,333,487 |
| Արտերկրյա փողի շուկայի գործիքներ | - | 3,969,371 |
| Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ արտարժույթով | 759,879,163 | 677,302,858 |

13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ (շարունակություն)

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող արտերկրյա պարտատոմսերն իրենցից ներկայացնում են.

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>31 դեկտեմբերի 2023թ.</i> | <i>31 դեկտեմբերի 2022թ.</i> |
|----------------------|-----------------------------|-----------------------------|
| Պետական պարտատոմսեր | 638,513,719 | 545,500,450 |
| Այլ արժեթղթեր | 121,365,444 | 127,833,037 |
| Ընդամենը | 759,879,163 | 673,333,487 |

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող գնանշված արտերկրյա արժեթղթերն իրենցից ներկայացնում են ԱՄՆ գանձապետական մուրհակներ և եվրոպական երկրների կառավարությունների, արտերկրյա բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների կողմից թողարկված արժեթղթեր:

14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>31 դեկտեմբերի 2023թ.</i> | <i>31 դեկտեմբերի 2022թ.</i> |
|--|-----------------------------|-----------------------------|
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | | |
| Արտարժությաին սվոփ պայմանագրեր արտաքին շուկայում | 190,283 | 1,168,708 |
| Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 190,283 | 1,168,708 |

15. Ներդրումներ

15.1 Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>31 դեկտեմբերի 2023թ.</i> | <i>31 դեկտեմբերի 2022թ.</i> |
|--|-----------------------------|-----------------------------|
| Բաժնային ներդրումներ | | |
| Արտերկրյա արժեթղթեր | 2,581,114 | 2,254,480 |
| SWIFT | 3,736 | 3,736 |
| Ընդամենը բաժնային ներդրումներ | 2,584,850 | 2,258,216 |
| Պարտքային գործիքներ | | |
| Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով | 454,011 | - |
| ՀՀ Կառավարության եվրոպարտատոմսեր | 1,798,687 | 567,928 |
| Ընդամենը պարտքային գործիքներ | 2,252,698 | 567,928 |
| Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով | 4,837,548 | 2,826,144 |

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտերկրյա արժեթղթերի կազմում ներառված են բաժնային ներդրումներ՝ դասակարգված որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով, որոնք հանդիսանում են Խմբի դուստր կազմակերպություններից մեկի ներդրումը զարգացման հիմնադրամում, որի նախաձեռնողն ու կառավարողը KfW-ն է: Ջարգացման հիմնադրամը ստեղծվել է Հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանի, ներառյալ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումն ու բարեկեցությունը խթանելու համար՝ լրացուցիչ զարգացման ֆինանսավորման կայուն ապահովման միջոցով:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով պարտքային արժեթղթերը, դասակարգված որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ արտարժույթով, թողարկված են մեկ տեղական բանկի կողմից:

15. Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

15.1 Իրական արժեթղթի՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով (շարունակություն)

Իրական արժեթղթի՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արտարժույթով պարտքային գործիքների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում հետևյալն է՝

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | | 2022թ. | |
|--|------------------|------------------|----------------|----------------|
| | Փուլ 1 | Ընդամենը | Փուլ 1 | Ընդամենը |
| Իրական արժեթղթի՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով – ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր | | | | |
| Համախառն հաշվեկշռային արժեք հունվարի 1-ի դրությամբ | 567,928 | 567,928 | – | – |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 1,230,759 | 1,230,759 | 567,928 | 567,928 |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | <u>1,798,687</u> | <u>1,798,687</u> | <u>567,928</u> | <u>567,928</u> |

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | | 2022թ. | |
|--|---------------|---------------|--------------|--------------|
| | Փուլ 1 | Ընդամենը | Փուլ 1 | Ընդամենը |
| Իրական արժեթղթի՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով – ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր | | | | |
| ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ | 6,613 | 6,613 | – | – |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 14,606 | 14,606 | 6,613 | 6,613 |
| ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ | 324 | 324 | – | – |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | <u>21,543</u> | <u>21,543</u> | <u>6,613</u> | <u>6,613</u> |

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | | 2022թ. | |
|--|----------------|----------------|-----------|-----------|
| | Փուլ 1 | Ընդամենը | Փուլ 1 | Ընդամենը |
| Իրական արժեթղթի՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով – Կորպորատիվ պարտատոմսեր | | | | |
| Համախառն հաշվեկշռային արժեք հունվարի 1-ի դրությամբ | – | – | 787,898 | 787,898 |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 454,011 | 454,011 | – | – |
| Մարված ակտիվներ | – | – | (787,898) | (787,898) |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | <u>454,011</u> | <u>454,011</u> | <u>–</u> | <u>–</u> |

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | | 2022թ. | |
|--|--------------|--------------|----------|----------|
| | Փուլ 1 | Ընդամենը | Փուլ 1 | Ընդամենը |
| Իրական արժեթղթի՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով – Կորպորատիվ պարտատոմսեր | | | | |
| ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ | – | – | 3,709 | 3,709 |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 5,133 | 5,133 | – | – |
| Մարված ակտիվներ | – | – | (3,709) | (3,709) |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | <u>5,133</u> | <u>5,133</u> | <u>–</u> | <u>–</u> |

15. Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

15.2 Իրական արժեթղթի՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>31 դեկտեմբերի 2023թ.</i> | <i>31 դեկտեմբերի 2022թ.</i> |
|--|-----------------------------|-----------------------------|
| Պարտքային գործիքներ | | |
| ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր | 9,291,332 | 8,875,170 |
| ՀՀ Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ. 25) 2023թ. շահույթից Կառավարության կողմից թողարկված մուրհակի մարմանը հաշվանցման ձևով բաշխման ենթակա մասնաբաժին (Ծնթգ. 25) | 204,071,927 | 54,395,224 |
| | (41,634,671) | - |
| Ընդամենը պարտքային գործիքներ | 171,728,588 | 63,270,394 |

Ղեկավարությունը գտնում է, որ մուրհակի հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրա իրական արժեքին (Ծնթգ. 25):

Իրական արժեթղթի՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող տեղական արժույթով պարտքային գործիքների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում հետևյալն է՝

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>2023թ.</i> | | <i>2022թ.</i> | |
|---|------------------|------------------|------------------|------------------|
| | <i>Փուլ 1</i> | <i>Ընդամենը</i> | <i>Փուլ 1</i> | <i>Ընդամենը</i> |
| Իրական արժեթղթի՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով – ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր | | | | |
| Համախառն հաշվեկշռային արժեք հունվարի 1-ի դրությամբ | 8,875,170 | 8,875,170 | 9,680,244 | 9,680,244 |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 705,243 | 705,243 | - | - |
| Մարված ակտիվներ | (289,081) | (289,081) | (805,074) | (805,074) |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 9,291,332 | 9,291,332 | 8,875,170 | 8,875,170 |

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>2023թ.</i> | | <i>2022թ.</i> | |
|---|---------------|-----------------|---------------|-----------------|
| | <i>Փուլ 1</i> | <i>Ընդամենը</i> | <i>Փուլ 1</i> | <i>Ընդամենը</i> |
| Իրական արժեթղթի՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով – ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր | | | | |
| ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ | 40,413 | 40,413 | 46,776 | 46,776 |
| Մարված ակտիվներ | - | - | (1,394) | (1,394) |
| ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ | (6,445) | (6,445) | (4,969) | (4,969) |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 33,958 | 33,958 | 40,413 | 40,413 |

15.3 Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>31 դեկտեմբերի 2023թ.</i> | <i>31 դեկտեմբերի 2022թ.</i> |
|---|-----------------------------|-----------------------------|
| Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում | 34,533,590 | 33,420,114 |
| Ընդամենը ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում | 34,533,590 | 33,420,114 |

2022թ. հունվարին խմբի դուստր կազմակերպությունը կատարել է 32,000,582 հազար ՀՀ դրամ ներդրում ՀՀ առևտրային բանկերից մեկի կանոնադրական կապիտալի 25%-ում: Արդյունքում խումբը ձեռք է բերել նշանակալի ազդեցություն ներդրման օբյեկտի նկատմամբ:

15. Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

15.3 Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ (շարունակություն)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է այդ ասոցիացված կազմակերպությունների հաշվեկշռային արժեքի և շահույթում և այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում մասնաբաժնի ընդհանուր վերլուծությունը:

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|-------------------|-------------------|
| Հաշվեկշռային արժեքը հունվարի 1-ի դրությամբ | 33,420,114 | 950,369 |
| Ներդրում ասոցիացված կազմակերպությունում | - | 32,000,582 |
| Մասնաբաժինը | | |
| - Շահույթում/(վնասում) | 390,437 | (356,694) |
| - Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում | 723,039 | 825,857 |
| Հաշվեկշռային արժեքը դեկտեմբերի 31 դրությամբ | <u>34,533,590</u> | <u>33,420,114</u> |

15.4 Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ արտարժույթով

| Հազար ՀՀ դրամ | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|--|----------------------|----------------------|
| ՀՀ կառավարության եվրոպարտատոմներ | 3,113,313 | 1,053,407 |
| Կորպորատիվ պարտատոմներ արտարժույթով | 407,188 | 395,939 |
| ԱՊԿ պահուստ | (42,364) | (16,776) |
| Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող արժեթղթեր | <u>3,478,137</u> | <u>1,432,570</u> |

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դասակարգված որպես ամորտիզացված արժեքով չափվող արտարժույթով արժեթղթերն իրենցից ներկայացնում են ՀՀ կառավարության կողմից թողարկված պետական եվրոպատատոմներ:

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով պարտքային արժեթղթերը, դասակարգված որպես ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ արտարժույթով, թողարկված են երկու տեղական բանկի կողմից:

Ամորտիզացված արժեքով չափվող արտարժույթով ներդրումային գործիքների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում հետևյալն է՝

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | | 2022թ. | |
|---|------------------|------------------|------------------|------------------|
| | Փուլ 1 | Ընդամենը | Փուլ 1 | Ընդամենը |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ արտարժույթով – ՀՀ կառավարության եվրոպարտատոմներ | | | | |
| Համախառն հաշվեկշռային արժեք հունվարի 1-ի դրությամբ | 1,053,407 | 1,053,407 | - | - |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 2,059,906 | 2,059,906 | 1,053,407 | 1,053,407 |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | <u>3,113,313</u> | <u>3,113,313</u> | <u>1,053,407</u> | <u>1,053,407</u> |

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | | 2022թ. | |
|---|---------------|---------------|---------------|---------------|
| | Փուլ 1 | Ընդամենը | Փուլ 1 | Ընդամենը |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ արտարժույթով – ՀՀ կառավարության եվրոպարտատոմներ | | | | |
| ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ | 12,545 | 12,545 | - | - |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 24,598 | 24,598 | 12,545 | 12,545 |
| ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ | 496 | 496 | - | - |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | <u>37,639</u> | <u>37,639</u> | <u>12,545</u> | <u>12,545</u> |

15. Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

15.4 Ամորտիզացված արժեթղծ չափվող ներդրումներ արտարժույթով (շարունակություն)

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>2023թ.</i> | | <i>2022թ.</i> | |
|--|----------------|-----------------|----------------|-----------------|
| | <i>Փուլ 1</i> | <i>Ընդամենը</i> | <i>Փուլ 1</i> | <i>Ընդամենը</i> |
| Ամորտիզացված արժեթղծ չափվող ներդրումներ արտարժույթով – Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով | | | | |
| Համախառն հաշվեկշռային արժեք հունվարի 1-ի դրությամբ | 395,939 | 395,939 | - | - |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 11,249 | 11,249 | 395,939 | 395,939 |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 407,188 | 407,188 | 395,939 | 395,939 |

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>2023թ.</i> | | <i>2022թ.</i> | |
|---|---------------|-----------------|---------------|-----------------|
| | <i>Փուլ 1</i> | <i>Ընդամենը</i> | <i>Փուլ 1</i> | <i>Ընդամենը</i> |
| Ամորտիզացված արժեթղծ չափվող ներդրումներ արտարժույթով – Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ | 4,231 | 4,231 | - | - |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | - | - | 4,231 | 4,231 |
| ԱՊԿ հաշվարկման մոդելների կամ օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ | 495 | 495 | | |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4,726 | 4,726 | 4,231 | 4,231 |

15.5 Ամորտիզացված արժեթղծ չափվող ներդրումներ տեղական արժեթղծ

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>2023թ.</i> | | <i>2022թ.</i> | |
|---|-----------------------------|-------------------|-----------------------------|----------|
| | <i>31 դեկտեմբերի 2023թ.</i> | | <i>31 դեկտեմբերի 2022թ.</i> | |
| Պարտքային գործիքներ | | | | |
| ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր | | 16,391,747 | | - |
| ԱՊԿ պահուստ | | (63,571) | | - |
| Ընդամենը պարտքային գործիքներ | | 16,328,176 | | - |

2023թ. դեկտեմբերի 31-ի դասակարգված որպես ամորտիզացված արժեթղծ չափվող տեղական արժույթով արժեթղթերն իրենցից ներկայացնում են ՀՀ Կառավարության կողմից թողարկված պետական պարտատոմսեր:

Ամորտիզացված արժեթղծ չափվող տեղական արժույթով ներդրումային գործիքների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում դրությամբ հետևյալն է՝

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>2023թ.</i> | | <i>2022թ.</i> | |
|---|-------------------|-------------------|---------------|-----------------|
| | <i>Փուլ 1</i> | <i>Ընդամենը</i> | <i>Փուլ 1</i> | <i>Ընդամենը</i> |
| Ամորտիզացված արժեթղծ չափվող ներդրումներ տեղական արժույթով – ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր | | | | |
| Համախառն հաշվեկշռային արժեք հունվարի 1-ի դրությամբ | - | - | - | - |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 16,391,747 | 16,391,747 | - | - |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 16,391,747 | 16,391,747 | - | - |

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>2023թ.</i> | | <i>2022թ.</i> | |
|--|---------------|-----------------|---------------|-----------------|
| | <i>Փուլ 1</i> | <i>Ընդամենը</i> | <i>Փուլ 1</i> | <i>Ընդամենը</i> |
| Ամորտիզացված արժեթղծ չափվող ներդրումներ արտարժույթով – ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր | | | | |
| ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ | - | - | - | - |
| Ստեղծված կամ ձեռքբերված նոր ակտիվներ | 63,571 | 63,571 | - | - |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 63,571 | 63,571 | - | - |

16. **Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ**

ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ

| <i>Հազար ՀՀ դրամ</i> | <i>31 դեկտեմբերի 2023թ.</i> | <i>31 դեկտեմբերի 2022թ.</i> |
|--|---------------------------------|---------------------------------|
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | | |
| Բաժնեմասը ԱՄՀ-ում (անդամակցություն) | 69,949,992 | 67,462,864 |
| ԱՄՀ-ում ՀՓԻ միջոցներ | 153,344 | 2,391,159 |
| Հաշվեգրված տոկոսներ | 47,677 | 30,491 |
| Ընդամենը ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 70,151,013 | 69,884,514 |

